



« Ն Ո Ր Ա Վ Ա Ն Ք »

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

*Արմեն Ղալեյան*

**ՌԱԶՄԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝  
ՈՐՊԵՍ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ  
ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ (ՄԱՐՏԱԿԱՆ)  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՍԱԿ**

Երևան  
2018

ՀՏԴ 355:004  
ԳՄԴ 68+32.81  
Ղ 230

*Գիրքը հրատարակվում է  
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի  
որոշման հիման վրա*

Ղալէյան Արմեն

Ղ 230

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝  
ՈՐՊԵՍ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ  
(ՄԱՐՏԱԿԱՆ) ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՄԱԿ/ Ա. Ղալէյան.  
- Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2018. - 144 էջ:

Աշխատությունը ռազմամասնագիտական համառոտ (առավել կարևոր գաղափարների և հասկացությունների) ուսումնասիրությունների և նորարարական մտեցումների համախումբ է, ռազմական ոլորտում տեղեկատվական պայքարի և դրա՝ որպես զինված ուժերի համակողմանի (մարտական) ապահովման տեսակի դիտարկում: Հասցեագրված է ռազմատուսմանական հաստատությունների ունկնդիրներին և դասախոսական անձնակազմին, զինված ուժերի գորատեսակների սպայական կազմի այն հատվածներին, որոնք անմիջական գործունեություն են ծավալում ռազմատեղեկատվական ոլորտում: Կարծում ենք, ռազմական տեղեկատվական ապահովման սկզբունքների և ձևերի իմացությունը կարևոր է նաև ողջ հայ հասարակության համար:

ՀՏԴ 355:004  
ԳՄԴ 68+32.81

ISBN 978-9939-825-41-0

© «Նորավանք» ԳԿՀ, 2018

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .....	5
1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ (ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ) ԱՇԽԱՐՀԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԹԱՔՆՎԱԾ ՀՆԱՐՔՆԵՐԸ .....	7
2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԶՈՐ ԶԵՆՔԻ ԹԵՐԸՆԿԱԼՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ .....	15
2.1. Տեղեկատվական ապահովումը ՁՈՒ համակողմանի (մարտական) ապահովման համակարգում .....	23
2.2. Տեղեկատվական ապահովման տեսակները և նպատակները .....	25
2.3. Տեղեկատվական աշխատանքի սկզբունքները և ուղղությունները .....	27
2.4. Տեղեկատվական ապահովման մարմինների կառուցվածքը և հիմնական գործառույթները .....	29
3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ (ՀԱԿԱՊԱՅՔԱՐԻ) ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ (ՄԱՐՏԱԿԱՆ) ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ .....	32
3.1. Հոգեբանական օպերացիաներ .....	33
3.2. Տեղեկատվա-տեխնիկական օպերացիաներ .....	44
3.3. Տեղեկատվական ներազդման օպերացիաներ .....	46
3.4. Քողարկման միջոցառումներ .....	57
3.5. Բարոյահոգեբանական ապահովում .....	70
3.6. Ռադիոէլեկտրոնային պայքար .....	80
3.7. Կապի անվտանգության և տեղեկատվության պաշտպանություն .....	82

3.8. <i>Ձորքերի (ուժերի) մարտական և հատուկ գործողություններ</i> .....	85
3.9. <i>Կիրենպատերազմներ</i> .....	89
4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ .....	109
4.1. <i>Տեղեկատվական անվտանգության (կիրենպատանգության) խնդիրները</i> .....	111
4.2. <i>Չանգվածային կապի խափանումներ</i> .....	114
4.3. <i>Վտանգներին դիմակայելու հնարավոր քայլերը</i> .....	116
5. ԿԻՆՈՆ ԵՎ ՎԻԴԵՈԽԱՂԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ .....	118
6. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ՄԵԴԻԱ-ՀՆԱՐՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԶՈՒ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԱԶԴԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ .....	124
Եզրակացություն .....	137
Գրականություն .....	140

## Ն Ա Խ Ա Ք Ա Ն

Երբեք այնքան մեծ ուշադրություն չի հատկացվել տեղեկատվական պայքարի գործողություններին (ոլորտին), առանձնապես՝ ռազմական ոլորտում, որքան վերջին քսան տարիներին: Տեղեկատվական ապահովումը կարևոր դեր և նշանակություն ունի հիմնական ապահովումների շարքում՝ ռազմական (մարտական) գործողությունների ժամանակ: Տեղեկատվական պայքարի ստորաբաժանումներն են, որ ավելի օպերատիվ, ստույգ և ժամանակին (բացի հետախուզական-տեղեկատվական ստորաբաժանումներից) կկարողանան հավաքել, ճշտել, վերլուծել և տրամադրել տեղեկատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ զգուշացնել վերահաս վտանգի մասին:

Արդի աշխարհում գերակայում է տեղեկատվական հարթությունն (*տարածք*) իր հանրույթով, անսահման զարգացող հնարավորություններով և տվյալների ահռելի բազայով, ժամանակակից տեղեկատվա-տեխնիկական և տեղեկատվա-հոգեբանական միջոցներով: Ընկալելով և վերլուծելով առկա բազմաթիվ բարդությունները և իրարամերժ ու խաբուսիկ վտանգները, ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերները՝ հանգում ենք մեզ հուզող կարևոր հարցին. մեր աշխարհընկալումը (մտածելակերպը) և տեղեկատվական օպերացիաների ստորաբաժանումները չափազանց սահմանափակ չե՞ն արդյոք տեղեկատվական ոլորտին վերաբերող խնդիրները լուծելու համար:

Գաղտնիք չէ, որ համացանցում ակտիվ զարգանում են «կիրեռքանակները» կամ «անհատները», որոնք մասնակցում են գաղտնի տեղեկատվական օպերացիաներին, այս կամ այն կոնֆլիկտի հրահրմանը, կեղծարարություններին, քայքայիչ գործողություններին և այլն:

Վերջին ժամանակներս հայրենական լրատվամիջոցները փորձում են քննադատել զինված ուժերում տեղեկատվական գործողություններով «զբաղվողներին», թե, իբր, նրանք չեն կատարում իրենց անմիջական պարտականությունները: Մի շարք «փորձագետներ» էլ պնդում են, որ այդ ստորաբաժանումները տառապում են անտեղյակությամբ և գործիմաց չեն:

Տեղեկատվական գործողությունների իրականացման առանձնահատուկ և կարևոր խնդիրներից է այն, որ ոլորտի կառույցները չեն զբաղվում իրենց անմիջական պարտականություններով, այլ, այսպես ասած, «ուղղություն են ցույց տալիս մյուսներին», թե ինչպես իրականացնել «գրագետ տեղեկատվական պայքար»:

Աշխատության գլխավոր նպատակն է՝ լուսաբանել *ռազմական տեղեկատվական գործողությունների* նպատակային, արդյունավետ, դինամիկ, պրոֆեսիոնալ իրականացման հարցերը, վերլուծել ոլորտում առկա խնդիրների և ներդաշնակ գործողությունների իրականացման բարդությունը: Կարծում ենք, աշխատությունը կնպաստի ռազմական (և ոչ միայն) տեղեկատվական գործողություններով զբաղվողներին, նաև այն անձանց, ովքեր կցանկանան ներդրում ունենալ տեղեկատվական և կիրեռվորսներում՝ հայրենիքի առջև դրված խնդիրների իրականացման համար:

# 1. ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ (ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ) ԱՇԽԱՐՀԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԹԱՔՆՎԱԾ ՀՆԱՐՔՆԵՐԸ<sup>1</sup>

Մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ վիրտուալ իրականությունն է «թելադրում» օբյեկտիվ իրականության ընթացքը: Կյանքն, իհարկե, իրական է, սակայն նրա մի զգալի մասը մենք ապրում ենք վիրտուալ (տեղեկատվական արհեստածին) աշխարհում<sup>2</sup>: Առավել ուժգին դեպի իրեն է ձգում վիրտուալը, քան իրականը, քանի որ այն ստեղծված է մեր ուղեղի չափորոշիչներով, որպեսզի բավարարի նրա բոլոր ցանկությունները<sup>3</sup>: Մարդն իր բնույթով սոցիալական էակ է, և նրա կարևոր պահանջմունքներից են ընդունված լինելու, ինքնարտահայտման, ինքնադրսևորման և ինքնահաստատման պահանջմունքները: Բացի այդ, մարդու գերնպատակը երջանկության ձգտումն է, և նա մշտապես պոզիտիվ հույզերի, դրայվի, ապագայի նկատմամբ դրական տեսլականի պահանջ ունի: Ուստի, համացանցային իրողությունը կառուցվում է՝ հաշվի առնելով մարդու նմանա-

---

<sup>1</sup> Ա. Ղալեչյան, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» ամսագիր, թիվ 7 (96), 2018թ.:

<sup>2</sup> Սամվել Մանուկյան, Բնտերնետը և սոցիալական ցանցերը Հայաստանում 2012-2016թթ., «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» ամսագիր, թիվ 2 (91), 2018թ.:

<sup>3</sup> Օրինակ՝ մարդկանց 43%-ը սմարթֆոններին է նայում արթնանալուց հինգ րոպե հետո: Օգտատերերի 10%-ն օրական 5427 անգամ դիմում է սմարթֆոնների «օգնությանը»: Միջին օգտատերն օրական 2617 անգամ փորձում է համացանցի օգնությամբ տեսնել ինչ-որ նոր բան:

տիպ առանձնահատկությունները, օրինակ՝ ֆեյսբուքյան լայքերը բավարարում են գնահատված, ընդունված լինելու պահանջը, սեփական անձի կարևորության զգացումը՝ տալով գերառատ դրական հույզեր, ինչն իրական կյանքում նման քանակությամբ և ուժգնությամբ մարդը չի կարող ստանալ: Օգտատերերի կարծիքները, նկարները և ուղիղ եթերները նպաստում են ինքնարտահայտման պահանջմունքի, իսկ համընդհանուր քննարկումները, սեփական կարծիքը տարածելը, համախոհներ ձեռք բերելը՝ ինքնահաստատման պահանջմունքի բավարարմանը: Կարևոր է նշել նաև, որ համացանցային տեղեկատվության հուզական սրությունը, օպերատիվությունն ու ակտուալությունն ապահովում են դրայվային զգացումներ, իսկ համացանցային հավելվածները սիրած գույնի, կենդանու նմանության կամ արտաքին տեսքի փոփոխման և այլնի վերաբերյալ՝ ստեղծում են երջանկության կեղծ պատրանք<sup>4</sup>: Ակնհայտ է, որ վիրտուալը միշտ ավելի ուժեղ է լինելու, քան իրականը, քանի որ վիրտուալի ստեղծումը և սփռումը բավական էժան են: Այն միշտ կարող է հաջողությամբ լուծել նույն խնդիրները, ինչ իրականը: Այդ վիրտուալ աշխարհը կառուցված է այնպես, որպեսզի ստիպի մեզ մոռանալ առկա հոգսերը, խնդիրներն ու մտորումները: Այսօր իրական աշխարհում առկա է այն ամենը, ինչ կամեր գլխում, հետևաբար՝ վիրտուալ աշխարհում մարդկանց ցանկալի ծրագրավորումը թաքնված է ժամանցի շրջանակներում: Ժամանցի շրջանակներում կառուցվում է խայտաբղետ (գունագեղ) վիրտուալ աշխարհ, որը, բնականաբար, մեզ «հա-

---

<sup>4</sup> Մ.Անտոնյան, Ֆեյսբուք. կախվածությունն ու հետևանքները, «Առավոտ» օրաթերթ, 28.03.2018:



վաքազրելով», կանխագծում է ապագան<sup>5</sup>: Այսինքն՝ վիրտուալ իրողության մեջ ձևավորված մտապատկերները, համացանցային հիշողությունները, դիրքորոշումները, ֆեյք արժեքները մարդը տեղափոխում է իրական կյանք և ձգտում, որ դրանք դառնան իրողություն: *Փաստացի, սեփական երկրի և ժողովրդի համար կազմակերպվում են նման գրավիչ, դրայվային վիրտուալ «ճշմարտություններ», և այդ ամենը փաթեթավորվում է շատ գեղեցիկ՝ քաղաքականություն բառով: Անշուշտ, այդտեղ երիտասարդությունն առանձնահատուկ (կարևոր) թիրախային լսարան է, որն ի վիճակի է հասարակություն ներմուծել անհրաժեշտ գաղափարներ՝ հաշվի առնելով, որ երիտասարդներն ավելի հուզական են, հեշտ են համոզվում և չունեն անցյալի գաղափարներից կոշտ կախվածություն, նորը հնի հետ համեմատելու հնարավորություն: Ամենակարևորն այն է, որ երիտասարդները չունեն այն վախի մթնոլորտը, բացասական փորձը, որը հավաքված է ավագ սերնդի մեջ, և նրանք պատրաստ են մաքառումների և հաղթանակների: Հնարավոր է, որ հենց այստեղ էլ թաքնված է ժամանակակից աշխարհի ղեկավարման հիմնաքարը:*

*Այսօր ժամանակակից քաղաքականությունն աշխատում է մարդկային երկու հիմնական զգացմունքների վրա՝ սիրո<sup>6</sup> և ատելությամ<sup>7</sup>, դրանց հենվելով հավասարաչափ մակարդակով:*

<sup>5</sup> Օրինակ՝ սիթքոմները (Ֆուլ հաուս, Չենջ և այլն. ուշադրություն դարձրեք դրանց անվանումներին), «ինտելեկտուալ» հեռուստա- և համացանցային խաղերը՝ «աջարարեթ», «բլոտ» կամ «օդից փող» և այլն:

<sup>6</sup> Թավշյա հեղափոխության հանրահավաքներից հետո տարածքի մաքրությամբ զբաղվելը, միայնաց մասին հոգ տանելը և այլն:

<sup>7</sup> Հայաստանյան «հնչեղ» ձերբակալությունների (ԱՄՍ կամ ոստիկանության) տեղեկատվության վերաբերյալ համացանցում մարդկանց (մեծ մասի) հրճվանքն ու ոչ աղեկվատ մեկնաբանությունները:

Այդ քաղաքականությունն իր ստեղծած վիրտուալ աշխարհով պետք է լուծի ոչ միայն պատերազմի կամ խաղաղության խնդիրները, ոչ միայն սովորեցնի ճիշտ պահվածք<sup>8</sup>, այլ նաև փոխհատուցի կյանքում հանդիպող ամեն բացասականն այն դրականով, որը կառուցվում է պետության և ամբողջ մարդկության համար: Արդյունքում՝ ամբողջ աշխարհում մեղիան փոխարինել է իրականությանը: Օրինակ՝ կինոն ստեղծում է սոցիալական հիշողություն, որը հետագայում մեր գլուխներում տպավորվում է որպես իրականություն: Չնայած ողջ աշխարհում կինոարտադրության ոլորտի չափազանց պրիմիտիվությանը<sup>9</sup>՝ ԱՄՆ-ն այսօր իր «արտադրանքի» գրավչությամբ, հատկապես ողջ աշխարհի երիտասարդության շրջանում որպես իրեն հավասարը չունեցող, տարածում է «իրական» երազանքներ և օգտվում դրա սիներգետիկ արդյունքից: Իզուր չէ, որ Հոլիվուդն անվանում են ողջ աշխարհի երազանքների նախարարություն: Ջ.Բժեզինսկու կարծիքով, ԱՄՆ կինոարտադրությունը (ռազմական, տնտեսական, գիտական և այլ հզորությունների հետ մեկտեղ), ի տարբերություն մյուս երկրների, Միացյալ Նահանգների համար ապահովում է հստակ տեղեկատվական և քաղաքական ներազդեցություն, որի հետ աշխարհի ոչ մի պետություն չի կարող համեմատվել<sup>10</sup>: Հենց երազանքը (պատրանքը), այլ ոչ թե իրականությունն է մարդկանց դարձնում երջանիկ:

<sup>8</sup> Բրիտանացիներն իրենց կողմից գաղութացված երկրներին արհեստականորեն «պարտադրում» էին իրենց պահելաձևը (հագուստի կրման և սնվելու կուլտուրան և այլն), որը մինչ այդ տեղացի բնակչությանը հարիր չէր: Ընդհանրապես, Միացյալ Թագավորությունը բավական երկար ժամանակ այլ երկրների համար «օրինակելի» պետություն էր հանդիսանում:

<sup>9</sup> Հնդկական, թուրքական, բրազիլական, ռուսական հեռուստասերիալները:

<sup>10</sup> Օրինակ՝ ԱՄՆ ռազմական հզորությանը և գերակայությանը վերաբերող այնպիսի ֆիլմեր, ինչպիսիք են «Ռեմբոն», «Տերմինատորը», «Կարմիր տապը» և այլն:

Վիրտուալը ակտիվ աշխատում է մեր պատրանքների հետ: Մի կողմից՝ ստեղծարարությունը և ինովացիաները, մյուս կողմից՝ անշուշտ, «անարյուն» հեղափոխություններն են հանդիսանում հենց պատրանքների աշխատանքի հետևանք: Ամեն մարդ սեփական իրականության իրավունք ունի, դա պետք է հանդիսանա անհատի կարևորագույն իրավունքը, որն այս կամ այն կերպ խախտվում է բոլոր պետությունների կողմից: Մասնավորապես՝ միգրացիոն մարդկանց կարելի է աշխատավարձ քիչ վճարել, բայց պետություններն իրավունք չունեն հաճախակի «խաբել», թե նրանք ամենաապահովված մարդկանցից են այդ երկրներում (և աշխատավարձերը շուտով կրկնակի բարձրացվելու են): Մարդիկ ուղղակի մի կողմ են նետում և անտեսում այն տեղեկատվությունը, որը հակասում է իրենց պատկերացումներին և, ընդհակառակը՝ առավել ինտենսիվ կենտրոնանում և յուրացնում են այն տեղեկությունը, որը հաստատում է սեփական սպասումները: Մարդիկ սպասում են իրենց գործողությունների և պատկերացումների ճշմարտացիության հաստատումներին: Դա է պատճառը, որ լայն զանգվածների կարծիքը մեզ համար դարձել է ավելի դոմինանտ, քան գիտելիքի և սեփական վերլուծության վրա հիմնված փաստը: Կարծիքը միշտ ավելի մոտ է անձնական և զանգվածային գիտակցությանը, քան փաստը: Փաստը կարող է զրգռել իր անհամապատասխանությանը, սակայն կարծիքն արտահայտում է այն ամենը, ինչը տվյալ պահին գիտակցությունը համարում է ճիշտ և հաճելի: Կարծիքի դերի բարձրացման մեկ այլ պատճառ կարող է հանդիսանալ այն, որ մենք այսօր ունենք բավական բևեռացված հասարակություն, որտեղ ամեն անհատ իր կարծիքը համարում է ճիշտ և չի ընդունում, որ մեկ ուրիշի կարծիքը կարող է ճիշտ լի-

նել<sup>11</sup>: Այսօր տարօրինակ ձևով չենք ուզում համաձայնել ուրիշների կարծիքների հետ՝ պնդելով միայն մեր ճշմարտացիությունը: Մենք ունակ չենք բանավիճելու, միայն կարող ենք միմյանց մեղադրել կամ գովաբանել: Դա հանգել է նրան, որ մեր շրջապատից փաստացի անհետացել են հասարակության համար շատ կարևոր ինտելեկտուալ հեղինակությունները (որոնց տեղը, մեր կարծիքով, լրացրել են «փորձագիտական մեկնաբանություններով» հաճախ փայլող լրագրողները կամ այդ ոլորտին չվերաբերող մարդիկ): Որպես հետևանք, այսօր հասարակությունն ընկել է սոցմեդիայի այնպիսի ազդեցության տակ, ինչպիսին ֆեյսբուքն է, որը մեր հույզերը հափշտակել և փոխարինել է սեփական լայքերի հավաքածուով: Ներկայիս աշխարհը դարձել է ավելի բարդ, քան անցյալի աշխարհը: Այստեղից էլ՝ լայքերը, ֆեյքերը և իրական աշխարհից բազմազան այլ շեղումներ:

Ոչ վաղ անցյալում պետությունն ու «նրա հավատարիմ» պետական ծառայողները և լրագրողներն ունեցել են համապատասխան իրավասություն, որ սպառողներին տրամադրեն իրենց շահավետ և սահմանված տեղեկատվություն: Ներկայում այդ իրավասությունն այլևս չկա: Հիմա ցանկացած անհատ, լրագրող, մարդկանց խումբ կարող են և՛ ստել, և՛ տրամադրել ճշմարտություն: Փոփոխվել է տեղեկատվության տրման և սպառման կարգը, փոփոխվել է ամեն ինչ: Սոցիալական մեդիայի տեղեկատվական հոսքերը դարձել են առավել հակիրճ ու համառոտ և ավելի շատ համապատասխանում են յուրաքան-

---

<sup>11</sup> Վերջերս համացանցում, մասնավորապես՝ Facebook-ում ծավալված անհանդուրժողականության (հնչել ձեռքակալությունների, նորանշանակ պաշտոնյաների վերաբերյալ քննարկումները) մթնոլորտը, որտեղ մի խումբ «ակտիվիստներ» պնդում էին տեսակետներ՝ դեպքերի վերաբերյալ իրենց մեկնաբանություններով:

յուրի անհատական պահանջմունքին: Անցյալի «ինդուստրիալ» հոսքերն<sup>12</sup> իրենց օգտակարությունը պահպանում են մեծ դժվարությամբ, վերջինիս պատճառներից է, օրինակ, շատերի կողմից ակտիվ կիրառվող «փնթի copy, paste»-ը: Մենք ցանկանում ենք ապրել մեր սեփական ենթադրություններում, ինչն առավել հաճելի է մեզ: Մեզ սկսել են քիչ հետաքրքրել այլոց մտքերը, մասնավորապես, եթե դրանք տարբերվում են մերինից:

Ժամանակակից հասարակարգը բնութագրվում է մի քանի հիմնարար հատկություններով, որոնք չեն եղել անցյալում: Դրանցից է, օրինակ, համացանցային սոցմեդիայի մեծաքանակ մասնակիցների առկայությունը, որում կան տարբեր ոլորտների և մասնագիտությունների տեր մարդիկ, մասնավորապես՝ ուսանողներ, բլոգերներ, գործարարներ, գիտնականներ, պետական ծառայողներ, այդ թվում բանակը՝ իր ամենատարբեր ժամկետային և պայմանագրային զինծառայողներով, սպայակազմով, նրանց ընտանիքների անդամներով: Բանակի հիմքը կազմող մարդկային ռեսուրսները գտնվում են այդ հստակ քաղաքական ներազդեցության տակ, տեղեկատվական հոսքերի հորձանուտում և անհամեմատ ավելի խոցելի են: Քանի որ երկրի անվտանգության ապահովման հարցերի համար առաջին պատասխանատուն բանակն է՝ իր մարդկային ռեսուրսներով, հետևաբար՝ սոցմեդիայի մեծաքանակ մասնակիցների շփումների բարձր հաճախականությունը, միջանձնային շփումները, մտքերի բազմաքանակ փոխանակումները և դրանց օպերատիվությունը, համացանցի և մեդիայի օգնությամբ այդ ոլոր-

<sup>12</sup> Օրինակ՝ մեզ բոլորիս հայտնի, իրականությունից կտրված և իրենց ժամանակից հետ մնացած լրատվությամբ հայրենական ԶԼՄ-ն, այլ երկրներից «պատճենված» հեռուստահաղորդումները և այլն:

տին վերաբերող ցանկացած տեղեկույթի և տեղեկատվության բազմաթիվ շահարկումները ոչ միշտ, բայց ժամանակ առ ժամանակ բերում են ոչ ցանկալի, հուսախաբեցնող, քառսային, ոչ աղեկվատ վիճակների:

Վաղվա աշխարհն իր ղեկավարման թաքնված մոդելներով արդեն կանգնած է բոլորիս շեմին, իսկ որոշ երկրներում այն արդեն իրականություն է: Ջարգացող երկրներում վիրտուալ (տեղեկատվական) հնարքները նման փոփոխությունները (գիտատեխնիկական, սոցիալ-հասարակական և այլն) կարող են արագացնել, իսկ անտեսման դեպքում՝ հետաձգել: Այդ ոլորտում առաջատար երկիրն անլուրջ կվերաբերվի հետամնաց երկրին, քանի որ այն արդեն այլ մակարդակի աշխարհում է և նրան այդքան էլ չեն հետաքրքրում հին աշխարհի առանձին կտորտանքները: Որպես հետևանք, մենք բոլորս դառնում ենք առաջատար երկրների կողմից իրականացվող տեղեկատվական մանիպուլյացիաների և փորձարկումների օբյեկտ՝ կառավարվելով նրանց իսկ կողմից կիրառվող ժամանակակից (տեղեկատվական) աշխարհի ղեկավարման թաքնված հնարքներով:

## 2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԶՈՐ ԶԵՆՔԻ ԹԵՐԸՆԿԱԼՍԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ<sup>13</sup>

Մարդիկ շրջապատող աշխարհը սկսել են ընկալել ոչ միայն համաձայն իրենց կրթական ցենզի, այլև ավելի հաճախ՝ ինչպես դա նրանց ներկայացնում է «արհեստածին» տեղեկատվական միջավայրը: Աշխարհն այլևս չի դեկավարվում անցյալի «մնա-յուն» կանոններով՝ ենթարկվելով շարունակական սկզբունքա-յին փոփոխությունների: Երբ այդ աշխարհում առկա դեկավար-ման համակարգերն սկսում են ուշացումով արձագանքել նոր տիպի խնդիրների լուծմանը և աշխարհն այլևս ի վիճակի չէ ապահովել անվտանգության «բավարար» մակարդակը, ապա այն իր «արհեստածին» տեղեկատվական միջավայրի միջոցով սկսում է «վաճառել» սպառնալիքներ, որոնցից հետագայում փորձում է մեզ հերոսաբար «պաշտպանել»:

Տեղեկույթը վերածվում է առաջին անհրաժեշտության ապ-րանքի, և դա է պատճառը, որ բոլոր համաշխարհային նորու-թյունները կառուցված են գայրույթի և վախերի (հավանական պատերազմների վերսկսման) վրա:

Այդ պատճառով էլ առաջին պլան է մղվում այդ խնդիրնե-րի լուծման այսպես կոչված «արտակարգ գործիքակազմը», որն, ըստ էության, բավական կոշտ է և ագրեսիվ:

---

<sup>13</sup> Ա.Ղալեչյան, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» ամսագիր, թիվ 2 (91), 2018թ.:

Այսօր փոխակերպվում է նաև այդ «արտակարգ գործիքակազմը»՝ ներկայանալով ոչ թե ֆիզիկական, այլ տեղեկատվական տիրույթում: Անցյալում հասարակություններն իրենց գաղափարները հիմնականում զարգացրել են ռացիոնալ մոտեցումներով, որոնց հիմքն են հանդիսացել, օրինակ՝ գիտությունը և մարդկության էվոլյուցիան: Դրան հակառակ՝ ժամանակակից հասարակությունն իր ներկան կառուցում է հույզերով և զվարճանքներով (օրինակ՝ վեպերին փոխարինող հեռուստասերիալներով<sup>14</sup>) և դրանց տալով նախապատվություն՝ նպաստում է կրիտիկական մտածողության կորստին: Տեղեկատվական պատերազմն իր մոտեցումների մեջ ունի երկու «հենասյունների» վրա հիմնված սկզբունքային տարբեր՝ տեղեկատվատեխնիկական<sup>15</sup> և տեղեկատվահոգեբանական<sup>16</sup> (տեղեկատվահումանիտար) մոդելներ: Առաջինի գործիքակազմը կիրառվածություններն են, իսկ երկրորդինը՝ ներազդմանն ուղղված օպերացիաները: Երկու մոդելների հիմնական նպատակը մարդկանց ղեկավարումն է, բայց տարբեր ձևերով ու մեթոդներով: Այսինքն՝ վերը նշվածից հետևում է, որ մեր ժամանակներում տեղեկատվական պատերազմները դարձել են օրինաչափ երևույթ: Դրանց նպատակն է ներազդել մարդկության համար կարևորագույն բոլոր ոլորտների վրա: Այդ ոլորտներն են՝ քաղաքական, ռազմական, ֆինանսական, տնտեսական, միջազգային հարաբերություններ և այլն: Բանակային ներազդման օպերացիաների

---

<sup>14</sup> Տե՛ս Ս.Մանուկյան, Դ.Գալստյան, Ինչ են մատուցում լսարանին Հայաստանի հեռուստաալիքները, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» ամսագիր, # 9 (88) 2017, էջ 21: Օրինակ՝ ՀՀ առավել դիտվող հեռուստաալիքներով հեռարձակվող սերիալների ընդհանուր ծավալը կազմում է 64,4%:

<sup>15</sup> Տե՛ս Ա.Ղալեյան, Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում, «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 77:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 76:



օրինակներից են «Փոթորիկ անապատում» գործողության ընթացքում հակառակորդին մոլորության մեջ զցելու նպատակով լայնորեն կիրառվող քողարկման լրակազմերը, այդ թվում սպառազինության և ռազմական տեխնիկայի հիմնական տեսակների և համակարգերի նմանակները: Սառույցյան Արաբիայի և Քուվեյթի սահմանի երկայնքով ծավալվել էին բազմաթիվ կեղծ նշանակետերի համակարգեր: Հիմնականում կիրառվել են զրահատանկային տեխնիկայի ստանդարտ նմանակիչներ, որոնք հնարավորություն ունեին գործնականում ցուցադրել ապաքողարկիչ հատկություններ բոլոր սահմաններում՝ եռաչափ սովերապատկեր, շարժիչի ջերմային ճառագայթում և նրա աշխատանքային աղմուկը, զրահատանկային տեխնիկայի կրակոցների նմանակում, կողային ռադիոկայանների պարբերաբար եթեր դուրս գալը և այլն: Նմանակների քանակը համապատասխանեցվել էր Պարսից ծոցում ԱՄՆ խմբավորումների կազմում առկա մարտական տանկերի քանակին:

Վերջին ժամանակներում կատարված բոլոր նշանակալից և քննարկվող իրադարձությունները ստեղծվել են նմանատիպ տեղեկատվական գործիքակազմի օգնությամբ<sup>17</sup>: Այս բոլոր դեպքերում մարդու ինքնուրույնությունը թուլանում է, քանի որ նրան դիմակայում են հզորագույն տեղեկատվական մեխանիզմներ («համակարգեր»)՝ ապահովելով դրանց համար բոլոր պահանջվելիք մեկնաբանությունները: «Տեղեկատվական պատերազմ» նորաճ տերմինով սկսել ենք բնութագրել ներազման ամենատարբեր օպերացիաներ, որոնք ուղղված են անհատական և զանգվածային մտածողությանը: Այսպես՝ սկզբուն-

<sup>17</sup> Օրինակ՝ ԱՄՆ և ՆԱՏՕ անդամ պետությունների ներխուժումը Հարավսլավիա, Իրաք, Լիբիա, Սիրիա և այլն:

քորեն դրա կիրառման կապակցող գործիք է պարտադրման մեխանիզմը, որն անցյալում շատ կարևոր էր, օրինակ՝ բացահայտ կրոնական և գաղափարական հարկադրող ազդեցության ժամանակ, ինչը տարիների ընթացքում փաստորեն փոխակերպվեց՝ դառնալով ավելի քողարկված և թաքնված: 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի դեմ ահաբեկչական հայտնի գործողությունների օրինակը ցույց տվեց, որ դրանց տեղեկատվական հետևանքները ֆիզիկական իրադարձություններից ազդեցիկ էին: Ներկայում դա բնութագրում է Իսլամական պետության ահաբեկիչների գործելակերպը, որը վերոնշյալ իրադարձություններից հետո ընդգծեց իր ուրույն գործիքակազմը: Ահաբեկիչները ստեղծեցին և շարունակում են կատարելագործել զանգվածային գիտակցության վրա ներազդման իրենց գործողությունները: Հետևաբար, այդ վիրտուալ տեղեկատվական հոսանքների հորձանուտն ընկած մարդն այլևս ի վիճակի չէ ինքնուրույն հակազդել դրանց:

Բանակին վերաբերող մասով կարելի է բերել հետևյալ ուսուցանող օրինակը. մասնավորապես, վերլուծելով Իրաքյան պատերազմի արդյունքները՝ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ լավ կոորդինացված տեղեկատվահոգեբանական գործողությունների և օպերացիաների հետևանքները կարող են գերազանցել բուն ռազմական գործողությունների արդյունքները: Իրաքյան բանակի դասալիք կամ գերի հանձնված տասը զինվորից յոթը դիմել է այդ քայլին ամերիկյան տեղեկատվության ազդեցության տակ: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ տեղեկատվահոգեբանական պայքարը պետք է տարվի օպերատիվ մարտավարական մակարդակների՝ շտաբների, զինվորական ղեկավարման մարմինների համատեղ ջանքերով:

Եթե մարդկությունն անցյալում հենվում էր կրոնի և գաղափարախոսության վրա, ապա այսօր նա տեղեկատվության հետևորդն է, որը նրան ուղղորդում է «դեպի ճիշտ պահվածք»՝ պատրանք ստեղծելով, որ դա նրա սեփական որոշումն է: Սոցիալական մեդիան<sup>18</sup> և հեռուստասերիալները համակարգված ու անտեսանելի կերպով ձևավորում են նրա հույզերը, ինչը հիշեցնում է դպրոցական և բուհական տարիներին գիտելիքի (տեղեկատվության)՝ երբեմն անքննադատ, որպես բացարձակ ճշմարտության ընկալումը: Սոցիալական մեդիան և հեռուստասերիալները դարձել են հույզերի մեքենաներ, որոնք մարդուն ներքաշել են դրա ձևավորման արդյունաբերական գործընթացի մեջ<sup>19</sup>: Նկատենք, որ ֆանտաստիկ թեմաներով հեռուստասերիալների մեծ մասը մեզ նախապատրաստում է սարսափելի ապագայի գալստյանը, այդպես է նաև մուլտֆիլմերում և համակարգչային խաղերում<sup>20</sup>, որտեղ մարդը մարդու ռիսերիմ թշնամին է: Հույզերի առաջացման անհատական պրոցեսները չեն կարող մրցակցել ինդուստրիալացված, հատուկ համակարգերի կողմից նպատակաուղղված ձևավորված հույզերի հետ, քանի որ անհատականները թույլ են և ոչ հստակ, իսկ ինդուստրիալացվածները՝ հզոր և հստակ:

<sup>18</sup> Տե՛ս Ս.Մարտիրոսյան, Համացանցի և բջջային կապի ներթափանցումը, սոցիալական մեդիաները Հայաստանում (2017թ.), «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս» ամսագիր, #9 (88), 2017, էջ 13: Մասնավորապես՝ ՀՀ-ում facebook.com կայքի այցելուների թիվը 2017թ. երրորդ կիսամյակում կազմել է 1 մլն 600 հազար օգտատեր՝ օրական մոտ 690 հազար օգտատեր: Նաև առաջընթաց է գրանցել youtube.com-ը, որը ՀՀ-ում դառնում է ակտիվ վիդեոբլոգերային հարթակ:

<sup>19</sup> Տե՛ս Ա.Ղալեչյան, Տեղեկատվական մեթոդների միջոցով ՋՈՒ անձնակազմի գիտակցության վրա ներազդելու որոշ հարցեր, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՄ», #6 (76) 2017, էջ 19:

<sup>20</sup> Օրինակ՝ համացանցում տարածված Ֆրեդի արջի մասին մանկական մուլտրկամ համակարգչային սարսափ խաղեր՝ Resident Evil-ը, Evil within-ը և այլն:

Այսօր շատերը մտածում են միանման՝ ոչ այն պատճառով, որ դա է քարոզում կրոնը կամ գաղափարախոսությունը, այլ որ հեռուստատեսությանն էրից դա են թելադրում հեռուստասերիալները կամ «հանրաճանաչ հեռուստատեսային մեկնաբանները»<sup>21</sup>: Վերահսկելով և ձևավորելով զանգվածային գիտակցությունը՝ կարելի է քարոզել «ազատություններ ու իրավունքներ», կազմակերպել «Բարեփոխումներ», հրահրել խռովություններ և գունավոր հեղափոխություններ<sup>22</sup>:

Ակնհայտ է, որ այս արհեստածին տեղեկատվական «նոր աշխարհի» մոդելը հասարակությունների մեջ ունենում է իր երկարաժամկետ բացասական հետևանքները: Նոր աշխարհը, որում ներկայում ընթանում են տարբեր պատերազմներ, կտրուկ մեծացրել է տեղեկատվական տարածության մեջ «ռազմական գործողությունների» հնարավորությունները: Այսօր ամեն ինչ կարող է կողմ կամ դեմ աշխատել ցանկացած պետության: Այս «նոր աշխարհի» ընդհանուր ուրվագծի փոփոխություններն արդեն յուրացվում են որոշ պետությունների կողմից: Վաղուց ընթանում են կիրեռ- և տեղեկատվական պատերազմներ: Ընդհանրապես, ըստ էության շատ է մեծացել «անվտանգություն» հասկացության դերը, քանի որ եթե անվտանգությունը դիտարկվում էր բացառապես ռազմական տեսանկյունից, իսկ նրա գործիքակազմը բացառապես ռազմական էր, մասնավորապես՝ ավիացիա, հրասայլեր, հրթիռներ, գերձզգրիտ սպառազինություն (ինքնակառավարվող հրթիռներ, ՌԷՊ ժամա-

---

<sup>21</sup> Տե՛ս Ա. Ղալեչյան, Տեղեկատվական մեթոդների միջոցով ԶՈւ անձնակազմի գիտակցության վրա ներազդելու որոշ հարցեր, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», 6 (76), 2017:

<sup>22</sup> Տե՛ս Գ. Հարությունյան, Գունավոր հեղափոխություններ, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», 4 (68), 2016:

նակակից միջոցներ, անօդաչու թռչող հարվածային համակարգեր) և այլն, ապա պատկերացնենք. եթե հիմա գերձզգրիտ հրթիռ բաց թողնենք՝ ներկայիս պայմաններում այն բավական թանկ հաճույք է<sup>23</sup>, բայց դրա փոխարեն հիմա կարելի է բաց թողնել «տեղեկատվական գերձզգրիտ հրթիռ» և այդ գործողությունը կրկնել մի քանի անգամ, և դրա արդյունքը մի քանի անգամ կգերազանցի նախորդի արդյունքը, քանի որ այդպիսով կատարվում է հակառակորդի «ուղեղների լվացում», ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում հետագա գործողությունների համար: Դրա վառ օրինակներից է *The Washington Post*-ի 2008թ. հոկտեմբերի 3-ի հոդվածը, որում բառացիորեն գրված էր. «ԱՄՆ պաշտպանության նախարարությունն Իրաքում անհատ գործարարներին վճարել է մինչև \$300 մլն՝ իրաքյան ԶԼՄ-ում քաղաքական նյութերի, նորությունների, ժամանցային ծրագրերի և սոցիալական գովազդների պատրաստման համար, որպեսզի տեղի բնակչությունը համակրի ԱՄՆ քաղաքականությունը»: Զուգահեռաբար, թե՛ մինչ մարտական գործողությունները սկսելը, թե՛ գործողությունների ընթացքում ԱՄՆ-ը, օգտագործելով տեղեկատվական բոլոր հնարավոր գործիքները, համաշխարհային հանրությունում Իրաքի ղեկավարության նկատմամբ, ի դեմս Սադամ Հուսեյնի, ձևավորել էր բացասական կարծիք՝ նրան ներկայացնելով որպես սատանայական կերպար:

Ներկայում աշխարհի մի շարք զարգացած պետությունների բանակներն արդեն ունեն հատուկ ստորաբաժանումներ, որոնք սոցիալական ցանցերը լցնում են «գրավիչ» տեղեկույթ-

<sup>23</sup> Օրինակ՝ համեմատական կարգով ամենից էժան ինքնաղեկավարվող (ինքնաթիռներից արձակվող) մեկ «XA 25» հրթիռն արժե մոտ \$10.000, իսկ «ցամաք-ցամաք» տիպի մեկ գերձզգրիտ հրթիռի արժեքը տատանվում է \$2-ից 3 մլն-ի սահմաններում:

ներով: Այդ պետությունները ստեղծում են հզոր համակարգեր, որոնք կարողանում են «վերամշակել» ցանկացած տեղեկատվություն իրենց օգտին: Այսօր այդ դերակատարմամբ հանդես է գալիս հեռուստատեսությունը<sup>24</sup> (մասամբ նաև համացանցը)՝ ռազմավարական նպատակների օգտին արտաբերելով մարտավարական փաստեր:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ մարդկությունն այսօր ապրում է փափուկ և կոշտ ղեկավարման մոդելների ներքո: Կոշտ ղեկավարումը «ներարկվում» է մարդկանց, ովքեր կրում են «ծառայողական համազգեստներ», իսկ փափուկ ղեկավարումը՝ այն մարդկանց, ովքեր ունեն համացանցին միացված համակարգիչներ, որոնք անցյալում ունեցել են գրիչներ ու տպագրական մեքենաներ: Իրականում փափուկ ձևը կրթությունն է, գրականությունը, արվեստը, իսկ ներկայում՝ իհարկե, հեռուստասերիալները... Գաղափարախոսությունը և կրոնը նույնպես փափուկ ղեկավարման մոդելներ են, եթե մենք ենթարկվում ենք դրանց:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ «Տեղեկատվական պատերազմը մի տեղեկատվության հարձակումն է մեկ այլ տեղեկատվության վրա, որի արդյունքում մեր գլուխներում առաջանում է իրականության այլ պատկեր և մենք դառնում ենք այլ մարդ»<sup>25</sup>: Աշխարհընկալման ցանկացած լոգոում մեզ դրդում է ոչ ճիշտ որոշումների, որն անթույլատրելի է ցանկացած մակարդակի, դիրքի և պաշտոնի մարդու համար:

---

<sup>24</sup> Տե՛ս Ս.Մանուկյան, Դ.Գալստյան, Լ.Հակոբյան, Աշխարհի կերպարը Հայաստանի հեռուստատեսային լուրերում, «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս» ամսագիր, #10 (89) 2017, էջ 11:

<sup>25</sup> [https://zn.ua/article/print/socium/informacionny-poedinok-ili-kak-chelovek-v-galstuke-pobezh-daet-cheloveka-v-tapochkah-270585\\_.html](https://zn.ua/article/print/socium/informacionny-poedinok-ili-kak-chelovek-v-galstuke-pobezh-daet-cheloveka-v-tapochkah-270585_.html)

## ***2.1. Տեղեկատվական ապահովումը զինված ուժերի համակողմանի (մարտական) ապահովման համակարգում***

Արդի պայմաններում տեղեկատվական ապահովման տեսությունը և պրակտիկան Զինված ուժերի մարտական ապահովման համակարգում ձեռք է բերում հատուկ նշանակություն: Այն հանդես է գալիս որպես զորամասերի, զորամիավորումների և միավորումների արդյունավետ ռազմասոցիալական և հոգեբանական ղեկավարման, անձնակազմի տեղեկացման (ուսուցանման) գլխավոր նախադրյալներից մեկն ինչպես խաղաղ, այնպես էլ սպառնալից և պատերազմական ժամանակաշրջաններում:

*Զինված ուժերի տեղեկատվական համակողմանի (մարտական) ապահովումը տեղեկատվական գործունեության ուժերի, կազմակերպչական կառուցվածքների և միջոցների, տեսակների, գործառույթների և սկզբունքների, ինչպես նաև օբյեկտների և սուբյեկտների տեղեկատվական փոխգործակցության տարատեսակ ձևերի և մեթոդների ամբողջությունն է՝ միավորված հստակ նպատակների և խնդիրների ընդհանրությամբ:*

Այն իրականացվում է Զինված ուժերի ռազմական ղեկավարության և տեղեկատվական աշխատանքներ պլանավորող մարմինների կողմից՝ իրականացվող համալիր գործողությունների և ընթացակարգերի միջոցով, ուսումնական և մարտական խնդիրների օպտիմալ լուծման շահերից ելնելով, ռազմասոցիալական տեղեկության հավաքման և արտադրման, մշակման և վերլուծության, պահպանման և պաշտպանության, փոխանցման և օգտագործման ճանապարհով:

Տեղեկատվական աշխատանքները զինված ուժերում կարող են ունենալ ինչպես ինքնուրույն, այնպես էլ օժանդակ նշանակություն: Զուտ տեղեկատվական բնույթ ունեցող որոշակի շրջանակի խնդիրների լուծման համար (հատուկ հետախուզական գործողություն, օպերատիվ քողարկում, հակառակորդի ապատեղեկացում, տեղեկատվական պայքար, տեղեկատվական շրջափակում և այլն) այն կարող է ունենալ գլխավոր, այսինքն՝ ինքնուրույն դեր: Բայց հաճախ նրան պարտադրվում է օժանդակ դեր, երբ այն դիտարկվում է որպես տեղեկատվական ապահովում: Հատկապես միավորումների, զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների անձնակազմի ուսուցման և դաստիարակման, զինվորական ղեկավարման համակարգի համեմատ՝ տեղեկատվական աշխատանքի ամբողջ կառուցվածքը հասկացվում է որպես տեղեկատվական ապահովման համակարգ:

Որո՞նք են զինված ուժերի տեղեկատվական ապահովման խնդիրները, բովանդակությունը և կառուցվածքը: Այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է այն դիտարկել որպես համակարգ և վերլուծել կառուցվածքային հիմնական բաղադրիչները: Դա թույլ կտա կանոնակարգել տեղեկատվական գործունեության հիմնական կատեգորիաները, ճշտել նրա կազմը, ինչպես նաև անցկացման առավել արդյունավետ ձևերը, մեթոդներն ու միջոցները: Զինված ուժերի տեղեկատվական ապահովումը պետք է գործի ռազմական շինարարությունում (բարեփոխումներում) տեղի ունեցող փոփոխությունների, լուծվող խնդիրների բնույթին համապատասխան: Այն արտացոլում է Զինված ուժերի տեղեկատվական ապահովման համակարգի օպտիմալ ճանապարհների որոնումը:



## **2.2. Տեղեկատվական ապահովման տեսակները և նպատակները**

Զինված ուժերում տեղեկատվական ապահովման համակարգի փորձնական և տեսական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն իրականանում է ԶՈւ պաշտոնատար անձանց տեղեկատվական գործունեության միջոցով, որը բաժանվում է երկու հիմնական տեսակի՝ տեղեկատվական-վերլուծական և տեղեկատվական-հոգեբանական:

Տեղեկատվական-վերլուծական աշխատանքը ներկայացնում է *զինվորական կադրերի գործունեությունը ռազմական ոլորտի տեղեկատվության նպատակային որոնման, հավաքման և վերլուծական-գործնական վերամշակման ուղղությամբ՝ ռազմական ղեկավարման խնդիրների բարեհաջող լուծման, ինչպես նաև զորքերի մարտական գործողությունների բարոյահոգեբանական ապահովման շահերից էլնելով:*

Զինված ուժերում տեղեկատվական գործունեության մյուս տեսակը՝ *տեղեկատվական-հոգեբանական աշխատանքը*, ինչպես ցույց է տալիս գորային փորձը, ժամանակին դրված խնդիրների, ճիշտ կազմակերպվածության և անցկացման, արդյունավետ մեթոդիկայի դեպքում օժտված է զինվորականների մտքերի և գիտակցության վրա հոգեբանական ներգործության հզոր ներուժով:

*Տեղեկատվական-հոգեբանական աշխատանքի էությունը զինծառայողների հոգեբանության և վարքի վրա նպատակաուղղված տեղեկատվական ներգործությունն է, նրանց մեջ բարձր բարոյական ոգի ձևավորելը, անհրաժեշտ հոգեբանական վիճակի պահպանումը, մարտական որակների զարգացումը՝ երդմանը հավատարիմ լինելու և զինվորական պարտքի դաստիարակման նպատակով:*

Տեղեկատվական ապահովման նպատակները հստակեցվում և կենսագործվում են մի շարք առաջնահերթ խնդիրների լուծմամբ:

**Հոգեբանական ներգործությունը** մարդկանց վրա ազդեցության իրականացման ձև է՝ գաղափարական և հոգեբանական կառույցների վրա ազդեցության գիտակցական և ենթագիտակցական մակարդակով՝ էմոցիոնալ վիճակի փոխակերպմամբ, օգտագործելով բաց կամ փակ հոգեբանական ստիպման պահվածքի տարբեր ձևեր:

*Հոգեբանական ներգործությունը հաճախ ընկալվում է որպես անձի վրա բարոյական ներազդման ձև:* Այն մարդկանց հոգեբանական գաղտնի ստիպման տարբեր ձևերի համակողմանի կիրառումն է հոգեբանական օպերացիաների համակարգում, քարոզչական ակցիաների և գովազդների ձևով, հանդես է գալիս որպես քաղաքական պայքարի տարածված ձև, ոչ միայն արտաքին քաղաքական գործունեության և միջպետական հակամարտության, այլ նաև ներքաղաքական գործունեության ժամանակ: Անձի գաղտնի ստիպման պրոցեսը *իրականացվող գործունեության տեսակ է, որն օգտագործում է սպեցիֆիկ ձևեր և միջոցներ, կոորդինացված է տարածության, ժամանակի մեջ և իրականացվում է ինչպես առանձին անձանց, այնպես էլ տարբեր սոցիալական կազմակերպությունների կողմից:* Անձի գաղտնի ստիպման տեխնոլոգիան ներառում է ինչպես մարդկանց ստիպման հոգեբանական գաղտնի պրոցեսը, այնպես էլ հոգեբանական ներազդման ձևերի և միջոցների կիրառվող համակարգերը: Հոգեբանական ներգործությունը կարող է իրականացվել տարբեր մեթոդներով, այն մարդկանց գիտակցության և ենթագիտակցության վրա ազդեցության հիմնական գործիք է, որի օգնությամբ իրականացվում է ներազդում՝

**առաջին.** հոգեբանական մեթոդներով (համոզմամբ, ներշնչմամբ, տեղեկացմամբ, խրախուսմամբ, ստիպմամբ, պատժմամբ, անձնական օրինակի մեթոդով),

**երկրորդ.** հոգեբանական ներագրումը կարող է իրականացվել՝ օգտագործելով ռազմական միջոցներ,

**երրորդ.** հոգեբանական ներագրման համար կարող են օգտագործվել առևտրային և ֆինանսական համակարգերի սանկցիաներ՝ ուղղված հավանական հակառակորդի տնտեսական խաթարմանը,

**չորրորդ.** հոգեբանական ներագրումը կարող է իրականացվել՝ օգտագործելով միայն քաղաքական լծակներ:

### ***2.3. Տեղեկատվական աշխատանքի սկզբունքները և ուղղությունները***

Տեղեկատվական աշխատանքը, ինչպես և ցանկացած այլ գործունեություն, կառուցվում է որոշակի ելակետային դրույթների հիման վրա, որոնք արտահայտում են նրա հիմնական օղակների բովանդակության, կազմակերպվածության, մեթոդիկայի և ղեկավարման նկատմամբ գլխավոր պահանջները: Այդ պահանջները ներկայացված են զինվորական ղեկավարության կողմից սահմանված, ինչպես նաև փորձով մշակված առավել ընդհանուր ղեկավար դրույթներով և կանոններով, որոնց հիման վրա իրականացվում է տեղեկատվական աշխատանքը գործառնաբերում և գործամիավորումներում:

Այսօր հրատապ է տեղեկատվական աշխատանքի որակյալ մասնագետների թվաքանակի և նյութատեխնիկական բազայի ավելացման հարցը: Արդի պայմաններում տեղեկատվական աշխատանքի արդյունավետությունն ուղղակիորեն կապ-

ված է որակյալ մասնագետների, տեխնիկական սարքավորման և նյութական ապահովման մակարդակի հետ: Տեղեկատվության տեխնիկական միջոցների մաշվածությունը և խափանումը պահանջում են օպերատիվ նորոգում և թարմացում: Զինվորական գործում տեղեկատվական հոսքերի ծավալների, ժամանակի գործոնի դերի աճը նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և լայն ներդրման անհրաժեշտություն է առաջացնում: Տեղեկատվական աշխատանքի ուղղություններից մեկը հակառակորդի տեղեկատվական-հոգեբանական ներգործությանը հակազդելն է: Այս ուղղության շրջանակներում տեղեկատվական աշխատանքի ուժերով և միջոցներով իրականացվում են հակառակորդի հոգեբանական գործողությունների և օպերացիաների բացահայտում և չեզոքացում:

*Տեղեկատվական-հոգեբանական հակազդեցությունը* հակառակորդի գորքերի դեմ տեղեկատվական-հոգեբանական պայքարի հիմնական մասն է: Ոլորտի խնդիրներն են՝ շտաբների գործառույթներն ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ մարտական գործողությունների ժամանակ: Այստեղ գործում է կատարվող տեղեկատվական խնդիրների մի ամբողջ համալիր<sup>26</sup>:

<sup>26</sup> Օրինակ՝ Պարսից ծոցի, մի շարք այլ տեղային հակամարտությունների մարտական գործողությունների արդյունքները վկայում են, որ լավ կոորդինացված տեղեկատվական-հոգեբանական գործողությունների և օպերացիաների հետևանքները կարող են գերազանցել բուն ռազմական գործողությունների արդյունքները: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ տեղեկատվական-հոգեբանական պայքարը պետք է տարվի շտաբների, զինվորական ղեկավարման մարմինների համատեղ ջանքերով: Տեղեկատվական պայքարի ուժերի և միջոցների զարգացմամբ մի շարք արտասահմանյան բանակներում զինված ուժերի համար առօրեական նշանակություն է ձեռք բերում զինվորական ծառայության անվտանգության ու գործունեության և նավերի մարտական և ուսումնական խնդիրների կատարման տեղեկատվական ապահովումը: Այն ենթադրում է իրավաբանական, կազմակերպչական, տեխնիկական և դաստիարակչական բնույթի միջոցառումների համալիր յուրային տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի, ինչպես նաև անձնակազմի հակառակորդի ազդեցությունից պաշտպանության համար:

Պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ փոխգործակցությունը նույնպես բանակյի տեղեկատվական ապահովման մարմինների առաջնահերթ ուղղությունն է:

*Տեղեկատվա-տեխնիկական հակազդեցությունը* միջոցառումների համախումբ է՝ ուղղված զինված ուժերի տեղեկատվա-տեխնիկական օբյեկտների վրա ծրագրային և էլեկտրոնային ներագդման ժամանակին հայտնաբերմանը և արգելմանը (արդյունավետության ցածրացմանը), ինչպես նաև տեղեկատվական զենքի կիրառման պայմաններում դրանց աշխատանքի հուսալի ապահովումն է:

*Ծրագրային ներագդեցությունից պաշտպանությունն* իրականացվում է տեղեկատվության անվտանգության, զաղտնիության ռեժիմի, հետախուզության և հակահետախուզության ապահովման շրջանակներում:

*Էլեկտրոնային ներագդեցությունից պաշտպանությունն* իրականացվում է ռադիոէլեկտրոնային պաշտպանության, կապի անվտանգության ապահովման և համակարգի ու միջոցների վրա համաձայնեցված ֆիզիկական ներագդման միջոցառումների անցկացմամբ:

#### ***2.4. Տեղեկատվական ապահովման մարմինների կառուցվածքը և հիմնական գործառույթները***

Անհրաժեշտությունից ելնելով՝ զինվորական ղեկավար մարմիններում կարող են ստեղծվել կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք նախատեսված կլինեն գորքերին, գորամասերին և միավորումներին տրամադրել օպերատիվ տեղեկատվություն:

Տեղեկատվությունը ռազմական գործում՝

1. ռազմասոցիալական կառավարման, անձնակազմի ուսուցանման և դաստիարակման գործոն է,
2. այն զինծառայողների տեղեկատվական պահանջմունքների բավարարման միջոց է,
3. այն կազմում է հասարակությունում, Զինված ուժերում և մարտիկների միջև ֆորմալ և ոչ ֆորմալ հաղորդակցությունների իրական բովանդակությունը,
4. օգտագործվում է որպես տեղեկատվական-հոգեբանական պայքարի վարման գործիք:

Այսպիսով, մենք հիմք ունենք տեղեկատվական աշխատանքի գլխավոր գործառույթի առանձնացման համար, որը ռազմական գործունեության իրական պայմաններում կարող է ունենալ տարբեր կազմակերպչական դրսևորումներ:

Տեղեկատվական ապահովումն առավելապես դիտարկվում է որպես ըստ նպատակների, օբյեկտների և ժամանակի համաձայնեցված միջոցառումներ՝ ուղղված բարենպաստ տեղեկատվական պայմանների ստեղծմանը, կառավարման խնդիրներին հասնելու կամ այլ գործունեության համար: Տեղեկատվական ապահովումը ներառում է պաշտոնատար անձանց անհրաժեշտ ծառայողական տեղեկատվության հավաքման, մշակման, պահպանման, պաշտպանության, փոխանցման և ներկայացման ձևերի, մեթոդների և միջոցների հանրագումարը: Մասնագետների կարծիքով, ժամանակակից կառավարման համակարգերի տեղեկատվական ապահովման կազմակերպման խնդիրը անհրաժեշտ տեղեկատվության ծավալների մեծացման և նրա մշակման ժամանակի կրճատման մշտական պահանջի միջև հակասությունների լուծումն է:

Ըստ էության, կառավարման տեղեկատվական ապահովումը հրամանատարների համար՝ որոշման մշակմանն ու ընդունմանը, միջոցառումների պլանավորմանն ու կազմակերպմանը, դրանց անցկացման վերահսկմանն անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսների ստեղծումն է: Հատուկ նշանակություն ունի մեր զորքերի և հակառակորդի բարոյահոգեբանական վիճակի, ռազմաքաղաքական իրադրության վերլուծության և մարտական խնդիրների կատարման սոցիալ-հոգեբանական պայմանների արդյունքում ստացված տեղեկատվությունը:

### 3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ (ՀԱԿԱՊԱՅՔԱՐԻ) ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ (ՄԱՐՏԱԿԱՆ) ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տեղեկատվական պայքարի դերի աճն օբյեկտիվորեն տանում է պատերազմի և խաղաղության միջև նախկինում գոյություն ունեցող անջրպետի նվազմանը: Զանգվածային լրատվամիջոցների, տեղեկատվական տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ, «սառը պատերազմները» դառնում են ավելի մասշտաբային և քաղաքականապես արդյունավետ: Այդ պատերազմներն ավելի հաճախակի պետությունների կողմից օգտագործվում են «թեժ» պատերազմների փոխարեն: Հետագայում դեռ անդրադարձ կլինի «20-րդ դարի վերջի նոր պատերազմները» թեմային, որոնց արդյունքում առանց կրակոցների վերանում էին հզոր պետություններ, կտրուկ փոխվում էր Երկրի քաղաքական քարտեզը:

*Տեղեկատվական պայքարը (հակապայքարը) պատերազմ է առանց ճակատային զծի, իսկ տեղեկատվական պատերազմների բազմաթիվ գործողությունների իրականացման գործընթացը գործնականորեն անհնար է բացահայտել. եթե նույնիսկ այդպիսի փաստեր նկատվում են, դրանք ամենայն հավանականությամբ մնում են անանուն: Գոյություն չունեն տեղեկատվական պատերազմի իրականացման միջազգային, իրավական և բարոյական նորմեր:*



Տեղեկատվական պայքարը համակարգերի՝ մեկը մյուսի վրա բաց և/կամ գաղտնի կերպով նպատակաուղղված տեղեկատվական ազդեցությունն է՝ նյութական ոլորտում որոշակի շահ ստանալու նպատակով<sup>27</sup>:

*Ռազմական ոլորտում հակառակորդի նկատմամբ համապատասխան տեղեկատվական գերակայություն ապահովելու հիմնական գործիքը տեղեկատվական օպերացիան է:*

*Տեղեկատվական օպերացիան<sup>28</sup> տեղեկատվական պայքարի՝ ըստ նպատակների, խնդիրների, տեղի և տեղեկատվական գործողությունների ժամանակի համաձայնեցված հարվածների և հարձակումների, հոգեբանական և տեղեկատվա-տեխնիկական օպերացիաների, քողարկման միջոցառումների, բարոյահոգեբանական ապահովման, ռադիոէլեկտրոնային պայքարի, կապի անվտանգության և տեղեկատվության պաշտպանության, կիբեռգործերի (ուժերի) մարտական և հատուկ գործողությունների, համակցված հնարքների կիրառումն է, որն անցկացվում է ՀՀ ԶՈՒ ԳՇ ղեկավարության կողմից մեկ մտահղացմամբ և պլանով:*

### **3.1. Հոգեբանական օպերացիաներ**

Հոգեբանական պատերազմը տարբեր ձևերի, մեթոդների և մարդկանց (բնակչության) վրա ներազդելու միջոցների համախումբ է, որի նպատակն է՝ նրանց հոգեբանական բնութագրերը (հայացքները, կարծիքները, արժեքային կողմնորոշումները, տրամադրությունը, մոտիվացիան, ներշնչանքը, պահվածքը), ինչպես նաև ամբողջությամբ հասարակության գիտակցության

<sup>27</sup> Տե՛ս Ա. Ղալեյան, «Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում», «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 24:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 77:

զանգվածային տրամադրությունների խմբային նորմերը փոխել ցանկալի ուղղությամբ: **Հոգեբանական պատերազմը ենթադրում է բազմաթիվ հոգեբանական օպերացիաների կազմակերպում և իրականացում**, որոնք ունեն հետևյալ նպատակները.

- Թշնամու (հակառակորդի) ղեկավարության կողմից ստացվող տեղեկատվության աղավաղում և նրան կեղծ ու անիմաստ տեղեկատվության հրամցում, որը կզրկի նրան իրողությունը կամ ընթացիկ իրավիճակը ճիշտ ընկալելու հնարավորությունից և թույլ չի տա ընդունել ճիշտ որոշումներ,
- սոցիալական խմբերի (բնակչությանն ամբողջությամբ) հոգեբանական մշակում,
- գաղափարական դիվերսիաներ և ապատեղեկատվություն,
- նպաստավոր հասարակական կարծիքի ապահովում,
- կեղծ կարգախոսների ներքո զանգվածային ցույցերի կազմակերպում,
- կեղծ քարոզների և ասեկոսների տարածում:

Տեղեկատվական ներազդեցության հիմնական ձև են **գաղտնի տեղեկատվա-հոգեբանական օպերացիաները**: Դա մի պետության (պետությունների խմբերի) կողմից մեկ այլ պետության նկատմամբ գաղտնի տեղեկատվական-հոգեբանական օպերացիաների հատուկ տեսակ է, որն իրականացվում է ղեկավարվող տեղեկատվական ներազդեցությամբ անհատական, խմբային և զանգվածային գիտակցության, զգացմունքների վրա, այլ պետությունների մարդկանց ու տեղեկատվություն ընդունող սուբյեկտներին ապատեղեկատվություն տրամադրելով, ներազդելով տնտեսական և այլ որոշումների վրա, ինչպես նաև

այլ պետությունների տեղեկատվական ենթակառուցվածքների խափանման իրականացմամբ:

*Հոգեբանական օպերացիաներն* իրականացվում են համազորային օպերացիաների (մարտական գործողությունների) ընդհանուր մտահղացման ներքո՝ նպատակ ունենալով ստեղծել գորքերի գործողությունների համար առավելագույն բարենպաստ իրադրություն:

**Հոգեբանական օպերացիան** հոգեբանական պատերազմի բաղկացուցիչ գլխավոր տարրն է: Դրա իրականացումը կանխատեսում է զինված հակամարտության ժամանակ համաձայնեցված, համակցված, իրար հետ ըստ նպատակների, խնդիրների, տեղի և ժամանակի խիստ կապակցված՝ օբյեկտների վրա հոգեբանական ներագրման ձևերի և մեթոդների գործնական կիրառում: Հոգեբանական օպերացիաները բաղկացած են քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, ռազմական ընդգծված տեղեկատվա-հոգեբանական միջոցառումներից՝ ուղղված բնակչության կոնկրտ խմբերին (խավին, թիրախային լսարանին) և հակառակորդի գորքերին՝ նպատակ ունենալով ներդնել իրենց համար խորթ գաղափարական և սոցիալական հիմնավորումներ, կարգելով վարքի կեղծ ձևեր, տրամադրության, զգացմունքի, կամքի՝ ցանկալի ուղղությամբ ուղղորդելու ձևափոխում, խնդիր ունենալով նրանց ստիպել հրաժարվել առաջիկա մարտական գործողությունների վարումից, հանձնվել կամ դիմել փախուստի:

*Հոգեբանական օպերացիաները բաժանվում են* ռազմավարական, օպերատիվ և մարտավարական մակարդակների:

- **Ռազմավարական հոգեբանական օպերացիաները**, երկարաժամկետ նպատակներին հասնելու համար, անցկաց-

վում են գլոբալ մասշտաբներով՝ նպատակ ունենալով ստեղծել մարտական գործողությունների անցկացման նպաստավոր հոգեբանական իրավիճակ:

- **Օպերատիվ հոգեբանական օպերացիաներն** իրականացվում են որոշակի տարածաշրջաններում և հետապնդում են ռազմական կամպանիաների միջնաժամկետ կամ խոշոր ռազմական օպերացիաներին հասնելու նպատակներ:
- **Մարտավարական հոգեբանական օպերացիաներն** իրականացվում են կարճաժամկետ նպատակներով և ուղղված են մարտավարական օղակի գորքերի մարտական գործողությունների աջակցմանը:

Հոգեբանական օպերացիաները՝ բոլոր մակարդակներում, միաժամանակ իրականացվող, իրար հետ կապակցված միջոցառումների համախումբ են, որից բարդ է առանձնացնել այս կամ այն մակարդակը: Դրանք խաղաղ և պատերազմական ժամանակաշրջանում պլանավորվում և անցկացվում են տարբեր ոլորտների գորահրամանատարների, հրամանատարների որոշումների հիման վրա:

***Հոգեբանական օպերացիաներն ըստ իրենց իրականացման ձևի բաժանվում են.***

1. Հոգեբանական օպերացիաներ, որոնք անց են կացվում խաղաղ ժամանակաշրջանում (սպառնալից ժամանակաշրջանում):
2. Հոգեբանական օպերացիաներ, որոնք անց են կացվում պատերազմական ժամանակաշրջանում:
3. Հոգեբանական օպերացիաներ, որոնք անց են կացվում խաղաղապահ գործունեության շրջանակներում:

***Հոգեբանական օպերացիաներն ըստ ուղղությունների բաժանվում են.***

1. Հոգեբանական օպերացիաների՝ ուղղված քաղաքացիական բնակչության դեմ:
2. Հոգեբանական օպերացիաների՝ ուղղված հակառակորդի գորքի դեմ:
3. Հոգեբանական օպերացիաների՝ ուղղված հակառակորդի հրամանատարության դեմ:
4. Հոգեբանական օպերացիաների՝ ուղղված հակառակորդին մոլորության մեջ գցելուն:
5. Հոգեբանական օպերացիաների՝ ուղղված ընդդիմադիր ուժերին և դիսիդենտ շարժումների աջակցմանը:
6. Հոգեբանական օպերացիաների՝ ուղղված մշակութային էքսպանսիային և դիվերսիաներին:
7. Համակերպող հոգեբանական օպերացիաներ:

***Հոգեբանական օպերացիաների հիմնական խնդիրներն են.***

- պահանջվող ռազմական միջամտության (համոզման) արդյունքում ճիշտ հասարակական կարծիքի ձևավորումը,
- հակառակորդի և նրա դաշնակիցների ռազմաքաղաքական դեկավարության վրա ներագորումը՝ նպատակ ունենալով ստիպել նրանց հրաժարվել կամ առնվազն ձեռնպահ մնալ պատերազմի մեջ մտնելու գաղափարից,
- երկրի ներսում ընդդիմադիրների, հակադրվող ուժերի, էթնիկական, ռասայական, կրոնական և այլ հակասությունների հրահրում, դրա արդյունքում՝ գցել երկրի ռազմաքաղաքական դեկավարության հեղինակությունը,
- համագործակցելով ընդհատակում պայքարող ուժերի հետ՝

- ղեկավարել տարանջատող տարրերի գործունեությունը,
- բարեկամական պետությունների բնակչության վրա ներազդեցությունը,
  - չեզոք պետությունների բնակչության վրա բարյացակամության (դրական) դրսևորումների զարգացման աջակցումը,
  - բարոյական ոգու խաթարումը, հակառակորդի բանակի անձնակազմի շրջանում անվստահության և անհանգստության սերմանումը՝ նպատակ ունենալով իջեցնել նրա մարտունակությունը,
  - վերլուծական աշխատանքների իրականացումը հակառակորդի խոցելի տեղերի բացահայտման ուղղությամբ, դրանց վերաբերյալ համապատասխան տեղեկությունների տրամադրումը մարտավարական օղակի հրամանատարական կազմին, ինչպես նաև մարդկանց այն խմբերին, որոնք այդ մարտական գործողությունների շրջաններում իրականացնում են համապատասխան գործողություններ,
  - վերջնագրերի ներկայացումով և հանձնվելու կոչերով հակառակորդի բնակավայրերի զավթման գործընթացներին աջակցումը,
  - հրամանատարությանն օգնության ցուցաբերում՝ մարտական գործողությունների շրջանում բացասաբար տրամադրված բնակչության (անձանց) վրա համապատասխան հսկողության իրականացման հարցերով,
  - հակառակորդի և այլ իրավաբանական կառույցների կողմից իրականացվող հոգեբանական օպերացիաներին հակազդեցությունը,

- մարտական գործողություններում ներգրավված զորքի (մարդկանց) հոգեբանական ներազդման հակվածության աստիճանի կանխատեսումը:

**Հոգեբանության եզրակացությունն ակտիվ օգտագործում են տարածվող տեղեկատվությանը թույլ և արագ խոցելիության հասկություն տալու, մարդու ենթագիտակցություն «ներթափանցելիության» նպատակներով: Դրան հասնում են մարդկային ընկալման օրինաչափությունների շահագործման ճանապարհով, այսպես կոչված «էֆեկտներով»: Դրանցից այսօր լայնորեն հետազոտված են առաջնայնության էֆեկտը, առաջնահերթայնության էֆեկտը, հեղինակության էֆեկտը, «իմաստունի ձայնի» էֆեկտը, կրկնության էֆեկտը, պատասխանատվությունից խուսափելու էֆեկտը և այլն:**

Հակառակորդի վրա հոգեբանական ներազդման խնդրի կատարման առաքելությունը<sup>29</sup> դրված է հոգեբանական օպերացիաների հատուկ զորամասերի (խմբերի, գումարտակների, վաշտերի) վրա, որոնք գտնվում են ԱՄՆ ՊՆ հատուկ օպերացիաների հրամանատարության ներքո (Ֆորտ Բրեգ, Հյուսիսային Կարոլինա նահանգ), որոնք իրենց հերթին մտնում են ԱՄՆ ԶՈՒ հատուկ օպերացիաների միացյալ հրամանատարության կազմի մեջ: Հոգեբանական օպերացիաների գլխավոր ներուժը կենտրոնացված է ցամաքային զորքերում: Նրա միջուկը բաղկացած է 4-րդ հոգեբանական օպերացիաների խմբից, որն իր հերթին բաղկացած է 4 հոգեբանական օպերացիաների գումարտակներից (1, 6, 8 և 9-րդ) և քարոզչական նյութերի պատրաստման

<sup>29</sup> Տարբերակն ընտրված է ԱՄՆ հոգեբանական օպերացիաների ուժերի և միջոցների առաջավոր փորձի ուսումնասիրմամբ:

գումարտակից, որոնց թվաքանակը կազմում է ավելի քան 900 մարդ: Բացի այդ, կազմակերպչական պահեստուժում գտնվում են հոգեբանական օպերացիաների էլի երեք խմբերի շտաբներ (2-րդ, 5-րդ, 7-րդ), 9 գումարտակների՝ հոգեբանական օպերացիաների 22 վաշտ և քաղաքացիական բնակչության հետ աշխատանքների գծով մոտ 40 գումարտակ:

**Ռազմական դրության ժամանակ** ցամաքային զորքերում գործում են հոգեբանական օպերացիաների և անմիջական ապահովման խմբեր: Անմիջական ապահովման խմբերը բաղկացած են ընդհանուր աջակցման գումարտակից, գերիների հետ աշխատանքների գումարտակներից, կոնսուլիդացնող (հավասարակշռող, հանդարտեցնող) քարոզչություն իրականացնող գումարտակից:

**Ընդհանուր աջակցման գումարտակը** (272 մարդ) ռազմական գործողությունների թատերաբեմում իրականացնում է ռազմավարական մակարդակների հոգեբանական օպերացիաներ:

**Այն բաղկացած է հետևյալ ստորաբաժանումներից.**

- հետախուզական,
- տեղեկատվա-հոգեբանական նյութերի մշակման,
- ծանր, միջին, թեթև տպարաններից,
- ձայնահաղորդակցական կայաններից,
- ռադիոկայաններից:

Գումարտակների հնարավորությունները թույլ են տալիս տպագրել մինչև 28 միլիոն քարոզչական նյութ (թռուցիկներ, պաստառներ, ինչպես նաև ապատեղեկատվություն և այլն), իրականացնել ռադիոհեռարձակումներ CB և KB հաճախականություններում՝ մինչև 150 կմ շառավղով, պատրաստել ռադիո-



հաղորդումներ, որոնց ընդհանուր տևողությունը կլինի մինչև 8 ժամ, իրականացնել ձայնահեռարձակում մեծ տարածությունների վրա: Կոնսոլիդացնող քարոզչության գումարտակը ներառում է ռադիո- և հեռուստատեսային խմբագրություն, տեղի ստացիոնար ռադիոկայանների, հեռուստակայանների և կինոթատրոնների շահագործումն ապահովող ստորաբաժանումից: Անմիջական աջակցման խումբը նշանակված է գորքերի կողմից լուծվող խնդիրների տեխնիկական և օպերատիվ ապահովման նպատակով: Այն ներառում է անմիջական աջակցող գումարտակներ և վաշտեր: Գումարտակները նշանակված են բանակային կորպուսների մարտական գործողությունների աջակցման համար և կազմված են շտաբից, աջակցման ստորաբաժանումներից՝ բաղկացած 2-5 վաշտերից: Գումարտակի անձնակազմը բաղկացած է 260-533 հոգուց: Անմիջական աջակցման վաշտը (88 մարդ) նշանակված է դիվիզիայի, բրիգադի մարտական գործողությունների ապահովման համար: Մարտական գործողությունների վարման ժամանակ վաշտը գործում է գորքերի մարտակարգերում:

Նշյալ ստորաբաժանումների հաստիքա-կազմակերպչական կառուցվածքը մշտական չէ, այն հիմնված է մոդուլային սկզբունքի վրա: Ելնելով առաջադրված խնդիրներից՝ ստեղծվում են հոգեբանական օպերացիաների համապատասխան թիմեր: Այդպիսի թիմերում կարող են ընդգրկվել օտար լեզուների և մշակույթի, հետախուզության, լրագրության, տպագրության, կապի, լուսանկարչական, հոգեբանության, գովազդի և այլ մասնագետներ: Դրանց մեծամասնությունն իր համապատասխան կրթությունը ստանում են Ֆորտ Բրեզի Ջորջ Քենեդու անվան պատերազմների հատուկ մեթոդների կենտրոնում, ԱՄՆ

ՊՆ զանգվածային տեղեկատվության միջոցների մասնագետների պատրաստման դպրոցում:

**Հոգեբանական զենքը մարդկանց հոգեբանական գործունեության վրա ազդող միջոցառումների համախումբ է՝ նպատակ ունենալով մարտական խնդիրների հաջող լուծման շահերից ելնելով՝ մարդկային պահվածքի նպատակաուղղված ղեկավարումը:**

Այդպիսի զենքի հիմնական տարատեսակների շարքին կարելի է դասել արդեն լայն ծանոթ և գործնականում կիրառված տեղեկատվա-հոգեբանական ներագումը, որը գտնվում է ակտիվ գիտական և փորձարարական մշակումների փուլում, մասնավորապես՝ փսիխոտրոպը, տեխնո-հոգեբանականը և սոմատո-հոգեբանականը, ինչն ապագայում դիտարկվում է որպես փսիխոտրոպ զենքի առաջիկա հավանական տեսակ:

**Տեղեկատվա-հոգեբանական օպերացիաների համակարգի տեղեկատվա-հոգեբանական ներագուման միջոցների հիմնական կազմին են պատկանում հետևյալները.**

1. **Տպագիր միջոցներ՝** թռուցիկները, պաստառները, թերթերը, տեղեկատվական նյութերը և այլն, դրանց ստեղծման միջոցները (պոլիգրաֆիական բազան) և տարածումը:
2. **Հոգեբանական օպերացիաների կարևորագույն միջոցների դասին են պատկանում *ռադիոն և հեռուստատեսությունը:*** Մրանց են պատկանում ստացիոնար և շարժական (ավտոմոբիլային, ինքնաթիռային, նավային) ռադիո- և հեռուստակենտրոններ (ինչպես հաստիքային, այնպես էլ հակառակորդից զավթված) համապատասխան հեռարձակման ծրագրերով:

3. **Կինո-, տեսաֆիլմեր, աուդիոնյութեր** և այլ կրիչներ, տեսա- և աուդիոտեղեկատվություն՝ հաշվարկված որպես համոզման համակցում՝ ինչպես համոզմամբ, այնպես էլ ներշնչմամբ ներագրում:
4. Հակառակորդի վրա մարտավարական օպերացիաների շրջանակներում տեղեկատվա-հոգեբանական ներագրման ամենաարդյունավետ միջոցներից է **ձայնահաղորդումը**:
5. Բոսնիայում և Հերցեգովինայում ԱՄՆ զորքերի կողմից խաղաղապահ օպերացիաների շրջանակներում տեղեկատվա-հոգեբանական ապահովման արդյունքները փաստում են **համակարգչային միջոցների բարձրացող դերը** և, առաջին հերթին, գլոբալ համակարգչային ցանցի՝ **համացանցի**, որպես մարդկանց վրա ներագրելու միջոց:
6. Ինչպես երևում է գործնականում, տեղեկատվա-հոգեբանական ներագրման առավել արդյունավետ միջոց է, առաջին հերթին, մարտական գործողությունների շրջանի բնակչության կենցաղը, **ամենօրյա օգտագործման առարկաները**, մասնավորապես՝ սննդամթերքը, խաղալիքները, սպորտային պարագաները և այլն, իհարկե՝ համապատասխան տեղեկատվական ուղեկցությամբ:
7. Հոգեբանական ներագրման համեմատաբար նոր միջոց են, որոնք կարող են լայն կիրառում ունենալ հոգեբանական օպերացիաների պրակտիկայում, **մթնոլորտում հոլոգրաֆիկ և ձայնային էֆեկտները, սինթեզատորները (զենեքատորները)**:
8. Հոգեբանական օպերացիաների իրականացման ժամանակ հակառակորդի բարոյականային ոգին խաթարելու

նպատակով հաճախ օգտագործվում է այնպիսի հզոր միջոց, ինչպիսին է **օգնող գործունեությունը**:

**Նշված միջոցները, որպես կանոն, կիրառվում են զանգվածաբար** և ապահովում են հզորագույն հոգեբանական ներազդեցություն հոգեբանական օպերացիաների օբյեկտների վրա: Այսպիսի ներազդման ծավալների և արդյունավետության վերաբերյալ կարելի է դատել որոշ թվերի օգնությամբ:

Այսպիսով, **հոգեբանական օպերացիաները** հակառակորդի վրա ներազդեցության ինքնուրույն և արդյունավետ տեսակ են, որն իրականացվում է ռազմական նպատակներին հասնելու, բայց ոչ ռազմական միջոցներով:

### **3.2. Տեղեկատվա-տեխնիկական օպերացիաներ**

*Տեղեկատվա-տեխնիկական ներազդեցությունը ծրագրալեկտրոնային ներազդեցության համախումբ է՝ ուղղված հակառակորդի տեղեկատվա-տեխնիկական օբյեկտների գործունեության դադարեցմանը (դժվարացմանը) կամ շարքից դուրսբերմանը որոշակի ժամանակահատվածում*<sup>30</sup>:

Իրանք իրականացվում են տեղեկատվա-տեխնիկական օպերացիաների (հարձակումների) շրջանակներում:

Համարվում է, որ առաջին մեծ հարձակումը, որը բերել է հանգույցի ֆիզիկական վնասվածքի, *Stuxnet* վիրուսի կիրառումն է 2010թ. Իրանի միջուկային ծրագրի դեմ: Վիրուսային համակարգը ներխուժել էր Իրանի Նաթանզի ուրանի հարստացման գործարան և, ազդելով ավտոմատացման համակարգերի վրա,

---

<sup>30</sup> Տե՛ս Ա. Ղալեչյան, «Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում», «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 77:

Ֆիզիկապես վնասել ցենտրիֆուգները: Համարվում է, որ վիրուսը ստեղծվել էր ԱՄՆ և Իսրայելի գաղտնի ծառայությունների միասնական աշխատանքի հետևանքով, և դրա կիրառումը մի քանի տարով հետ էր գցել Իրանի միջուկային ծրագիրը<sup>31</sup>:

Սակայն *Bloomberg* գործակալությունը 2014թ. տարածեց նորություն այն մասին, որ, ամենայն հավանականությամբ, առաջին կիրեռվածների կիրառումը եղել է ավելի վաղ, 2008թ. օգոստոսի 5-ին, երբ Թուրքիայում պայթեցվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը: Մինչև վերջերս համարվում էր, որ այն պայթեցրել էին քրդական զինյալները: Սակայն, *Bloomberg*-ի տվյալներով, պայթյունը եղել է ռուսաստանյան հաքերների գործողության հետևանք<sup>32</sup>:

Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ հաքերներն արդեն իսկ ունակ են հարձակումներ իրականացնել շատ ավելի լուրջ ֆիզիկական համակարգերի վրա: Այսպես, *The Wall Street Journal*-ը տեղեկատվություն էր ստացել, որ 2013թ. իրանական հաքերներին հաջողվել էր ներխուժել Նյու Յորքի ջրամբարի կառավարման համակարգ: Պարզապես հաքերները չեն ցանկացել վնաս հասցնել, չնայած հնարավորություն ունեցել են<sup>33</sup>: Խոցելի են նաև տրանսպորտային մեծ համակարգերը, օրինակ՝ երկաթգծերի կառավարման համակարգերը<sup>34</sup>:

<sup>31</sup> An Unprecedented Look at Stuxnet, the World's First Digital Weapon 11.03.14, <http://www.wired.com/2014/11/countdown-to-zero-day-stuxnet/>

<sup>32</sup> Mysterious '08 Turkey Pipeline Blast Opened New Cyberwar. 10.12.2014, <http://www.bloomberg.com/news/articles/2014-12-10/mysterious-08-turkey-pipeline-blast-opened-new-cyberwar>

<sup>33</sup> Иранские хакеры атаковали дамбу в Нью-Йорке. 21.12.2015, <http://www.securitylab.ru/news/477830.php>

<sup>34</sup> Эксперты: IT-инфраструктура железной дороги уязвима к кибератакам. 24.12.2015, <http://www.securitylab.ru/news/478059.php>

2015թ. դեկտեմբերի 23-ին Ուկրաինայի էլեկտրացանցերը ենթարկվեցին հաքերային հարձակման, որի հետևանքով մի շարք շրջաններում հոսանքազրկումներ եղան: Ուկրաինական հատուկ ծառայությունները համարում են, որ հարձակումն իրականացրել է ռուսաստանյան *Sandworm* հաքերային խումբը՝ *BlackEnergy* վիրուսի միջոցով<sup>35</sup>:

### **3.3. Տեղեկատվական ներագդման օպերացիաներ<sup>36</sup>**

Քսաներորդ և քսանմեկերորդ դարերում համաշխարհային աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ազգային տարաբնույթ ներագդման գործողությունների փորձերը և դրանց արդյունքների գնահատման ակտուալությունը կտրուկ աճել են: Մասնավորապես՝ քսաներորդ դարն ասպարեզ հանեց գաղափարական նոր հենքերի վրա ծնված պետություններ, որոնք կառուցվեցին այլոց հիմնարար գաղափարների ժխտման *գաղափարախոսության վրա*<sup>37</sup>: Իսկ քսանմեկերորդ դարը՝ «նոր որակի տեղեկատվության» ստեղծմամբ, սոցիալական մեդիայի շնորհիվ տրանսֆորմացրեց *գաղափարախոսության* ներկայացման (տեղեկատվության տրման) ողջ համակարգը՝ *բոլորին տրամադրելով «ելույթ ունենալու»՝ արտահայտվելու պոտենցիալ հնարավորություն*: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը ռազմավարական առաջնահերթություն տված առաջադեմ պետությունները հաստատուն քայլերով սլանում են դեպի ապագա, իսկ հետադեմ հայացքներով պարուրված պետու-

---

<sup>35</sup> Хакеры атаковали облэнерго на западе Украины, 29.12.2015, <http://www.securitylab.ru/news/477942.php>

<sup>36</sup> «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», #6 (82) 2018թ.:

<sup>37</sup> Օրինակ՝ կապիտալիզմ – կոմունիզմ:

թյունները «զարմացած» հետևում են նրանց գործունեությանը<sup>38</sup>: Արդյունքում՝ այդ հետադեմ երկրների ինտելեկտուալ պոտենցիալն իրեն տեսնում է զարգացած երկրներում և ամեն կերպ փորձում ինտեգրվել առաջատար պետություններում, այդ թվում նաև Բազմաբնույթ ներազդման օպերացիաների շնորհիվ: Ոչ վաղ անցյալում մարդկության համար գիտելիքը բացարձակ արժեք էր, իսկ հաջողության գրավականն ինտելեկտուալ մարդն էր, սակայն այսօր, չգիտես ինչու, այսպես կոչված ներազդման տարբեր գործողությունների (համամարդկային արժեքային համակարգի խաթարման) շնորհիվ՝ առօրյայում և աշխատանքում «դեպի վեր Բարձրանալու» համար մարդկանց հետաքրքրում են միանգամայն այլ որակներ...

Այսօր աշխարհը լրջորեն պատրաստվում է անդրադարձնել մոլեգնող նոր ներազդման օպերացիաները (գործողությունները), որոնց առաջին շարքերում կանգնած են սոցիալական հարթակները: Ներազդման օպերացիաների շնորհիվ մենք դեկավարվում ենք ավելի լրջորեն և խորքային, քան մեզ թվում է, քանի որ այդ ներազդման ալգորիթմները մեզ սերմանվում են դեռ մանկությունից, երբ մեր վարքագծի մեջ առաջին անգամ ներմուծվում է ներազդվելու (ենթարկվելու, հարմարվելու) հոգեբանությունը: Այդ իսկ պատճառով դրանք մեր մեջ շատ խորն են ներմուծվում և արմատավորվում:

**Ներազդման գործողությունները** տեղեկատվական տիրույթում տարաբնույթ տեղեկատվական գործողությունների համադրման, մասնավորապես՝ վերնագրերի, ուղերձների,

---

<sup>38</sup> Ա.Ղալեյան, Ժամանակակից (տեղեկատվական) աշխարհի դեկավարման թաքնված հնարքները, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» ամսագիր, թիվ 7 (96), 2018թ., էջ 34:

տեղեկույթի միջոցով հասարակությունների տեղեկացման հատուկ խնդիրների լուծմանն ուղղված, թիրախային լսարանների վրա ուղղորդված ազդեցության, որոշակի տեղեկատվական հնարքների համախումբ են: Ի տարբերություն ներազդման գործողությունների, տեղեկատվական օպերացիաներն ունեն կառուցման ավելի բարդ սխեմա, որի մշակումը պահանջում է բազմակողմ և խոր մասնագիտական գիտելիքներ և մոտեցումներ: Մինչդեռ տեղեկատվական ներազդման գործողությունների իրականացմանը մասնակցում են նաև տեղեկատվական ոլորտում մասնագիտական գիտելիքներ չունեցող անձինք, օրինակ՝ բլոգերներ, անհատներ, սոցիալական խմբեր և այլն<sup>39</sup>: Սոցիալական տեղեկատվական հզոր հոսքերը կարող են խոցել և ոչնչացնել ամեն ինչ՝ շրջանցելով ցանկացած տիպի պաշտպանություն: Ինչպես պարզվում է, գաղտնի ղեկավարվող «ինդուստրիալ» ներազդեցությունը կարող է խառնվել (միջամտել) ցանկացած սոցիալական պրոցեսի: Ներկայում բոլորս հիմնվում ենք տեղեկատվական հարձակողական և պաշտպանողական օպերացիաների ներազդեցությունների կուտակված արդի փորձի վրա: Սակայն ներազդման օպերացիայի առանձնահատկություններից են դրանց բնույթի անկանխատեսելիությունը և անսպասելիությունը, քանի որ դրանք մշտապես թարմացվում են և ենթարկվում բազմապիսի փոփոխությունների:

**Ներազդման օպերացիան** դասակարգվում է որպես «փափուկ» օպերացիայի ձև, որն իրականացվում է հատուկ ձևերով ու միջոցներով և սփռված է ժամանակի մեջ: Այդ օպերացիան լավ մտածված և ծրագրված գործողությունների համակարգ է,

<sup>39</sup> Տես՝ Ա. Ղալեչյան, Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում, «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 50:



որում կարող են ներգրավված լինել մեծ քանակությամբ մարդիկ և կառույցներ: Ներագրման օպերացիաների իրականացումն անհամեմատ հեշտացավ սոցմեդիայի ի հայտ գալով, քանի որ դյուրինացան պետական հաղորդագրությունների առաքման հնարավորությունները մեծաքանակ մարդկային զանգվածներին, որոնք նույնիսկ չեն կասկածում, որ նրանք ուրիշի խաղաղաշտում հանդես են գալիս «զինվորիկի» դերում: Հետագայում, արդեն խորանալով այդ խաղի մեջ, հենց իրենք են ինքնակամ տարածում (դառնալով համապատասխան գործիք) անհրաժեշտ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է հստակեցնել տեղեկատվական օպերացիայի և ներագրման օպերացիաների տարբերությունները: Հիմնական տարբերությունը, որից բխում է մնացյալը, բաղկացած է տարաբնույթ ներագրեցության օբյեկտներից: Տեղեկատվական օպերացիաներն ազդում են անհատական գիտակցության, իսկ ներագրման օպերացիաները՝ զանգվածային գիտակցության վրա: Քանի որ տեղեկատվական օպերացիան «գորքերի (ուժերի) մարտական և հատուկ գործողությունների, համակցված հնարքների համաձայնեցված կիրառումն է»<sup>40</sup>, այստեղից կարելի է ենթադրել, որ տեղեկատվական օպերացիաների գլխավոր պատվիրատու կարող են լինել զինված ուժերը (զինվորականները), իսկ ներագրման օպերացիաներինը՝ «պետությունը» (քարոզիչները, քաղաքական գործիչները, քաղաքական կուսակցությունները): *Մակայն լինում են իրավիճակներ, երբ այդ դերակատարների տեղերը փոխվում են և, որպես հետևանք, մենք ունենում ենք ռազմական քարոզիչներ, որոնք առավելապես աշխատում են երկրի բնակչության հետ*<sup>41</sup>:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 78:

<sup>41</sup> Օրինակ՝ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Ս. Օհանյանը և այլք:

Համացանցի, այնուհետև՝ սոցիալական մեդիայի ստեղծմամբ ողջ աշխարհը կանգնել է բարդ խնդրի առաջ, այն է՝ «խափանվել» է հասարակության կողմից տեղեկատվության ստացման համակարգը: Իրականացվել է տեղաշարժ՝ օբյեկտիվ տեղեկացումից դեպի ուղղորդված (գնահատողական և վերլուծական) տեղեկացում, ինչի հետևանքով մենք ներկայումս մեր շրջապատը տեսնում ենք այն մարդկանց աչքերով, ովքեր մեզ պատմում են շրջապատող մարդկանց և իրադարձությունների մասին: Աշխարհը այն չէ, ինչ տեսնում ենք մեր առջև, այլ այն, ինչ մեզ պատմում են նրա մասին: Ուստի, ստեղծվել է պարադոքսալ իրավիճակ, օրինակ՝ իշխանությունները պայքարում են նրանց դեմ, ովքեր իրենց քննադատում են պետական վարկային դրամական միջոցներն աննպատակ վատնելու մեջ, այլ ոչ թե նրանց դեմ, ովքեր այդ միջոցները պետք է ծախսեին ի շահ պետության:

Այդ նախախնամությունը նպատակ ունի ծառայել քաղաքական, տնտեսական և ռազմական ներագդման ուժեղացմանը, քանի որ տեղեկատվությունն ընկալվում է որպես կարևոր գործոն հիֆրիդային պատերազմի (ներագդման) ոլորտում: Օնլայն (Live) տեղեկատվական բաղադրիչի նպատակներից է վեճերի և վիճաբանությունների հրահրումը, որպեսզի ավելացվի հասարակության բևեռվածությունը: Եվ այդ նպատակին հասնելու համար աշխատեցնում են անհրաժեշտ բոլոր «տաք»՝ քննարկվող թեմաները<sup>42</sup>:

Չարգացող երկրների որոշ ռազմական ղեկավարներ վերջապես հասկացել են, որ տեխնոլոգիական զարգացումը լուրջ հետևանքներ է ունեցել զարգացած պետությունների այնպիսի

<sup>42</sup> Ռուսական հեռուստատեսությամբ, օրինակ, ամեն օր ուղիղ եթերով հեռարձակվող «Время покажет» և «60 минут» լրատվական վերլուծական հեռուստահաղորդաշարերը:

զգայուն ոլորտի վրա, ինչպիսին ռազմականն է<sup>43</sup>: Տեխնոլոգիական զարգացման հետևանքներից (*«բացասական արդյունքներից»*) է այն, որ աշխարհն այլևս այն չէ, ինչ մենք տեսնում ենք, այլ այն հորինված (երևակայական) մտապատկերը, ինչը մեզ «հարկադրաբար սերտել» է տալիս վիրտուալ իրականությունը, արդյունքում՝ աշխարհը մեր ժամանակներում դեկավարվում է աշխարհի «տեսապատկերով»: Աշխարհի արդի տեսապատկերի կառուցվածքային և բովանդակային փոփոխությունները մանրակրկիտ ուսումնասիրվում են նաև ժամանակակից բանականների (զինվորականների) կողմից: *Ժամանակակից բանականների (զինվորականների) համար աշխարհաքաղաքական փոփոխություններում, հատկապես տեղեկատվական տարածությունում ներգրավվածությունը մեր պրոֆեսիոնալ գործունեության մի մասն է, քանի որ այդ փոփոխությունները կարող են ապահովել իրական հաղթանակ*: Դրա վերաբերյալ գոյություն ունի ԱՄՆ ռազմաօդային ուժերի գնդապետ Ջոն (Ռիչարդ) Բոյդի տեսությունը<sup>44</sup>, այսպես կոչված՝ Բոյդի «շրջանը», որը ներառում է հետևյալ քայլերը՝ դիտարկում, կողմնորոշում, որոշում, գործողություն և սեփական տեղեկատվական օպերացիաներում հակառակորդի ռեֆլեկտիվ դեկավարում<sup>45</sup>: Մենք (զին-

<sup>43</sup> ԱՄՆ, ՉԺՀ, ՌԴ և այլ առաջադեմ բանակներում ստեղծվել են տեղեկատվական (կիրեռ) պատերազմների վարման գորքեր և ստորաբաժանումներ, բազաներ, իսկ ՌԴ-ն պաշտոնապես հայտարարել և ձեռնամուխ է եղել **տեղեկատվական գործողությունների գորատեսակի** ստեղծմանը:

<sup>44</sup> Տե՛ս Макаренко С.И., Информационное противоборство и радиоэлектронная борьба в сетевых войнах начала XXI века. Монография, СПб., Научные технологии, 2017, с. 240.

<sup>45</sup> Տե՛ս Ա.Ղալեյան, Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում, «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 56: «Հակառակորդի նկատմամբ ռեֆլեկտիվային վերահսկողությունն այն է, որ հակառակորդն ընդունի կոմունիկատորի տեսանկյունից ճիշտ որոշում, որն անհրաժեշտ է ոչ թե հակառակորդին, այլ կոմունիկատորին»:

վորականները) մեծ ուշադրություն ենք դարձնում, թե ինչպես կրնակալի հակառակորդը կոմունիկատորի կողմից (յուրային գորքերից, ուժերից) տրամադրված իրադրությունը, քանի որ այդ ընկալումը հաճախ լինում է իրավիճակին ոչ համարժեք: Ինչպես տեսնում ենք, մենք պետք է ունենանք ոչ միայն մեր սեփական թշնամին, այլև նրան ներկայացնենք սարսափելի հրեշ<sup>46</sup>: Տեղեկատվա-սոցիալական համակարգերում այդպիսի թշնամու առկայությունը նշանակում է մարդկային մեծ զանգվածների համախմբում (հավաքում), հետևաբար՝ այդ զանգվածների ծածուկ կամ ակնհայտ դեկավարում: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ թեկուզ այդ համակարգը կորցնում է իր դեմոկրատական սկզբունքները, սակայն այն արտաքին թշնամու հանդեպ դառնում է ավելի համախմբված և ուժեղ: Հենց թշնամու առկայությունն էլ ապահովում է վերոնշյալ համակարգի նկատմամբ այդ արտաքին ազդակները: Բացի այդ, մենք հակառակորդի համար (ստեղծում) տեղադրում ենք որոշակի թակարդներ, որպեսզի «օգնենք» նրան թույլ տալ բազմաթիվ սխալներ: Դրանցից հիմնականներն են<sup>47</sup>.

- **Խայծ.** հակառակորդը նկատում է իր համար հարմար իրավիճակ, որն իրականում ավելի նպաստավոր է հենց յուրային կողմի համար: Օրինակ՝ «կանխամտածված տեղեկատվության արտահոսքի» արդյունքում հակառակորդը «հայթայթում է» տեղեկատվություն, որի մասին հակառակորդն անպայման կցանկանա կիսվել ուրիշի՝ մեզ համար հարմար իր դաշնակցի հետ:

<sup>46</sup> Տե՛ս Ա. Ղալեչյան, Տեղեկատվության՝ որպես հզոր զենքի թերընկալման հետևանքները, «Նորավանք» ԳԿՀ, «Գլոբուս» ամսագիր, թիվ 2 (91), 2018թ., էջ 35:

<sup>47</sup> [http://ms.detector.media/monitoring/advocacy\\_and\\_influence/feyki\\_i\\_dezinformatsiya\\_kak\\_manipulyativnyy\\_instrumentariy/](http://ms.detector.media/monitoring/advocacy_and_influence/feyki_i_dezinformatsiya_kak_manipulyativnyy_instrumentariy/)

- **Կրկնություն**, որի ժամանակ ոչ վտանգավոր գործողությունները կրկնվում են, որպեսզի շեղեն հակառակորդին վտանգավոր գործողություններից, իսկ առաջին տարբերակի հետ տարբերությունն այն է, որ առաջին տարբերակում հակառակորդն իրականացրել է ինչ-որ քայլեր, իսկ այս տարբերակում նա պետք է խուսափի քայլեր կատարելուց: Օրինակ՝ մեր կողմից պարբերաբար իրականացվող տեղեկատվական բացասական «արտահոսքերի» արդյունքում հակառակորդի մոտ պատրանք է ստեղծվում, որ մեզ մոտ «արմատական փոփոխություններ են» իրականացվում, որը ձեռնտու է հենց իրենց և հարկավոր է սպասել մինչև դրանց ավարտը:
- **Զմտադրված սխալ**. հակառակորդը պետք է հավատա, որ այն արժեքավոր տեղեկատվությունը, որն իր ձեռքն է ընկել, պատահաբար է: Օրինակ՝ հակառակորդի հատուկ ծառայությունները սոցցանցերի օգնությամբ «պատահական» օգտատիրոջից «մեծ դժվարությամբ հայթայթում են» գաղտնիք պարունակող տեղեկատվությունը, որը շատ արժեքավոր է:
- **Կանխատեսվող որոշում**. տրամադրվում է կեղծ տեղեկատվություն կանխատեսվող որոշման օգտին, որպեսզի թաքցնեն իրական որոշումը: Օրինակ՝ սոցցանցերի և մեդիայի օգնությամբ կեղծ լուրերի տարածմամբ «զրգռում» են թշնամի երկրի քաղաքական գործիչներին՝ մղելով նրանց «սեփական նախաձեռնությամբ» առաջին ընթերցմամբ ընդունել «համապատասխան» օրենքի նախագիծը:
- **Անհաջողություն**. հակառակորդը չի կարողանում բացատրություն տալ սեփական անհաջողությանը (որովհետև

**չմտադրված սխալի** օգնությամբ հայթայթված «արժեքավոր» տեղեկատվությունը կեղծ էր), քանի որ գործողությունների հիմքում ընկած տեղեկատվությունը սխալ էր:

Հետաքրքիր է, երբ առաջարկվում է տեղեկատվությանը վերաբերվել տեղեկատվական պատերազմի համատեքստում, որտեղ տեղեկատվությունը կարող է հանդես գալ որպես զենք և կամ՝ որպես թիրախ<sup>48</sup>: Իսկ հակառակորդը, ստանալով տեղեկատվությունը, պետք է ընտրություն կատարի, թե որն առավել ձեռնտու կլինի հարձակվող կողմի համար: Այսինքն՝ նրան են պարտադրում այն աշխարհի մոդելը, որը մի կողմի համար նպատակահարմար է և, հետևաբար՝ անհարմար մյուս կողմի համար: Բնականում իրականությունը (իրականը, ռեալը) միշտ գտնվում է առաջին տեղում, տեղեկատվությունը՝ երկրորդ: Սակայն այսօր մենք հաճախ բախվում ենք այնպիսի (ֆորսմաժորային) իրավիճակների, երբ տեղեկատվությունը գրավում է առաջին տեղը, իսկ իրականությունը՝ երկրորդ<sup>49</sup>: Ականատես ենք մի հետաքրքիր իրավիճակի, որտեղ պատկերների (նկարների) տեսքով տեղեկատվությունն ավելի մեծ ներազդեցություն է գործում մարդկանց վրա<sup>50</sup>, մասնավորապես՝ հակառակորդի կողմից ցուցադրվող ժամանակակից զենքը և զինամթերքը, չնայած դրանք իրականում կարող են կեղծ, նմանակում, խաբկանք լինել (օրինակ՝ տպված լինեն 3D տպիչով և այլն): Վերլու-

---

<sup>48</sup> Ա. Ղալեչյան, Տեղեկատվության՝ որպես հզոր զենքի թերթնկալման հետևանքները, «Նորավանք» ԳԿՀ «Գլոբուս» ամսագիր, թիվ 2 (91), 2018թ.:

<sup>49</sup> Տե՛ս Ա. Ղալեչյան, Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում, «Նորավանք» ԳԿՀ, 2016, էջ 57:

<sup>50</sup> Օրինակ՝ Հյուսիսային Կորեայի կողմից ամբողջ աշխարհին պարբերաբար ցուցադրվող միջուկային մարտազինիկների տեսապատկերների «սարսափագրու» տեսաշարերը:

ծելով վերոնշյալը՝ կարելի է արձանագրել հետևյալ փաստը, որ ծնվել է նոր ֆեյթի տեսակ՝ նկարի տեսքով: Այդպիսի ֆեյթերը սպառողների աչքերում «ներկայանում» են իրականության և ճշմարտացիության ավելի մոտ հնարավորություններով: Տեղեկատվությունը, որը կապված չէ իրականության հետ, անընդհատ լցնում են չդադարող տեղեկատվական հորձանուտը, որտեղ տեղեկատվությունը և իրականությունն իրար չեն հանդիպում կամ հանդիպում են հազվադեպ: Բազմաթիվ մարդիկ բավական երկար ժամանակ են վատնում այդպիսի արհեստական իրականության հարթությունում՝ խորասուզվելով այդ տեղեկատվական և վիրտուալ աշխարհի անդունդները: Մեր՝ զինվորականներիս համար սկզբունքորեն պարզ է, թե ինչ է նշանակում հակառակորդին մոլորության մեջ գցելը<sup>51</sup> և ինչպես դրան հասնել, քանի որ զինված ուժերում դրա ուղղությամբ աշխատում է մասնագետ սպաների արդեն մի քանի սերունդ:

*Ակնհայտ է, որ յուրաքանչյուր երկրի զինժառանգող պարտավոր է պաշտպանել իր երկիրը, իսկ այդ երկրի քաղաքացին՝ շենացնել այն: Եվ այդ երկիրը պետք է առաջնահերթ կարողանա դեկավարել իրեն վերաբերող տեղեկատվության տարածումը, այլ ոչ թե հենց տեղեկատվությունը:* Խոսքի ազատությունն, ըստ էության, պաշտպանում է մարդու ինքնարտահայտման ազատությունը՝ ոչինչ չասելով ճշմարիտի և ստի մասին: Հետզհետե ճշմարիտի խնդիրը դառնում է վստահության հիմնախնդիր, և դա իրականում այդպես է, քանի որ ֆեյթերը բնական ճանապարհով տարածում են նրանք, ովքեր դրանց հավատում են: Տեղեկատվական իրականությունը, վիրտուալ իրականու-

<sup>51</sup> Օրինակ՝ ԶՈւ-ում իրականացվող մարտավարական, օպերատիվ մարտավարական և ռազմավարական քողարկման միջոցառումները:

թյունը և փաստացի իրականությունը (ռեալը) կազմում են բուրգ, և դրա գագաթին դրանք պարտադիր չէ, որ համապատասխանեն միմյանց: Պետության համար տեղեկատվական և վիրտուալ տարածությունները կարևոր արժեք են, քանի որ թույլ են տալիս ղեկավարել հասարակական գիտակցության երկու կարևոր բաղկացուցիչ՝ անցյալի և ապագայի վերաբերյալ պատկերացումներով: Վերջինիս դեպքում խոսքը նաև օրվա տեղեկատվական լրահոսի մասին է, որը թույլ է տալիս ուշադրությունը սևեռել մի տեղեկույթի վրա՝ դրանով իսկ «խոչընդոտելով» մնացյալին<sup>52</sup>:

«Քառասյին և աղմկաշատ» մեր աշխարհում ու հատկապես մեր ժամանակներում, երբ տեղեկատվական և վիրտուալ հոսքերի ընկալման և մշակման ունակությունները մարդկային հնարավորություններից վեր են, հարկավոր են համապատասխան հուշումներ (ծածկագրեր), որոնք մարդկությանը միշտ ուղեկցել են հնագույն դարերից՝ ասույթների տեսքով, մինչև ժամանակակից հեռուստասերիալները<sup>53</sup>: Մենք բոլորս մեր աշխարհընկալման վիրտուալ ուժեղացման կարիք ունենք, քանի որ հաճախ շրջապատված ենք իրադարձություններով, որոնց ընկալումն այդքան էլ հեշտ բան չէ (ընկալման տեսակետից): Իր հերթին, դա դառնում է քողարկված գործողությունների տեսության զարգացման պատճառ, որոնց քանակը վերջին ժամանակներս աննախադեպ աճել է: Քողարկված գործողություններն այս առումով դառնում են «տեղեկատվության հաջողված ներմղում» վիրտուալ միջավայր, որը նրան այդքան պակասում էր: Այդ

---

<sup>52</sup> Ա. Ղալեչյան, Նորագույն տեղեկատվական մեխանիզմների և մեդիա-հնարքների միջոցով ԶՈՒ անձնակազմի գիտակցության վրա ներազդելու որոշ հարցեր, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱԸ», #6 (76) 2017, էջ 19:

<sup>53</sup> Տե՛ս նույն տեղում:



պակասին ի պատասխան, անհատ անձինք իրենք են ստեղծում իրենց անհատական վիրտուալ միջավայրը և տարածքները:

Ժամանակակից աշխարհի բարդ լինելը մեր գլխում ծնում է քաոս, իսկ առաջացած քաոսը էլք է փնտրում կոնսպիրոլոգիայի մեջ: Կոնսպիրոլոգիան բացահայտ հարձակողական տեղեկատվական աջակցման գործողությունների համախումբ է՝ ուղղված ժամանակակից աշխարհակառուցվածքի ներկա տեսքի ապահովմանը: Բնականաբար, դրա արդյունքում մեր ուղեղները չեն կարողանում դիմակայել այն ամենին, ինչ կատարվում է մեր շրջապատում, քանի որ սկսել ենք տեսնել ավելին, բայց քիչ հասկանալ՝ մոտենալով գիտակցված ընկալման ինչ-որ կրիտիկական աստիճանի: Իսկ չկա՞ արդյոք վտանգ, որ մեր ուղեղները չեն կարող դիմանալ այդպիսի աննորմալ ու անմարդկային ծանրաբեռնվածությունների: Համացանցն աշխարհին տվել է ներազդման նոր գործիքակազմ: Ցավոք, այդ ներազդման գործիքակազմի տարրերի մեծ մասը մեզ համար աննկատ է, դրանց գործունեությունը բացահայտվում է բավական ուշ: Ծայրահեղ դեպքերում դրանց գործնական կիրառումը մեզ համար ընդհանրապես անհասանելի է, քանի որ դրանք շարժվում են իրենց համար նախանշված գաղտնի սողանցքներով:

### ***3.4. Քողարկման միջոցառումներ***

Յուրային տեղեկատվական համակարգերի անվտանգության պահպանման համար կարող են կիրառվել հետևյալ ձևերն ու եղանակները.

- **օպերատիվ և ռազմավարական քողարկում,**
- տեղեկատվական ենթակառուցվածքի օբյեկտների ֆիզիկական պահպանություն,

- ապատեղեկատվություն,
- ռադիոէլեկտրոնային պայքար և այլն:

Հարձակողական կամ հարվածային մասի համար կարող են կիրառվել հետևյալ ձևերն ու եղանակները.

- **օպերատիվ և ռազմավարական քողարկում,**
- տեղեկատվական ենթակառուցվածքի օբյեկտների ֆիզիկական պահպանություն,
- ապատեղեկատվություն,
- ռադիոէլեկտրոնային պայքար և այլն,
- «գրոհներ» հակառակորդի համակարգչային ցանցի վրա,
- «տեղեկատվական ազդեցություն», «տեղեկատվական ներխուժում», «տեղեկատվական հարվածներ»:

Պետությունների զինված ուժերի հազեցումը հետախուզության տարբեր միջոցներով, գերձշգրիտ զենքով, հակառակորդի տարածքում արտասահմանյան հատուկ ծառայությունների գործունեությունն օբյեկտիվորեն բարձրացնում են օպերատիվ քողարկման նշանակությունը, որն ուղղված է գորքերի հանկարծակի գործելու նվաճմանը և նրանց կենսունակության բարձրացմանը:

Քանի որ օպերատիվ քողարկման նշանակությունը՝ որպես կազմակերպչական, ռազմատեխնիկական միջոցառումների և պրակտիկ գործողությունների համալիր, ուղղված է հակառակորդին խաբելուն, ապա այսօր անհրաժեշտ է այդ հարցին հատկացնել ամենամեծ ուշադրությունը:

Ժամանակակից պայմաններում, երբ հակամարտող կողմերն ունեն հնարավորություն վարել հետախուզություն գորքե-

րի օպերատիվ շարվածքի ամբողջ խորությամբ, առանց հակառակորդին մոլորության մեջ գցելու մարտական գործողություններում հանկարծակիության հասնելը դարձել է գրեթե անհնարին: Արդյունքում՝ հակառակորդի կրակային խոցման եղանակները, դրա հաջորդականությունը և նրա ջախջախումը սերտորեն կապված են նրան մոլորության մեջ գցելու միջոցառումների իրականացման հետ: Այդ պատճառով ռազմական գիտությունը հանգել է օբյեկտիվ եզրակացության, այն է՝ օպերացիայի մտահղացման մեջ այդ հարցերի միավորման անհրաժեշտությանը:

Ելնելով նշվածից՝ ժամանակակից պայմաններում բարձրացել են քողարկման դերը և նշանակությունը: Համաձայն դեկավար փաստաթղթերի՝ *քողարկումը* սահմանում են որպես միջոցառումների և գործողությունների համալիր, որոնք ուղղված են յուրային զորքերի խմբավորումների կազմի, դրության, նախատեսվող օպերացիայի մտահղացման վերաբերյալ հակառակորդին մոլորության մեջ գցելուն՝ զորքերի կենսունակությունը բարձրացնելու և նրանց գործողությունների հանկարծակիության հասնելու նպատակով:

Այդ նպատակներին հասնում են երկու խնդիրների լուծմամբ.

1. զորքերի գործողությունների ծածուկության ապահովմամբ,
2. հակառակորդին մոլորության մեջ գցելու միջոցառումների կատարմամբ:

*Ծածուկության* հիմնական եղանակներից մեկը հակազդեցությունն է հակառակորդի հետախուզությանը: Ուղղություններից մեկը, օպերատիվ քողարկման շրջանակներում, հակազդեցությունն է հակառակորդի հետախուզության տեխնիկական

միջոցներին (ՀՀՏՄ), այսինքն՝ հետախուզությանը, որը վարվում է տարբեր սարքավորումների կիրառմամբ (օպտիկական, ռադիոէլեկտրոնային, ակուստիկ, ռադիացիոն և մագնիսամետրային հետախուզություն):

Կառավարման յուրաքանչյուր օղակում ապակազմակերպման, նմանակման և ցուցադրական գործողությունների հետ մեկտեղ օպերացիայի նախապատրաստման և վարման ընթացքում անհրաժեշտ է լուծել հակառակորդի հետախուզության հակազդմանն ուղղված որոշակի խնդիրներ: Ակնհայտ է, որ հակառակորդին խաբելու նշված եղանակներից ոչ մեկը նրան չի մոլորեցնում, միայն, ելնելով կոնկրետ իրադրությունից, որոշ չափով նպաստում է դրա բարենպաստ պայմանների ստեղծմանը: Այդ պատճառով դրանք պետք է կիրառվեն համալիր և պահանջվող ծավալով, արտացոլվեն օպերացիայի մտահղացման մեջ, որովհետև դրանցից որևէ մեկի բացակայությունը կարող է նվազեցնել հակառակորդին մոլորության մեջ զգելու հավանականությունը:

Հակառակորդին մոլորության մեջ զգելու հիմնական եղանակներն են.

1. ապատեղեկատվությունը,
2. ցուցադրական գործողությունները,
3. նմանակումը:

*Ապատեղեկատվությունն* իրականությանը չհամապատասխանող տվյալների տարածումն է գորքերի կազմի, վիճակի, դրության, մարտունակության և մարտական պատրաստակունության, նրանց խմբավորումների, գործողությունների բնույթի և եղանակների, հրամանատարության պլանների և մտադրու-

թյունների, օբյեկտների, սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՄՌՏ) նախորոշման և վիճակի վերաբերյալ:

Ապատեղեկատվությունը կարող է իրականացվել հետևյալ հնարքներով.

- հակառակորդին կեղծ փաստաթղթեր հասցնելով,
- կեղծ տեղեկատվության փոխանցմամբ գործող կամ հատուկ ստեղծված կապուղիներով՝ հակառակորդի կողմից այն որսալու հաշվարկով,
- ԶԼՄ-ի միջոցով գորքերի և բնակչության մեջ գորքերի գործողությունների կեղծ տվյալների տարածմամբ,
- մանրակրկիտ կազմակերպված (կանխամտածված) տեղեկատվության հոսքով,
- հակառակորդ կողմում լրտեսների տեղափոխմամբ, կեղծ տեղեկատվությամբ, գերիներին հետ ուղարկելով և այլն<sup>54</sup>:

*Ցուցադրական գործողությունները* հատուկ ուժերով և միջոցներով հակառակորդի ակտիվ գործողությունների կանխամտածված ցուցադրումն են՝ նրա ապակազմակերպման և իրական մտադրությունները թաքցնելու համար:

Ցուցադրական գործողությունները միշտ չէ, որ նպատակահարմար է անցկացնել զորախմբավորումների կամ առանձին զինվորական կազմավորումների միջոցով, որոնք ըստ սցենարի գործում են կանխամտածված, ու քանի որ հետագայում այդ գոր-

<sup>54</sup> Օրինակներ. ռուս-վրացական հակամարտության ժամանակ ռուսական կողմն իրականացրել է գործակալական ապատեղեկատվություն՝ ավիացիոն միավորումների և զորամասերի վերատեղակայման և դրանց նպատակների վերաբերյալ: Կամ 2008թ. մայիսից մինչև հունիս վրացական կողմը ԶԼՄ բոլոր միջոցներով ազդարարում էր Աբխազիայի տարածքի վրայով ԱՕԹՄ թռիչքների մասին, ինչը ստիպում էր Աբխազիայի հրամանատարությանը ուժերի և միջոցների 1/3-ը պահել բարձր մարտական պատրաստականության վիճակում՝ սպասելով հարվածի ծովից:

ծողությունները դժվար կլինի ծածուկ պահել հակառակորդից, հետևաբար՝ նա ձգտելու է մշտապես հետևել այդ խմբավորումներին և փորձել խոցել գերճշգրիտ զինատեսակներով: Այդ պատճառով ցուցադրական գործողություններն առավել արդյունավետ են թույլ հակառակորդի դեմ, որը չունի ժամանակակից գերճշգրիտ զենք: Առանձին պայմաններում դրանք անցկացվում են ոչ թե մոլորության մեջ գցելու (խաբեության) նպատակով, այլ իրականում ուժի կիրառման սպառնալիքի բաց ցուցադրման համար:

Ցուցադրական գործողությունները կարող են իրականացվել հետևյալ հնարքներով.

- ԶՈւ միավորումների, զորամասերի գործողությունների ցուցադրումը հիմնական ջանքերի կենտրոնացման և հակահարվածների կեղծ ուղղություններում,
- հետախուզության ակտիվացմամբ, զորքերի գործողությունները կեղծ ուղղություններում,
- բնակչության տարհանումը և նրա ընդգրկումը կեղծ շրջաններում տեղանքի ինժեներական կահավորման համար:

Ցուցադրական գործողությունները նպատակահարմար է պլանավորել և իրականացնել կարճ ժամկետում՝ ապահովելով դրանց համոզչության բարձրացման ուղիները և հետագայում հակառակորդի հետախուզության արդյունավետ հակազդումն ու այդ գործողություններին մասնակցող ուժերի և միջոցների ապահով ծածուկությունը<sup>55</sup>:

---

<sup>55</sup> Օրինակ՝ Սուխում-Օչամչիրա երկաթուղու տեղամասի նախապատրաստման քողի տակ ՌԴ ԶՈւ երկաթգծային զորքերը 1992-1994թթ. մայիսի 31-ից մինչև հուլիսի 30-ը իրականացրել են երկաթգծի վնասված տեղամասի վերականգնողական աշխատանքներ: Այդ ընթացքում վերականգնվել են երկաթգծի ավելի քան 50 կմ, 20 կամուրջ և թունել:

*Նմանակումը* ապաքողարկիչ հատկությունների ճշմարտացի վերարտադրությունն է, որը բնորոշ է գորքերի (օբյեկտների) իրական գործողություններին՝ նմանակման սարքերի, ռադիոտեխնիկական կառուցվածքների օգտագործմամբ ռադիոէլեկտրոնային իրադրության, կեղծ շինությունների և օբյեկտների, ռազմական տեխնիկայի մանրակերտների ստեղծումը:

Ժամանակակից պայմաններում հակառակորդի ՀՀՏՄ-ի հետ մեկտեղ լայնորեն կիրառվում է ապակազմակերպումը: Բավական դժվար է հակառակորդին մոլորության մեջ գցել *նմանակման* եղանակով, քանի որ դրա համար նախատեսված առկա և ստեղծվող միջոցները թույլ չեն տալիս համոզիչ վերարտադրել օբյեկտների հետախուզական հատկանիշները:

Նմանակումն իրականացվում է հետևյալ հնարքներով.

- պաշտպանական բնագծերի, դիրքերի, ինժեներական արգելափակոցների և այլ օբյեկտների կահավորմամբ և կեղծ նմանակմամբ,
- պաշտպանությունում հիմնական ջանքերի կենտրոնացման կեղծ ուղղությամբ գլխավոր խմբավորման ստեղծման նմանակմամբ,
- գորքերի տեղակայման շրջանների պարբերական փոփոխությամբ՝ ցուցադրելով նրանց գործողությունները թողնված շրջաններում,
- կեղծ ռադիոէլեկտրոնային իրադրության ստեղծմամբ և կեղծ շրջաններում ղեկավարման կետերի աշխատանքի նմանակմամբ:

Ինչ վերաբերում է գործնականում խաբեության համալիր կիրառմանը, ապա ժամանակակից պայմաններում անթույլա-

տրելի է հեշտացված մոտեցում նրանց էությանը, նշանակությանը և, ամենագլխավորը, կազմակերպման մեթոդներին ու իրականացման եղանակներին: Հաշվի առնելով նպատակների կարևորությունը, միջոցառումների մեծ ծավալը, նրանց անցկացման դժվարությունը, բավական մեծ քանակի ուժերի և միջոցների ընդգրկվածությունն օպերացիայի մտահղացման մեջ՝ անհնար է բացել հակառակորդին մոլորության մեջ գցելու միջոցների ամբողջ համալիրը: Այստեղ սահմանվում են միայն ընդհանուր գաղափարները և կառավարման բոլոր օղակների համար խաբեության գործողությունների միասնական ուղղվածությունը: Հակառակորդին խաբեության մեջ գցելու կոնկրետ եղանակները պետք է արտացոլվեն համապատասխան պլաններում և զորքերի խնդիրներում: Մասնավորապես, ապակազմակերպման համար պահանջվում է սահմանել կեղծ տվյալների ընդհանուր և մանրակրկիտ (յուրաքանչյուր մակարդակի կամ միջոցի համար) բովանդակությունը, ինչպես նաև հակառակորդին դրանց հասցման կարգը և եղանակները (կեղծ կառավարման կետերի աշխատանքը, կեղծ փաստաթղթեր գցելը, համակարգչային ցանցում կեղծ էլեկտրոնային տեղեկատվության ընդգրկումը և այլն):

Ինչ վերաբերում է *նմանակմանը*՝ անհրաժեշտ է սահմանել ինչը, որտեղ և ինչ միջոցներով նմանակել, ինչպես ապահովել նրա ճշմարտացիությունը<sup>56</sup>:

Օպերատիվ քողարկման միջոցառումների *պլանավորումը* պետք է իրականացվի վերևից ներքև՝ այն հաշվարկով, որ հակառակորդին մոլորության մեջ գցելու ենթակա օղակների

---

<sup>56</sup> Օրինակ՝ «Փոթորիկ անապատում» գործողության ընթացքում հակառակորդին մոլորության մեջ գցելու նպատակով լայնորեն կիրառվել են քողարկման լրակազմեր, այդ թվում ՄՌՏ հիմնական տեսակների և համակարգերի նմանակները:



պլաններն ապահովեն և աջակցեն վերադաս հրամանատարության նմանատիպ պլաններին:

Վերադաս օղակում այն նախատեսում է ամենացածր մակարդակի զորամասերի և ստորաբաժանումների օգտագործումը, չնայած նրանց հրամանատարները և անմիջական պետերը կարող են չիմանալ ընդհանուր պլանի միջոցառումների բովանդակությունը:

Օպերատիվ քողարկման միջոցառումների անցկացման հաջողությունը որոշակիորեն կախված է *հետախուզական ապահովման* արդյունավետությունից: Այս դեպքում հետախուզությունն իրականացնում է հակառակորդի օբյեկտների բացահայտումը, որոնց նկատմամբ մտադրվում են այդ գործողությունները, օգնություն է ցուցաբերում ապակազմակերպման համար ճշմարտացի տարբերակի մշակման գործում, որն առաջարկվում է ապակազմակերպման համար:

**Օպերատիվ քողարկմանը ներկայացվող պահանջներն են** (ինչպիսի՞ն պետք է լինի օպերատիվ քողարկումը).

1. *Անընդհատությունը* բխում է հակառակորդի կողմից անընդհատ հետախուզության վարումից և արտացոլվում է զորքերի ծածուկ գործողությունների նվաճման և ցանկացած իրադրությունում հակառակորդին մոլորության մեջ գցելու միջոցառումների իրականացմամբ:
2. *Ակտիվությունն* ազդեցությունն է հակառակորդի հետախուզության վրա՝ հատկացված ուժերով և տեխնիկական միջոցներով:
3. *Համալիրությունն* արտացոլվում է ըստ նպատակների, խնդիրների, տեղի և ժամանակի օպերատիվ քողարկման

համաձայնեցված հնարքների և եղանակների հմուտ զուգակցմամբ՝ օպերացիայի միատեսակ մտահղացման և պլանի հիման վրա:

4. *Համոզչությունն* իրադրության այնպիսի պայմանների ստեղծման և միջոցառումների անցկացման համապատասխան միջոցների և մեթոդների ընտրությունն է, որի ընթացքում նրանք իրենց հատկանիշներով հակառակորդի հետախուզության կողմից ընկալվում են որպես իրական:
5. *Տարատեսակությունը* նախատեսում է օպերատիվ քողարկման եղանակների և միջոցառումների ընտրման ընթացքում որևէ շաբլոնի բացատրությունը:
6. *Տնտեսական նպատակահարմարությունն* օպերատիվ քողարկման այնպիսի միջոցների և եղանակների ընտրությունն է, որոնք պահանջում են ընդունելի ծախսեր՝ համաձայն առաջադրված արդյունավետության:

Դիտարկենք օպերատիվ քողարկման միջոցառումների բովանդակությունը զորքերի ծավալման, վերախմբավորման և պաշտպանության օպերացիայի վարման ընթացքում:

**ա) Օպերատիվ քողարկման միջոցառումների բովանդակությունն օպերատիվ ծավալման ընթացքում**

*Նպատակն է՝* ապահովել զորքերի փոխադրումը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմականի, նրանց ծավալումը օպերատիվ (մարտական) նշանակության շրջաններում, զորքերի վերախմբավորումը օպերատիվ (ռազմավարական) ուղղությունների վրա և այդ միջոցառումների ապաքողարկիչ հատկանիշների նվազեցումը:

Տարբերում են երեք խմբի միջոցառումներ:

*Առաջին խումբ*՝ վաղօրոք միջոցառումներ և գործողություններ, որոնք իրականացվում են ամենօրյա գործունեության ընթացքում և զորքերի ծածուկ գորահավաքային ծավալման պայմանների ստեղծման համար:

*Երկրորդ խումբ*՝ միջոցառումներ և գործողություններ, որոնք իրականացվում են այն իրադրությունում, երբ հակառակորդը ձեռնամուխ է եղել ծածուկ մարտական պատրաստականության բարձրացմանը և յուրային խմբավորումների մարտական կազմի զարգացմանը:

*Երրորդ խումբ*՝ միջոցառումներ և գործողություններ, որոնք կապված են զորքերի օպերատիվ ծավալման անմիջական անցկացման հետ:

**բ) Օպերատիվ քողարկման միջոցառումների բովանդակությունը օպերատիվ նշանակության շրջաններում վերախմբավորման ընթացքում**

Օպերատիվ քողարկման նպատակը զորքերի վերախմբավորման ընթացքում լինելու են զորքերի տեղաշարժի նպատակները, մասշտաբները, ժամկետները և ուղղությունները ծածուկ պահելը, հակառակորդին մոլորության մեջ գցելը զորամիավորումների հետագա օպերատիվ կիրառման հրամանատարության մտահղացման վերաբերյալ, զորքերի մարտունակության պահպանման և ճակատամարտին զորքերի ներգրավման հանկարծակիության նվաճումը:

Հակառակորդին մոլորության մեջ գցելն իրականացվում է առաջշարժման կեղծ ուղղություններում ապատեղեկատվությամբ, նմանակմամբ և ցուցադրական գործողությունների զուգակցմամբ, զորամիավորումների վերախմբավորման տարբեր եղանակների կիրառմամբ:

**գ) Պաշտպանական օպերացիայում օպերատիվ քողարկման բովանդակությունը**

Նպատակն է՝ գորքերի կենսունակության բարձրացումը և նրանց գործողությունների հանկարծակիության նվաճումը՝ հակառակորդի ներթափանցման (հարձակման) հետմղման, հակահարվածի նախապատրաստման և վարման ընթացքում: Հակառակորդին մոլորության մեջ գցելու հրամանատարի գործունեության հիմքում պետք է դրվի գորամիավորումների համալիր կեղծ միջոցառումների կատարումը, որոնք ստիպում են հակառակորդին գործել այն կարգով, որը նպաստավոր է յուրային գորքերի համար և ապահովում է ուժերի ու միջոցների կիրառման բարենպաստ պայմաններ:

Պաշտպանական օպերացիայի նախապատրաստումը և վարումը ծածուկ պահելը հնարավոր են հետևյալ միջոցառումների անցկացմամբ.

- օպերացիայի պլանի և մտահղացման, նրանց մարտունակության աստիճանի և համալրվածության վերաբերյալ գաղտնիության պահպանմամբ, որոնց հասնում են օպերացիայի նախապատրաստման և պլանավորման փուլում փաստաթղթերի մշակմանը սահմանափակ պաշտոնատար անձանց ներգրավմամբ և գաղտնիության ռեժիմի խիստ պահպանմամբ,
- փաստաթղթերի հասցման և տեղեկատվության փոխանցման համար շարժական միջոցների, գծային կապի և ռադիոռելեային կապուղիների կիրառմամբ,
- օպերացիայի տեղանքի քողարկիչ հատկությունների առավելագույն օգտագործմամբ,
- հակառակորդի ներթափանցման (հարձակման) հետմղման

համար ծավալվող և հակահարվածի համար կենտրոնացված գորքերի, պաշտպանական բնագծերի քողարկմամբ,

- հակառակորդի հետախուզության հակազդեցությամբ:

Հակահարվածի հասցման համար գորքերի ծածուկ առաջխաղացմանը հասնում են սահմանափակ տեսանելիության պայմանների օգտագործմամբ, փակ երթուղիների ընտրությամբ և քողարկիչ միջոցների կիրառմամբ (ռադիոցրող և ռադիոկլանող դիմակներ, ջերմարտացոլող ծածկեր) և այլ միջոցառումների կատարմամբ:

Այսպիսով, տեղեկատվական հակամարտության դերի աճը պայմանավորված է մարդու գործունեության (այդ թվում նաև ռազմական) բուռն տեղեկատվայնացմամբ: Մա կարող է հանգեցնել ռազմական արվեստի տեսության և պրակտիկայի խոր վերափոխման, փոխել պատկերացումը կովող կողմերի հակամարտության բնույթի, նրա վարման միջոցների և եղանակների մասին: Միննույն ժամանակ, էապես հրատապ է դառնում ՀՀ Զինված ուժերում տեղեկատվության պահպանման խնդիրը, ինչը պահանջում է մշակել մեր տեղեկատվական ցանցեր հակառակորդի ներխուժման հնարավորությունների արդյունավետ հակազդման միջոցներ: Այդ խնդրի լուծման ուղղություններից է օպերատիվ քողարկման տեղի, դերի և զարգացման գերակայության ճշտումը: Բոլորին պետք է հասկանալի լինի, որ օպերատիվ քողարկումը տեղեկատվական հակամարտության կարևոր բաղկացուցիչն է: Բալկանների, Մերձավոր Արևելքի և Կովկասի զինված հակամարտությունների փորձը ցույց է տալիս, թե ինչքան խոր և մտածված են նախապատրաստում օպերատիվ քողարկման միջոցառումները:

### **3.5. Բարոյահոգեբանական ապահովում**

***Բարոյահոգեբանական ապահովումը օպերատիվ ապահովման հիմնական տեսակներից է, որի շրջանակներում բանակային օպերացիաներում իրագործվում են տեղեկատվական պայքարի խնդիրները:***

Այն կազմակերպվում և իրականացվում է հետևյալ նպատակներով.

- Զինձառայողների մեջ ձևավորել բարձր բարոյահոգեբանական վիճակ՝ պատրաստ դիմակայելու մարտական գործողություններին:
- Մշտապես զարգացնել (թեժացնել) զորքերի բարոյահոգեբանական ոգին:
- Հակառակորդի, հատկապես նրա մարտավարության, սպառազինության և ռազմական տեխնիկայի, ուժեղ և թույլ կողմերի, օպերացիաների ընթացքում մեր զորքերի հաջողությունների վերաբերյալ անձնակազմին տեղեկատվության տրամադրման կազմակերպումը:
- Նվազագույնի հասցնել հոգեբանական կորուստները:
- Զորքերի անվտանգության վերականգնմանն ուղղված հատուկ օպերացիաների իրականացում, ինչպես նաև անձնակազմի՝ մարտ վարելու մշտական պատրաստակալության պահպանում:

**Բարոյահոգեբանական ներազդման գործողություններում սոցիալական ցանցերի կիրառումը.** Սոցիալական ցանցերը, բլոգները այսօր ակտիվ օգտագործվում են ինչպես ներքին քարոզչության համար, այնպես էլ հակամարտությունների ժամա-

նակ՝ որպես տեղեկատվական պատերազմների հիմնական գործիքներից մեկը:

2000-ականների սկզբին, երբ բլոգները և սոցիալական ցանցերը դարձան տեղեկատվության աղբյուր, մի շարք հակամարտություններում դրանք սկսեցին կիրառվել որպես տեղեկատվական պատերազմի գործիքներից մեկը:

Առաջին հակամարտությունները, երբ բլոգերներն ակտիվորեն ներգրավվեցին տեղեկատվական պատերազմում, ռուս-վրացական պատերազմն էր, Իսրայելի ներխուժումը Գազա, «Թափվող արձիճ» ռազմական գործողությունները, որոնք երկուսն էլ տեղի ունեցան 2008թ.:

Ռուս-վրացական պատերազմի ժամանակ, որպես քարոզչական գործողությունների հիմնական հարթակ, որը կապ ուներ նոր մեդիաների հետ, երկու կողմն էլ օգտագործում էր այդ պահին ամենաընթերցվող *Livejournal.com*-ը: Այստեղ բլոգերները ներկայացնում էին օպերատիվ տեղեկատվություն, իրականացնում քարոզչական գործողություններ<sup>57</sup>:

«Թափվող արձիճ» գործողությունն սկսվեց 2008թ. հոկտեմբերի 27-ին: Հոկտեմբերի 29-ին արդեն իսրայելամետ բլոգերներն ամենաշատ այցելուներ ունեցող ռուսալեզու *Livejournal.com* բլոգերի հարթակում բացեցին «*Gaza2009*»<sup>58</sup> ընկերակցությունը (ընկերակցության նախաձեռնողներից ու մոդերատորներից են Մարկ Բիբիչկովը, որը 1999-2006թթ. Իսրայելի պաշտպանության նախարարների խորհրդականն էր, և Դավիդ Էյդելմանը՝ «Քաղիմա» քաղաքական շարժման մամլո քարտուղարը):

---

<sup>57</sup> Первая блогерская “Осетинская война в блогосфере”, 13.08.2008,

<http://lenta.ru/articles/2008/08/13/blogs/>

<sup>58</sup> <http://gaza2009.livejournal.com/>

Մույն ընկերակցության կազմակերպիչները դրա ստեղծման նպատակը բացատրում են հետևյալ կերպ. «Առաջին հերթին աջակցելու և ցանցում համախմբելու համար բոլոր նրանց, ովքեր Իսրայելի կողքին են պատերազմական այս ժամանակաշրջանում և շահագրգռված են բացատրական աշխատանք տանել ցանցում ռուսալեզու հատվածի համար՝ ոչ այնքան իրենց՝ իսրայելցիների համար, որքան Իսրայելից դուրս: Ընկերակցության գլխավոր խնդիրն է նախաձեռնել և համակարգել բացատրական աշխատանքը Գազայի հատվածում ահաբեկիչների դեմ պատերազմում Իսրայելի դիրքորոշման վերաբերյալ»:

Ընկերակցությունը մի քանի օրվա ընթացքում ավելի քան հազար մշտական ընթերցող բլոգերների հավաքեց, իսկ ընդհանրապես ընկերակցության այցելուների թիվն օրական հասավ 15-30 հազար մարդու: Այստեղ միայն պարզապես հոգուտ Իսրայելի քարոզչական աշխատանք չէ, որ տարվում էր: Ընկերակցության միջոցով տեղեկություն էր հաղորդվում հոգուտ կամ ընդդեմ Իսրայելի գործողությունների մասին, որոնք պետք է անցկացվեին մոտակա ժամանակներում, աշխարհի տարբեր անկյուններում, որոնց վերաբերյալ այնուհետև հավաքվում էին փաստական նյութեր և տեսագրություններ: Այլ ֆորումներում կամ նմանատիպ հարթակներում հակաիսրայելական քննարկումների հայտնվելու պարագայում ընկերակցությունը տեղեկացնում և գործի էր դնում նրանց, ովքեր կարող էին ինչպես հարկն է վիճել և ներկայացնել Իսրայելի դիրքորոշումը: Բացի այդ, այս և նման այլ ընկերակցությունների անդամները գտնում էին արաբամետ ուժերի կողմից տարածվող մեդիա-կեղծիքները<sup>59</sup>, վերլուծական աշխատանք տանում,

---

<sup>59</sup> Օրինակ, zhivaia-legendas.livejournal.com, www.lugovsa.net



տեղեկագրեր պատրաստում բանավեճեր անցկացնելու համար, ինչը հեշտացնում էր նրանց աշխատանքը, ովքեր պրոֆեսիոնալ գիտելիքներ չունեին հակամարտության պատմության, իրավական և այլ հարցերի վերաբերյալ: Մամուլում ընկերակցությունը քանիցս անվանվել է «ռուսալեզու բլոգերների շտաբ», որը բավական ակտիվ և հաջող էր գործում տեղեկատվական պատերազմում:

«Gaza2009» ընկերակցությունը մտցվեց նաև սոցիալական ցանցեր. *Facebook*, *Контакт.ру*, *Одноклассники.ру*, որոնցում նույնպես հարյուրավոր ընթերցողներ ունեցավ: Հունվարի 14-ին արդեն տեղի ունեցավ «Gaza2009» ընկերակցության բլոգերների առաջին հանդիպումն Իսրայելի պետության կառավարության ներկայացուցչի հետ: Ինչպես հաղորդում էր ընկերակցությունը, հարցազրույց էր տալիս տրանսպորտի ներկայիս նախարարը, ով ժամանակին զբաղեցրել էր պաշտպանության նախարարի և Գլխավոր շտաբի պետի պաշտոնները՝ Իսրայելի Պաշտպանության բանակի պաշտոնաթող զեներալ-լեյտենանտ Շաուլ Մոֆազը: Բլոգերները ցանկանում էին պարզել, թե ինչ պաշտոնական դիրքորոշում ունի Իսրայելի կառավարությունը, որպեսզի այնուհետև, ընկերակցության և ռուսալեզու ակտիվ բլոգերների միջոցով այդ տեղեկատվությունը հասցնեն ռուսերի ընթերցողներին: Միննույն ժամանակ, նրանց խնդիրն էր պարզել որոշ սկզբունքայնորեն կարևոր հարցեր «Զուլածո արձիճ» գործողության և ընդհանրապես արտաքին քաղաքականության մասին: Այսպիսով, պաշտոնական շրջանակները միանշանակ աջակցում էին բլոգերների մասնավոր նախաձեռնությանը և բացահայտորեն համագործակցում ընկերակցության հետ:

Բացի այս ընկերակցությունից, որն աչքի է ընկնում նպատակային աշխատանքով, ինչպես նաև դրանում հայտնի լրագրողների, վերլուծաբանների, քաղաքական գործիչների ներգրավվածությամբ, գործի են դրվել նաև սոցիալական ցանցերը, որոնք արդեն կոչված էին աշխատելու ոչ թե կոնկրետ խնդիրների, այլ անհրաժեշտ տեղեկատվության զանգվածային տարածման ուղղությամբ: Այսպես, օրինակ, *Facebook* սոցիալական ցանցում «*I Wonder How Quickly I Can Find 1,000,000 People Who Support Israel*» (հետաքրքիր է՝ որքան արագ ես կգտնեմ Իսրայելին աջակցող միլիոն մարդ) ընկերակցությունը 2009թ. հունվարի 15-ին արդեն ուներ մոտ 150 հազար մասնակից: Մեկ այլ՝ «*I Support the Israel Defense Forces In Preventing Terror Attacks From Gaza*» (Ես աջակցում եմ Իսրայելի պաշտպանության ուժերին Գազայից ահաբեկչական գրոհների դեմ պաշտպանությունում) խումբ 80 հազար մասնակից ունեցավ: Նույն ձևով ստեղծվեցին նաև տասնյակ ընկերակցություններ՝ ի պաշտպանություն Գազայի հատվածում Իսրայելի գործողությունների, որոնց ընդհանուր լսարանը կազմեցին հարյուր հազարավոր մարդիկ: Նման ընկերակցությունները թույլ են տալիս անհրաժեշտ հոդվածները, լուսանկարներն ու տեսանյութերն արագ առաքել հսկայաթիվ մարդկանց աշխարհով մեկ՝ առաջ բերելով ռեզոնանսային էֆեկտ:

Դատելով ըստ ամենայնի՝ կամավորների գործողությունների արդյունավետությունը սոցիալական ցանցերում հանգեցրեց այն բանին, որ Իսրայելի ղեկավարությունը որոշեց լեգալացնել նման գործունեությունը: Գազայի հովտում կրակի դադարեցման պահին արդեն հետևել էր Իսրայելի արտոբյուրոյի նախարար Էլի Աֆլալոյի հայտարարությունն այն մասին, որ Իս-

րայելի նորագույն զենքը տեղեկատվական ճակատում (*«hasbara»*) «Բլոգերների բանակն է»<sup>60</sup>: Աֆլալոյի խոսքերով՝ արտաքին գործերի նախարարության հասարակության հետ կապերի վարչության հետ համագործակցելով՝ աբտրեքցիայի նախարարությունը կամավորականների որոնման միջոցներ է ձեռնարկել, ովքեր կօգնեն Իսրայելին ինտերնետի միջոցով տարբեր լեզուներով կապեր հաստատել տարբեր ընկերակցությունների հետ:

Իր հերթին, Իսրայելի ԱԳՆ-ն նույնպես սկզբից ևեթ գնաց առավելագույնս դյուրինացված հավաքագրման ճանապարհով: Ցանցում բացվեց [www.rusforums.pr2.co.il/](http://www.rusforums.pr2.co.il/) կայքը, որտեղ գետեղվեց արտաքին քաղաքական գերատեսչության ուղերձը. «ձեր ձայնը պետք է լսեն ողջ աշխարհում: Իսրայելի հարավում զինված հակամարտության սրացման հետ կապված՝ արտաքին գործերի նախարարությունը՝ նախարար Ցիպի Լիվնիի գլխավորությամբ, ակտիվ բացատրական աշխատանք է ծավալում՝ աշխարհին պարզաբանելով մեր երկրի դիրքորոշումը:

Այդ աշխատանքին միացել են նաև քաղաքական գործիչները, զինվորականները և բարձրաստիճան պետական այրերը: Մենք կոչ ենք անում Իսրայելի բոլոր քաղաքացիներին մասնակցել բացատրական գործունեությանը: Ձեր օգնությամբ այլ երկրների բնակիչները, ովքեր խոսում են ռուսերեն, կարող են հասկանալ, թե ինչ վիճակում է հայտնվել մեր երկիրը: Աշխարհը պետք է հասկանա, որ Իսրայելն իրավունք ունի պաշտպանել իր քաղաքացիներին: Թող ձեր ձայնը լսելի լինի ինտերնետի միջազգային ֆորումներում»: Կայքում ստեղծվեց յուրաքանչյուր օգտվողի անհրաժեշտ հղումն ինքնուրույն ուղարկելու կամ գետեղելու տեխնիկական հնարավորություն: Համապատաս-

<sup>60</sup> Израиль начал формирование армии блогеров, 19.01.2009, <http://getnews.msk.ru/?p=80>

խանաբար՝ լուծվում էր կամավորականների պարզունակ համակարգման աշխատանքը տեղեկատվական ճակատում:

Հարկ է նշել, որ բլոգների ոլորտը որպես արդյունավետ միջոց օգտագործում էին նաև պաշտոնական անձինք: Այսպես, մասնավորապես օգտագործվում էր *Twitter* միկրոբլոգինգի կայքի ռեսուրսը (այսօրվա դրությամբ այսպես կոչված միկրոբլոգինգը ամենատարածված միտումներից մեկն է): ՅԱԽԱԼ-ի խոսնակը և Իսրայելի հյուպատոսությունը Նյու Յորքում ակտիվորեն օգտագործում են միկրոբլոգինգը նյութերի տարածման համար: Բացի այդ, ՅԱԽԱԼ-ի խոսնակն օգտագործում էր նաև իր անձնական բլոգը<sup>61</sup>:

Օգտագործելով հնտերնետի արդի հնարավորությունները, որոնք թույլ են տալիս խիստ օպերատիվ ձևով ցանցում տեղակայել նոր կայքեր, իսրայելյան ակտիվիստները տասնյակ կայքեր են բացել, որտեղ նպատակաուղղված ձևով զետեղվել է «Համասին» վարկաբեկող և Իսրայելի գործունեությունն արդարացնող ողջ տեղեկատվությունը: Օրինակ, «*AMACA-het*» կայքը իսրայելամետ քարոզչի ձեռքն էր հանձնում հսկայածավալ տեքստային և մուլտիմեդիա-նյութեր, որոնցից նա կարող էր օգտվել<sup>62</sup>:

Նման հակամարտությունների փորձը ցույց տվեց սոցցանցերի, բլոգների կիրառման էֆեկտիվությունը, և արդեն 2010-ից ու դրանից հետո մի շարք երկրներ սկսեցին իրականացնել հատուկ պետական կառույցների ձևավորման գործողություններ: Խոսքն այն կառույցների մասին է, որոնք կարող են պետության պատվերով իրականացնել քարոզչական գործողություններ սոցիալական ցանցերում:

---

<sup>61</sup> [www.idfspokesperson.com/](http://www.idfspokesperson.com/)

<sup>62</sup> <http://hamasa.net/>

2011թ. լրագրողական բացահայտումները ցույց տվեցին, որ Պենտագոնը մշակում է հատուկ ծրագրային համակարգ, որը թույլ է տալիս մեկ օպերատորին կառավարել միանգամից տասը բոթ սոցիալական ցանցերում՝ քարոզչություն տարածելու համար<sup>63</sup>:

Ռուսաստանում բոթերն ակտիվորեն օգտագործվում են սոցիալական ցանցերում քարոզչական պատերազմներ վարելու համար, ինչպես արտաքին թշնամու դեմ, այնպես էլ ներքին քաղաքական քարոզչության համար: Լրագրողական հետաքննությունները բացահայտեցին, որ Ռուսաստանում պետական պատվերով գործում են հարյուրավոր անձինք, որոնք կեղծ օգտատերերի անունից իրականացնում են քարոզչական աշխատանք սոցիալական ցանցերում և բլոգներում<sup>64</sup>: Խոսքը բավական մեծ քանակի՝ 250 հոգանոց թիմի մասին է, որն ունի ամսական 10 միլիոն ռուբլի բյուջե<sup>65</sup>: Գիտական հետազոտությունները նաև ցույց տվեցին, որ քարոզչական գործողությունների համար Ռուսաստանի կողմից կիրառվում են տասնյակ հազարավոր բոթեր *Թվիթեր* միկրոբլոգային հարթակում<sup>66</sup>:

Չինաստանն օգտագործում է ներքին քաղաքական քարոզչության շատ ավելի մեծ ռեսուրսներ: Ըստ արևմտյան ուսումնասիրությունների, այստեղ ներգրավված բլոգերների թիվը, որոնք պատվերով իրականացնում են քարոզչական աշխատանք, հաս-

<sup>63</sup> Revealed: US spy operation that manipulates social media. 17.03.2011, <http://www.theguardian.com/technology/2011/mar/17/us-spy-operation-social-networks>

<sup>64</sup> Где живут тролли. И кто их кормит. 07.09.2013, <http://www.novayagazeta.ru/politics/59889.html>

<sup>65</sup> Тролли из Ольгино переехали в новый четырехэтажный офис на Савушкина. 28.10.2014, [http://www.dp.ru/a/2014/10/27/Borotsja\\_s\\_omerzeniem\\_mo/](http://www.dp.ru/a/2014/10/27/Borotsja_s_omerzeniem_mo/)

<sup>66</sup> Анализ социальной сети раскрывает полный масштаб кампании кремлёвских ботов в Twitter. 03.04.2015, <https://ru.globalvoices.org/2015/04/03/36169/>

նում է 300 հազարի<sup>67</sup>: Բացի դրանից, Չինաստանի կառավարությունն արգելափակում է արևմտյան սոցիալական ցանցերը, ինչպիսին են *Ֆեյսբուքը*, *Թվիթերը*, որպեսզի հասարակությունն օգտվի միայն վերահսկվող չինական սոցցանցերից<sup>68</sup>:

Թուրքիայում Ռ.Էրդոդանի կառավարությունը ներքին քաղաքական քարոզչության մեջ օգտագործում էր տասնյակ հազարավոր բոթեր *Թվիթերում*: Ըստ ուսումնասիրությունների, դրանց թիվը հասնում էր 40 հազարի<sup>69</sup>:

*EAGER: Computational Propaganda and The Production/Detection of Bots* գիտական թիմի մեկ տարվա ուսումնասիրությունները, որոնք հրապարակվում են [politicalbots.org](http://politicalbots.org) կայքում, խոսում են այն մասին, որ առնվազն 40 պետություն քաղաքական քարոզչության մեջ կիրառում է բոթեր սոցիալական ցանցերում<sup>70</sup>: Բացի վերոհիշյալ երկրներից, ցուցակում հայտնվել են Ավստրալիան, Ադրբեջանը, Մեծ Բրիտանիան և այլն<sup>71</sup>:

Ադրբեջանական պետական քարոզչությունը հաճախ կիրառում է զանգվածային բոթեր Հայաստանի դեմ: *Թվիթեր* միկրոբլոգային հարթակում ադրբեջանական կողմը բոթերի միջոցով պարբերաբար փորձում է Հայաստանում և հայությանը վերաբերող թեմաներում իրականացնել սեփական հակահայկական քարոզչությունը:

---

<sup>67</sup> China joins a turf war. 22.09.2008, <http://www.theguardian.com/media/2008/sep/22/chinathemedia.marketingandpr>

<sup>68</sup> Online censorship in China, <https://en.greatfire.org/>

<sup>69</sup> Turkey's Leader Bans His Own Twitter Bot Army. 03.26.2014, <http://www.vocativ.com/world/turkey-world/turkeys-leader-nearly-banned-twitter-bot-army/>


<sup>70</sup> 5 countries that use bots to spread political propaganda, 16.12.2015, <http://www.techinsider.io/political-bots-by-governments-around-the-world-2015-12>

<sup>71</sup> EAGER: Computational Propaganda and The Production/Detection of Bots, [http://politicalbots.org/?page\\_id=129](http://politicalbots.org/?page_id=129)

Այսպես, 2013թ. Հայաստանի խորհրդարանական ընտրությունների ընթացքում ադրբեջանական բոթերը զանգվածաբար ներթափանցել էին հայաստանցիների կողմից կիրառվող #armvote13 հեշթեգ: Ադրբեջանական բոթերը ձևավորել էին այլընտրանքային տեղեկատվական հոսքեր, որոնք հստակ քարոզչական, հակահայկական բնույթ էին կրում (տե՛ս *Նկար 1*): Նման գործողությունների դիմում են ադրբեջանական բոթերը Հայոց ցեղասպանության ամեն տարելիցին՝ փորձելով ներթափանցել #ArmenianGenocid, #ГеноцидАрмян հեշթեգերի տեղեկատվական հոսքեր<sup>72</sup>:

*Նկար 1*

*#armvote13 հեշթեգի կիրառումը Թվիթերում: Չափից խմբավորված են հայաստանյան գրառումները, աջից՝ ադրբեջանական քարոզչական բոթերի գրառումները: Ըստ Քեյթի Փիրսի ուսումնասիրության<sup>73</sup>*



<sup>72</sup> Katy Pearce, Why is it impossible to hijack #armeniangenocide on Twitter? (Hye jack?), 24.04.2013, <http://www.katypearce.net/why-is-it-impossible-to-hijack-armeniangenocide-on-twitter-hye-jack/>

<sup>73</sup> #armvote13 hashtag got taken over – looks suspicious. 18.02.2013, <http://www.katypearce.net/armvote13-hashtag-got-taken-over-looks-suspicious/>

### **3.6. Ռադիոէլեկտրոնային պայքար**

Ռադիոէլեկտրոնային պայքարն իր կարողություններով դարձել է մարտական օպերացիայի տեսակ, պատերազմի վարման ձև: Այսօր պայքարելով էլեկտրոնիկայի դեմ՝ հնարավոր է արդյունավետ նվազեցնել հակառակորդի մարտական տեխնիկայի հնարավորություններն՝ առանց այն խոցելու: Բոլորովին պարտադիր չէ թնդանոթով խոցել հակառակորդի տանկը: Բավական է, ասենք, էլեկտրոնային ճառագայթի միջոցով «կուրացնել» տանկիստին կամ շարքից դուրս բերել նշանոցի համակարգը: Եթե տանկը չի կարող նշան բռնել, այն չի կարող նաև մարտական խնդիր կատարել, և այն խոցելու իմաստը կորչում է:

Ամեն դեպքում՝ ՌԷՊ առավելություններն ակնհայտ են: Պաշտպանական առումով առավել խոստուն է 1990-ականների սկզբին Իրաքում անցկացված «Փոթորիկ անապատում» գործողությունը, երբ սկզբնական շրջանում միջազգային դաշինքի զորքերի արձակած բազմաթիվ հրթիռներ նպատակին չէին հասնում: Պարզվեց, որ Իրաքի զինվորականները միացրել են GPS ռադիոնավարկության ճնշման հզոր համակարգեր: Կարելի է ասել, որ ամբողջ աշխարհում ռադիոէլեկտրոնային պայքարի ուղղությանն ավելի մեծ ուշադրություն են դարձնում, քան մյուս զորատեսակներին:

Տեղեկատվական գործողությունների կազմում ռադիոէլեկտրոնային պայքարի համակարգի բացակայությունը կարող էր ինչ-որ չափով հիմնավորված լինել ոչ հեռավոր անցյալում: Սակայն ժամանակակից պայմաններում տեղեկատվական օպերացիայում (և ոչ միայն) ռադիոէլեկտրոնային պայքարի դերի էական աճի դեպքում դա անտրամաբանական է: Ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցները թույլ են տալիս ավելի



արդյունավետ լուծել զանազան խնդիրներ ինչպես համագորային, այնպես էլ տեղեկատվական օպերացիայում և էապես ազդել դրա արդյունավետության վրա:

Ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցների դերն էապես բարձրանում է տեղեկատվական օպերացիայում այնպիսի կարևոր խնդիր լուծելու գործում, ինչպիսին հակառակորդի տեղեկատվա-տեխնիկական միջոցների (և ոչ միայն) դեմ պայքարելն է: Ներկա պայմաններում տեղեկատվական օպերացիայի շրջանակներում (որպես համագորային պաշտպանողական օպերացիայի բաղկացուցիչ մաս) պահանջվում է ոչնչացնել (խափանել) պոտենցիալ հակառակորդի բարձր ճշգրտության զենքերը, կառավարվող ռումբերը (դրոնները), ավտոմատացված ղեկավարման համակարգերը, տեղեկատվության տարածման տեխնիկական միջոցները<sup>74</sup> և այլն:

Այսպիսով, ռադիոէլեկտրոնային պայքարի ուժերով և միջոցներով տեղեկատվական օպերացիայում կարելի է լուծել ռադիոէլեկտրոնային հետախուզության, հակառակորդի տեղեկատվական ներագդեցության օբյեկտների ռադիոէլեկտրոնային ճնշման, պաշտպանության գոտում գտնվող կարևոր օբյեկտների պաշտպանության, ինչպես նաև դրանց նմանակման և միջառք այլ խնդիրներ: Այդ խնդիրների լուծման եղանակների ամբողջությունը ռադիոէլեկտրոնային պայքարի այն համակարգն է, որը կիրառվում է համագորային օպերացիաներում՝ տեղեկատվական օպերացիան կազմակերպելիս:

---

<sup>74</sup> Տեղեկատվության տարածման տեխնիկական միջոցներ – անհրաժեշտ ծրագրային ապահովմամբ ավտոմատացված տեխնիկական միջոցների համակարգ, որոնք ապահովում են տարաբնույթ տեղեկատվության տարածում:

Այդ շրջանակներում լուծվող խնդիրների առանձնահատկությունը թույլ է տալիս ռադիոէլեկտրոնային պայքարի համակարգում առանձնացնել հետևյալ ենթահամակարգերը՝ ռադիոէլեկտրոնային հետախուզական-տեղեկատվական ապահովման, ռադիոէլեկտրոնային ճնշման, ռադիոէլեկտրոնային պաշտպանության և հակառակորդի հետախուզության տեխնիկական միջոցներին ցուցաբերվող հակազդեցության:

Տեղեկատվական օպերացիա կազմակերպելիս ռադիոէլեկտրոնային պայքարի համակարգը պետք է համաձայնեցնել գորատեսակների հետ և ապահովել այդ բոլոր (գորատեսակների) համակարգերի զանազան տարրերի ներդաշնակ գործառույթը: Այլ կերպ ասած՝ ռադիոէլեկտրոնային պայքարի, հետախուզության, կապի և ավտոմատացված կապի համակարգերի, ռազմավարական և օպերատիվ քողարկման, հատուկ գործողությունների ուժերն ու միջոցները պետք է սերտորեն փոխգործակցեն ի շահ հակառակորդի տեղեկատվական «սպառազինության» դեմ պայքարի արդյունավետության բարձրացման:

### ***3.7. Կապի անվտանգության և տեղեկատվության պաշտպանություն***

Կապի անվտանգությունը և տեղեկատվության պաշտպանությունն իրականացվում են.

- Պաշտպանվելիք տեղեկատվության կանխորոշմամբ (հստակեցմամբ):
- Հետախուզական տեխնիկական միջոցների, կրիչների առկայության և դրանց առաջացման ազդարարմամբ:
- Քողարկմամբ (թաքցնելով):

- Տեղեկատվության արտահոսքի տեխնիկական խողովակների բացահայտմամբ և դրանց փակման միջոցների ձեռնարկումով:
- Ռեպրոդուկցիայի համակարգերի և միջոցների օգտագործման սահմանափակմամբ, պահպանվող տեղեկությունների պաշտպանությանը վերաբերող պահանջների կատարմամբ:
- Էլեկտրոնային միջոցների և համապատասխան շինությունների հատուկ ստուգումների ու հատուկ հետազոտությունների անցկացմամբ:
- Ավտոմատացված կառավարման համակարգի կիրառման հստակ կանոնների սահմանմամբ:
- Օգտագործողների կարգի, ինչպես նաև նրանց տեխնիկական ճանաչման կանոնների կանոնակարգմամբ:
- Տրվող տեղեկատվության փակման միջոցների համակարգային կիրառմամբ:
- Հատուկ պայմաններում տեղեկատվության չհայտարարագրված տարածման պաշտպանությամբ:
- Բացահայտման արդյունքում պաշտպանվող տեղեկատվության անվերահսկելի տարածման կանխարգելմամբ:

**Տեղեկատվական տեխնիկական սարքավորումների պաշտպանություն.** Տեղեկատվական տեխնիկական սարքավորումները՝ հեռախոսներ, պլանշետներ և այլն, անձի վերաբերյալ զգայուն տեղեկատվության կրողներ են: Հաճախ շարժական սարքերի վրա ավելի զգայուն տեղեկատվություն է պահեստավորվում, քան անձնական համակարգիչներում. լուսանկարներ, բանկային տվյալներ և այլն:

Տեխնիկական սարքերում հիմնականում տեղադրվում է երկու հիմնական օպերացիոն համակարգ: Ամենակարևորն այն է, որպեսզի հավելվածներ տեղադրվեն միայն պաշտոնական խանութից՝ *Google Play* և *App Store*:

Հավելված տեղադրելիս միշտ պետք է հետևել, թե ինչ տիպի տեղեկատվություն է ուզում ստանալ ձեզանից հավելվածը: Եթե հասարակ լրատերը պահանջում է ձեր SMS-ների վերաբերյալ տեղեկատվություն, ապա հեռացրեք տվյալ ծրագիրը, քանի որ այն կարող է օգտագործվել լրտեսելու համար: Նույնիսկ պաշտոնական խանութում պարբերաբար հանդիպում են հաքերների կողմից ներդրված ծրագրեր: Գերադասելի է օգտվել ստուգված, հանրայնորեն հայտնի արտադրողների հավելվածներից:

Սարքին պետք է միացված լինի այն հեռահար գտնելու և վրայի տեղեկատվությունը ոչնչացնելու հնարավորություն: *Android*-ի դեպքում դա *Device Manager* հավելվածն է, *iOS*-ի դեպքում՝ *Find My iPhone*-ը: Այս հավելվածները կառավարվում են անձնական համակարգչից և թույլ են տալիս ինչպես տեսնել սարքի հստակ տեղը, այնպես էլ վերացնել դրա վրա առկա տեղեկատվությունը, որպեսզի այն հասանելի չլինի այլ անձանց:

Սարքին պետք է միացված լինի սարքի արգելափակումը կողի միջոցով, որպեսզի այլ անձինք հնարավորություն չունենան հեշտությամբ ներթափանցել: Նաև կարևոր է սարքը ֆիզիկապես վերահսկողության տակ պահել, եթե տանը չեք:

Կարևոր, բայց հաճախ անտեսվող հանգամանք է հեռախոսի «թարմացումը»: Ցավոք, հեռախոսներ արտադրողներն ինչ-որ պահից դադարում են թարմացնել օպերացիոն համակարգը տվյալ հեռախոսի համար, և այն դադարում է անվտանգ լինել: Օրինակ, *Apple*-ը *iPhone 4S*-ը և ավելի «հին» հեռախոսները էլ չի

թարմացնում: *Android* համակարգով աշխատող հեռախոսներից շատերը երկու տարի հետո դադարում են ստանալ անվտանգության թարմացումները: Այնպես որ, պետք է հաշվի առնել, որ հեռախոսը ժամանակի ընթացքում կարող է դառնալ խոցելի:

### ***3.8. Ձորքերի (ուժերի) մարտական և հատուկ գործողություններ***

Ձորքերի (ուժերի) մասնակցությունը տեղեկատվական օպերացիաներում սահմանվում է.

*1. Մարտական խնդիրների կատարմամբ:*

*2. Օպերացիաների ապահովման խնդիրների կատարմամբ՝*

- Հետախուզության
- Հոգեբանական պայքարի
- Ռադիոէլեկտրոնային պայքարի
- Օպերատիվ քողարկման
- Բարոյահոգեբանական ապահովման:

*3. Կապի անվտանգության ապահովման, տեղեկատվության պաշտպանության խնդիրների կատարմամբ:*

*Մարտական խնդիրների կատարման ընթացքում՝* հակառակորդի տեղեկատվական օբյեկտների վրա ֆիզիկական ներազդեցությամբ, մասնավորապես ոչնչացնելով հակառակորդի այն ուժերն ու միջոցները, որոնք ունակ են տեղեկացնել կամ ֆիզիկապես ներազդել մեր զորքերի, բնակչության և տեղեկատվական օբյեկտների վրա:

*Հետախուզական խնդիրների կատարման ընթացքում* բացահայտվում են հակառակորդի տեղեկատվական օբյեկտները,

կանխորոշվում է հակառակորդի գորքի և բնակչության քաղաքական ու բարոյահոգեբանական վիճակը:

*Հետախուզական - հոգեբանական խնդիրները* հետախուզության հատուկ տեսակ են, օպերատիվ ապահովման հիմնական տեսակներից մեկը, որի շրջանակներում բանակային օպերացիաներում իրագործվում (իրականացվում) են տեղեկատվական պայքարի (օպերացիայի) խնդիրները:

**Ժամանակակից հատուկ տեղեկատվական օպերացիաները (գործողությունները) պետք է լինեն** (իսկ ավելի ստույգ՝ արդեն գոյություն ունեն) բոլորովին այլ՝ *սիներգետիկ* սկզբունքներով: Սիներգետիկ մոտեցումներից կարելի է օգտվել՝ դիտարկելով հասարակությունը որպես արտակարգ բարդ համակարգ, որի ամեն մի մասնիկ ունի բազմաշերտ ազատությունների իրավունք: Առաջին հերթին, հարկավոր է նկատի ունենալ, որ *«տարբեր բնույթի ջանքերից դեպի ոչ հավասարի փոխակերպման ժամանակ մենք այնպես ենք փոխակերպվում, որ ձևափոխվում ենք ընդհանուրից ունիկայի և սպեցիֆիկի»:*

Առանձնացվում է քարոզչական տեխնոլոգիաների երկու հիմնական տեսակ.

- փափուկ, որոնք չեն հակասում սիմվոլների, կարգավորումների և ստերեոտիպների համակարգերը,
- կոշտ, որը նպատակ ունի մոդիֆիկացնել կամ քայքայել եղած հոգեբանական կարգը:

*Փափուկ քարոզչական տեխնոլոգիաներն* ավելի արդյունավետ են երկարաժամկետ պլաններում, քան կոշտը, քանզի այդպիսի կիրառման արդյունքում հստակ կանխագուշակվում

են: Իրական կյանքում վերջինների կիրառման օրինակները բազմաթիվ են՝ սկսած գովազդներից (քաղաքական և տնտեսական), վերջացրած հասարակ հեռուստալրատվությամբ:

**Կոշտ տեխնոլոգիաները կիրառվում են** միայն առանձնահատուկ պայմաններում, քանի որ առանձնահատուկ կրիտիկական կետի կոշտ քարոզչության գործողությունները ծանր են կանխատեսվում, իսկ երբեմն գործնականում դա անհնար է:

**Երկու տեսակների հիմնարար սկզբունքներն են.**

1. Կարելի է ազդել էմոցիաների վրա, այլ ոչ թե մտքի:
2. Անհրաժեշտ է մշտապես իրականացնել հոգեբանական անընդհատ ճնշում, քանի որ քարոզչությունն օբյեկտի վրա պետք է ազդի անընդհատ: Բնականաբար, ժամանակակից հասարակարգում այս պահանջների կատարումը բարդ խնդիր է, բայց տեսականորեն հնարավոր:
3. Խելամիտ տեխնոլոգիաներն արդյունավետ են, քանի որ հնարավորություն են տալիս մարդու ենթագիտակցության վրա ուղիղ ներազդեցություն իրականացնել:
4. Անհրաժեշտ է կողմնորոշել քարոզարշավները կոնկրետ որոշակի թիրախային լսարանի վրա:

**Համատեղ տեղեկատվական օպերացիաները բաժանվում են չորս փուլի.**

1. **Նախնական փուլ:** Այս փուլում իրականացվում է օպերացիայի պլանավորում, մասնավորապես նրա իրականացման նպատակահարմարության, նպատակների, խնդիրների, ձևերի և մեթոդների, թիրախային լսարանի վրա ներազդման, ներազդման ձևերի և մեթոդների և այլն:

2. **Տեղեկատվական առիթը:** Այս փուլում հատուկ տեղեկատվական օպերացիաները հարկավոր է մշակել այնպես, որ ստեղծվի այսպես կոչված տեղեկատվական առիթ:
3. **«Խթանում» (ռասկրուտկա) տեղեկատվական առիթ:** Այս փուլը ցանկացած տեղեկատվական օպերացիայի հիմնական մասն է:
4. **Հատուկ տեղեկատվական օպերացիաներից ելքի կամ ամրապնդման փուլ:**

**Հատուկ տեղեկատվական օպերացիաների պլանավորման փուլերը**

1. Նպատակների կանխորոշում
2. Օբյեկտների կանխորոշում
3. Ուժերի և միջոցների, ռեսուրսների վերլուծություն, կատարողների կանխորոշում
4. Մեթոդների և ձևերի կանխորոշում
5. Մոտավոր սցենարի մշակում
6. Հաջողությունների գնահատման չափանիշների կանխորոշում:

**Հատուկ տեղեկատվական օպերացիաների տեսակները**

1. Օպերացիաներ՝ ուղղված որոշում ընդունող սուբյեկտների դեմ:
2. Օպերացիաներ՝ ուղղված համակարգչայնացմանը, ընդդիմախոսներին վնաս հասցնելուն:
3. Օպերացիաներ՝ ուղղված քաղաքական (տնտեսական) ապակայունացմանը:



### 3.9. «Կիրեռույատերազմներ»<sup>75</sup>

Տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ զարգացումը հանգեցրեց սկզբում արտերկրների զինված ուժերի փոխակերպմանը, այնուհետև՝ բանակաշինության և XXI դարի օպերացիաներում ԶՈՒ կիրառման նոր ռազմավարական կարգերի ի հայտ գալուն: Այդպիսի կարգերին են պատկանում *«Տեղեկատվական պատերազմը»*, *«Տեղեկատվական օպերացիաները»*, *«Մարտական ղեկավարման համակարգերի դեմ պայքարը»*, *«Համակարգչային ցանցերում օպերացիաները»*, *«Կիրեռույատերազմը»* և այլն:

ԱՄՆ ԶՈՒ-ի կողմից կիրեռտարածությունում ռազմական օպերացիաների պլանավորման ժամանակակից վիճակը, շատ տեսաբանների գնահատականներով, հիշեցնում է այն ժամանակաշրջանը, երբ կես դար առաջ ստեղծվել է ատոմային ռումբը, մասնավորապես՝ երբ ատոմային պատերազմի դոկտրինի մշակումը բավական հետ էր ընկել նրա գործնական զարգացման հնարավորություններից: Հենց այդ կապակցությամբ նախագահ Բ.Քլինթոնի կիրեռանվտանգության գծով նախկին հատուկ խորհրդական Ռիչարդ Քլարկը 2003թ. «Վաշինգտոն փոստ» թերթին տված հարցազրույցում հատուկ ընդգծել է, որ *«մենք ունենք հնարավորություն, մենք ունենք համապատասխան կառույցներ, սակայն դրանով հանդերձ մեզ մոտ բացակայում են հատուկ, հստակ մշակված ռազմավարությունը, դոկտրինը և օրակարգը»*: 2003թ. փետրվարի 14-ին ԱՄՆ նախագահը ստորագրեց *«Կիրեռտարածքի պաշտպանության ազգային ռազմավարությունը»*, որը փաստացի հանդիսացավ առաջին

<sup>75</sup> ԱՄՆ ԶՈՒ տեղեկատվական օպերացիաների վարման փորձը:

շարժառիթը՝ կանխորոշելու ԱՄՆ բոլոր կառույցների կողմից իրականացվող կիրեռտարածության պաշտպանման ապահովման անհրաժեշտ կոորդինացումը և ուժերի կենտրոնացումը ֆեդերալ, ռազմական և տեղական մակարդակներում: Փաստաթղթում ազգային տեղեկատվա-կոմունիկացիոն ինֆոկառուցվածքի կիրեռանվտանգությունը կցվել է ներքին անվտանգության նախարարության պատասխանատվության ոլորտին: Սկսած 2003 թվականից՝ ԱՄՆ-ում սկսվեցին կիրեռօպերացիաների ռազմական դոկտրինի ներածության և հիմնական հավելվածների մշակումները, ինչպես նաև կազմհաստիքային կառուցվածքի կազմավորումը կիրեռտարածությունում մարտավարական օպերացիաների ղեկավարման նպատակով: Այդ ժամանակահատվածում ԱՄՆ ՌՕՈւ-ում<sup>76</sup> կազմավորվեց 24-րդ օդային բանակը (երբեմն այն անվանում են կիրեռհրամանատարություն):

Ժամանակակից մարտական գործողություններում կիրեռտարածության վերահսկման և օգտագործման հնարավորությունները դառնում են կարևոր գործոն, հետևաբար դրանք անհապաղ պետք է ինտեգրվեն ռազմական դոկտրինում: Արդեն իսկ մի շարք պետություններ իրենց ռազմական դոկտրիններում տեղեկատվական պայքարը՝ որպես նոր մասնաբաժին, մտցրել են կրեռտարածության մեջ: Կիրեռտարածություններում հարձակողական օպերացիաները, որպես կարևոր բաղկացուցիչ, մտնում են կիրեռզենքի մշակման և կիրառման դասի մեջ: 2008թ. վերջին McAfee ֆիրմայի տվյալներով՝ աշխարհի արդեն 140 պետություններում սկսել են կարևորել հնարավոր նշանակետերը (թիրախները)՝ մարտական կիրեռհարձակումների

<sup>76</sup> ԱՄՆ ՌՕՈւ – Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմաօդային ուժեր:

հնարավորությունների մասով: Խնդիրը խորանում է նաև այն հանգամանքով, որ ընդհանրապես անհայտ են այն ծայրահեղական խմբերը, որոնք գաղտնի զբաղվում են կիբեռզենքի մշակմամբ կամ ձեռքբերմամբ: Բացի այդ, պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ կոմերցիոն հասանելի ծրագրային արտադրանքի կիրառումն իր տեսակի մեջ բավական ճկուն է, ինչը թույլ է տալիս դրանք դասակարգել որպես երկակի նշանակության արտադրանք՝ մի կողմից որպես տեղեկատվական համակարգերի պաշտպանվածության ուսումնասիրման (թեստավորման) միջոց, իսկ մյուս կողմից՝ որպես հարձակողական զենք: Բացի այդ, որոշ կոմերցիոն կազմակերպություններ ունեն և/կամ մշակում են կիբեռզենք և առաջարկում ու այն շուկայում ներկայացնում են հենց պաշտպանվածության ուսումնասիրման (թեստավորման) միջոցի նշանի ներքո:

**Կիբեռզենքը** համակարգչային համակարգերի և ցանցերի քանդմանն ուղղված հնարավորությունների նոր մշակումներն ու հիմնավորումներն են: Կիբեռզենք է համակարգչին, ցանցին կամ էլեկտրոնային սարքավորմանը վնաս հասցնելու նպատակով ցանկացած գործիքակազմ կամ կիրառված ձև, որի կազմի մեջ է մտնում ընդհանուր կամ հատուկ (այդ թվում ներդրված միկրոծրագրային) ծրագրային ապահովումը: Որպեսզի որպես կիբեռզենք սահմանենք ցանկացած գործողության արդյունք, անհրաժեշտ է ապահովել նրա հարձակողական հնարավորությունների ձևավորման համար կիրառվող երեք հիմնական բաղկացուցիչ:

### **Կիբեռզենքի մշակման երեք բաղադրիչներն են.**

1. Զենքի հասցման միջոցը (Weapon Delivery Vehicle)

2. Անվտանգության համակարգի հաղթահարման բաղադրիչը (Security Breaching Component)
3. Վնասակար բաղադրիչի ծրագրային ծածկագրի օգտակար ծանրաբեռնվածությունը (Payload - Malicious Activity Code).

**Զենքի հասցման միջոց** կարող են հանդիսանալ վեբ-էջը (web page), էլեկտրոնային նամակը (e-mail), միկրոծրագիրը (firmware), ծրագրային հավելվածը (software application) կամ նույնիսկ սարքավորումների մարտկոցները:

**Կիրեռզենքը պետք է ունենա հասանելիության ունակություն:** Այդ կատեգորիաներում միայն 2007-2009թթ. տվյալներով ընդգրկվել է ավելի քան 70% բացահայտված և գրանցված խոցելիության աստիճան: Ծրագրային ապրանքների գործարկման և խոցելիության հայտնաբերված քանակը փաստացի չի իջնում: Այդպիսի մոտեցումները թույլ են տալիս ցանկացած նոր հայտնաբերված խոցելի տեղ օգտագործել կիրեռզենքի կիրառման օգտին, որը կարող է հանդիսանալ հատկապես անվտանգության համակարգի հաղթահարման բաղադրիչ: **Կիրեռզենքը պետք է ունենա վիրուսային բնութագրեր և օժտված լինի ինքնադրսևորման, ինքնամոդիֆիկացման հնարավորությամբ, ինչպես նաև ունենա ինքնապաշտպանության մասնիկներ, որպեսզի հակազդի ժամանակակից անվտանգության ազդարարման միջոցներին՝ հակավիրուսներին հիմնված միջցանցային էկրանների կանոններով:** Symantec ֆիրմայի պնդմամբ, որը հակավիրուսային ծրագրերի մշակման առաջատարներից է, տարբեր ծրագրային «որդ» և «տրոյական» վնասակար վիրուսների ընդհանուր քանակը շրջանառվող համակարգչային ցանցերում արդեն հասել է երեք միլիոնի: Ժամանակակից և ապա-

գայի կիբեռզենքն առաջին հերթին պետք է սահմանափակի համակարգչային օպերացիաները և ֆունկցիաները, այլ ոչ թե արգելակի և խափանի համակարգիչների կապը և դրանց վերամշակման պրոցեսները: Այդ նպատակային ֆունկցիաների ընտրությունը պետք է ուղղորդել կիբեռզենքի մշակմանը և այդ զինատեսակի ստեղծմանը, որը հնարավորություն կունենա ակտիվացնել համակարգչի օպերացիոն համակարգը և սարքավորման մասը, այլ ոչ թե գործող DDoS (Distributed Denial of Service) պրիմիտիվ հայտնաբերման բաշխման մերժման սկզբունքներով: Կիբեռտարածությունում պաշտպանական օպերացիաները (Defensive Cyber Warfare) օպերատիվ ռազմավարական օպերացիաներ են՝ միտված ռազմական ռեսուրսների կիրառմամբ իրականացնելու տեղեկատվական համակարգերի և կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանություն պոտենցիալ հակառակորդների հարձակումներից, բնականաբար՝ պետության հնարավորությունների սահմաններում: Այդպիսի հնարավորություն են սպառազինությունների կամ տեխնոլոգիաների ծրագրային համակարգերը, որոնք միտված են պետության տեղեկատվական ենթակառուցվածքների հանդեպ հարձակումների հայտնաբերմանը, հետապնդմանը, կանխմանը և հետմղմանը: Այդ ռազմավարությունը պետք է ներառի գործընթացներ և միջոցառումներ՝ ուղղված կիբեռհարձակումների հետևանքները նվազագույնի հասցնելուն:

**Գոյություն ունի կիբեռզենքի մեկ այլ խումբ**, որն ստեղծում է միաժամանակյա հարձակողական, պաշտպանողական և նախականխող հնարավորություններ՝ ուղղորդված էներգիայի զենք՝ DEW (Directed Energy Weapons), որն ունակ է պրոյեկտելու կամ ուղղորդելու էներգիան հակառակորդի հատուկ օբյեկտ-

ների վրա: Զենքի տվյալ տեսակը կարող է կիրառվել էլեկտրոնային համակարգերի աշխատանքների խափանման կամ ոչնչացման նպատակով, որոնք օգտագործվում են համակարգչային և ցանցային կոմունիկացիաներում: Այդ հնարավորությունները կարող են կիրառվել հարձակողական նպատակներով, որպեսզի շարքից դուրս հանեն հակառակորդի հրամանատարության և օպերատիվ ղեկավարման տեղեկատվական ենթակառուցվածքները: Դրանք կարող են նաև օգտագործվել պաշտպանական կամ նախականիտող ռեժիմներում, որպեսզի չեզոքացնեն հակառակորդի կողմից սեփական կիրեռզենքի կիրառման հնարավորությունները: Տվյալ զինատեսակը կարող է հատուկ կիրառվել այն նպատակով, որպեսզի DDoS հարձակումներով խափանվեն IP հասցեները և փակվեն ցանցերը:

**Կիրեռտարածություններում առավելության զավթման օպերացիաներն** (Cyber Warfare Preemption) օգտագործվում են պետության կողմից՝ նպատակ ունենալով կանխել հնարավոր կիրեռհարձակումները՝ արդյունքում ապահովելով կիրեռտարածքում ազգային անվտանգությունը: Կիրեռտարածությունում օպերացիաների վարման դոկտրինի այս բաղադրիչը մշակվում է հետևյալ հարցին պատասխանելու նպատակով՝ համապատասխան կառույցներն ի՞նչ նախականիտող միջոցառումներ պիտի իրականացնեն, որպեսզի նվազեցնեն սպասվելիք կիրեռվտանգները կամ դադարեցնեն սկսվող կիրեռհարձակումները: Տվյալ իրավիճակում կարևոր է ընտրել ճիշտ ռազմավարություն, թե ինչպես պետք է կիրառել որոշումները նախականիտող միջոցառումների սկզբում: Նման իրավիճակներում այդպիսի միջոցները հանդիսանում են հիմնավորված:

**Կիբեռտարածությունում հետախուզական օպերացիաները** (Cyber Warfare Intelligence) կիբեռվտանգի պոտենցիալ կամ հենց վտանգներից տեղեկատվական տվյալների հավաքման և մշակման պրոցես են: Գործընթացը միտված է այդ տվյալների հավաքմանը, վերլուծմանը և վերարտադրմանը՝ ուղղված կիբեռվտանգների օպերատիվ միջավայրի սերտիֆիկացման պրոցեսներին: Հետախուզական հանրության համար կիբեռվտանգների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը բավական կարևոր խնդիր է:

**Հետախուզությունը կիբեռտարածությունում կամ կիբեռ-հետախուզությունը (Cyber Intelligence)** ներառում է տվյալներ և տեղեկատվություն, տեխնոլոգիաներ և տեխնիկական հնարքների ժամանակակից նոր աղբյուրներ, ձևեր և միջոցներ: Համակարգչային ցանցերից հետախուզական տեղեկատվության հայթայթման կիրառվող ժամանակակից ձևերը և միջոցները բնութագրվում են բավական ցածր մակարդակով կամ ընդհանրապես կիբեռվտանգների վերաբերյալ հետախուզական հնարավորությունների իսպառ բացակայությամբ: Սա պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն միջուկային ոչնչացման զենքի, կիբեռզենքի մշակումը և կիբեռհարձակումների ժամանակ դրա կիրառումը պահանջում են ենթակառուցվածքային թիրախներ: Այն կախված չէ սահմանափակ, հատուկ կիրառման և հատուկ բնույթի գիտելիքների թույլտվություններից:

**Storm ցանցային որդի հիմնական բնութագրիչներն են.**

1. Ինքնամոդիֆիկացում. փոխում է ձևաչափը, երբ պետք է շրջանցել հակավիրուսային պաշտպանությունը:
2. Ինքնապաշտպանություն. եթե դուք փորձում եք այն ոչնչացնել, ապա նա ստեղծում է իր կրկնօրինակը:

3. Ինքնարտահայտում. բացահայտում և վարակում է այլ համակարգիչներ:
4. Ինքնակոդավորում. կարող է կոդավորել և ապակոդավորել իրեն՝ նպատակ ունենալով ապահովագրվել բացահայտումից:
5. Ինքնաքողարկում. փոխում է իր կոմունիկացիոն ուղերթը, որպեսզի խուսափի հետապնդումներից:

Օրինակ, այսպես կոչված **բոթ-ցանցերը** նկարագրվում են բարձրտեխնոլոգիական հնարավորությունների հաշվին, ըստ վարկաբեկող (գոմբիացնող) համակարգչային ռեսուրսների հեռակառավարվող միջոցով: Այդպիսի ծրագրերը, այնուամենայնիվ, լավ քողարկվում են և ունենում են մի շարք բնութագրիչներ, օրինակ՝ ինքնապաշտպանման և ինքնաճանաչման հնարավորություններ:

Այսօր բացահայտված են շատ բոթ-ցանցեր, ամենահայտնի բոթ-ցանցը և «ամենախիդեալականը» ստորմն է (**Storm**): Ստորմ բոթ-ցանցը կամ «ստորմ որդի» բոթ-ցանցը ղեկավարվում է հեռակառավարվող «գոմբիացված» համակարգիչներով՝ անմիջականորեն իրար կապված Storm Worm ծրագրի միջոցով: Ցանցային «ստորմ որդը» պատկանում է «տրոյական ձի» տիպի ծրագրերին, որը տարածվում է էլեկտրոնային փոստի հաղորդագրությունների, ավելի հաճախ՝ սպամ-հաղորդակցությունների միջոցով: **Կիրեռտարածությունում հետախուզության իրականացումը** պահանջում է թվային ներխուժում արտասահմանյան պետությունների ղեկավարման, կորպորացիաների և անհատների ցանցերի ու համակարգիչների մեջ: Քանի որ դժվար է ծածկել տեղեկատվությունը հասցնելու և դրա հետ-



դարձի ճանապարհը՝ վերհանված լրտեսական ծրագրերի միջոցով, ներդրված վարկաբեկված համակարգչային համակարգերում, պետական հետախուզական տեղեկատվությունը դիտարկվում է որպես բարձրռիսկային: Այդպիսով, ավելի նախընտրելի է իրականացնել պետության իդենտիֆիկացման քողարկում կիրառության հետախուզական գործողությունների հետևում՝ միջոդակային (միջնորդների) կազմավորումների միջոցով: Կիրառության հետախուզության առջև ծառայած խնդիրների առումով, ամերիկյան տեխնիկական և ռազմական փորձագետները կարծում են, որ պահանջվում է ԱՄՆ հետախուզական ենթակառուցվածքների վերանայում, ինչպես նաև նոր հետախուզական միջոցների և տեխնոլոգիաների մշակում: Բացի այդ, հաշվի առնելով կիրառված մշակման և ծավալման համար ենթակառուցվածքների նվազագույն պահանջները, կանխորոշման պրոցեսը, թե՛ եղել է արդյոք հարձակում տեռորիստական խմբավորումների կամ կոնկրետ պետության կողմից, և ոչ թե մի անհատի անձնական մտադրության արդյունքում, հետախուզական միության համար այն այնպիսի բարդ խնդիր կներկայացնի, որին որպես այդպիսին անցյալում երբեք չեն էլ առնչվել: Կիրառության օպերացիաների վարման ընթացքում վտանգների մատրիցի կարգավորումից հետո, որի հիման վրա իրականացվել է ավելի քան 175 երկրների և կազմակերպությունների կիրառման արդյունքում Technology for Solutionary ֆիրմայի կողմից կազմվել է *տասը ամենից առավել վտանգներ ստեղծողների ցանկ*, մասնավորապես՝ Չինաստանը, RBN ՌԴ կոմերցիոն ցանցը (Russian Business Network), Իրանը, ռուսական ցանցերը, որոնք անմիջականորեն կապված են ֆրանսիական

ցանցերին, տեռորիստական և ծայրահեղական խմբերը, Իսրայելը, ԿԺԴՀ-ն, Ճապոնիան, Թուրքիան, Պակիստանը:

Կիրեռզենքի մեկ այլ բացառիկ բնութագրիչներից է այն, որ այն կարելի է կիրառել երկրագնդի ցանկացած կետում: Համակարգիչները, ֆիզիկապես գտնվելով մեկ այլ երկրում, կարող են «բացահայտվել» (ահաբեկվել) և օգտագործվել որպես կիրեռհարձակումների նպաստավոր հարթակ: Այդ պատճառով վերլուծական տեխնիկական հնարավորությունները պետք է ձևավորվեն այնպես, որպեսզի կարողանան ոչ միայն հետապնդել այդ հարձակումները՝ մինչև դրանց առաջացումը, այլ նաև վերահսկեն դրա պատվիրատու կողմին, որը կանգնած է տվյալ հարձակման հետևում: Այդ կապակցությամբ ավելի շատ հույսեր են դրվում **թվային ԴՆԹ հայեցակարգի** (digital DNA) վրա, որը պետք է օգնի այդպիսի կրիտիկական հնարավորությունների ձևավորմանը: Կիրեռհարձակումների մեծ մասն ընկնում է իրավաբանական ապացույցների բազայի ներքո, որոնք կարող են օգտագործվել կանխամտածված ու հնարավոր հարձակման և ապահովման բացահայտումների ժամանակ, որոնք կանգնած են կոնկրետ կազմակերպությունների կամ այլ կառույցների հետևում: Այդ նպատակով նախկինում պատահած հարձակումների վերաբերյալ ձևավորվող թվային ԴՆԹ-ի համար պետք է հավաքվեն կիրեռհարձակումների ժամանակ կիրառված համապատասխան ապացույցներ տեխնիկայի, կիրեռզենքի բնութագրերի վերաբերյալ:

**Կիրեռտարածություններում օպերացիաների անցկացման ռազմավարությունը** (Cyber Warfare Strategy) ռազմական գիտության ճյուղ է, որը կապ ունի հրամանատրման և ապագա գործողությունների պլանավորման ոլորտների հետ, այսինքն՝ լավ

մտածված և համակարգված գործողությունների պլան՝ մշակված հատուկ նպատակներին հասնելու կամ կոնկրետ խնդիրների լուծման համար: Գոյություն ունեն մի քանի հիմնական տարրեր, որոնք հարկավոր է նախատեսել կիրեռտարածությունում օպերացիաների ռազմավարության մշակման ժամանակ:

Կիրեռտարածությունում օպերացիաների վարումը պետք է լինի հավասարակշռված, քանի որ կիրեռզինատեսակի արագ տարածումը տեսանելի ապագայում կհանդիսանա ազգային անվտանգության հիմնական խնդիրներից մեկը: Կիրեռզենքի կատարելագործման և դրա հասանելիության տարածման հետ կապվելանան մանր ծայրահեղական խմբավորումների, ինչպես նաև առանձին անհատների հնարավորությունները: Որքանով որ կիրեռռազմավարությունը կհարմարվի ռազմական մշակույթին, անխոս, միտում կդառնա փոփոխությունների նկատմամբ նրա բարձր դիմադրողականությունը:

Այսպիսով, ներկայում կիրեռպատերազմը (Cyber Warfare) դիտարկվում է որպես ազգային անվտանգության ռազմավարության համակողմանի բաղադրիչներից մեկը, այլ ոչ թե որպես լրացուցիչ առանձին օպերացիա՝ ավանդական ռազմական օպերացիաների իրականացման ժամանակ: Կիրեռտարածություններում ռազմական օպերացիաների անցկացման կանոնները, ձևերը և միջոցները ներկայում գտնվում են վերածննդի փուլում, սակայն ակնհայտ է, որ առաջիկայում այն աննախադեպ զարգացում կունենա:

*Չինաստանի կիրեռպատերազմի հայեցակարգային հիմունքները.* Չինաստանի ՋՈւ հրամանատարության և ռազմական գիտության պատասխանատուների մեծ հետաքրքրությունը ռազմական գործում տեղեկատվության դերի ուսումնասիրմամբ՝

ԶԺՀ ռազմաքաղաքական և գիտական ուժերի նպատակաուղղված ջանքերի մի մասն է կազմում՝ նպատակ ունենալով ձևավորել երկրում նոր «տեղեկատվական հասարակություն», հենվելով նրա «գիտական տնտեսության» (Մուն Զզի), այսինքն՝ «արտադրության վրա հիմնված տնտեսության» վրա՝ տեղեկատվական գիտելիքների բաշխմամբ և կիրառմամբ: Զինացիները կարծում են, որ «եթե XX դարի սկզբում տնտեսության ինդուստրիալացման համար «վառելիք» հանդիսանում էր նավթը, ապա երրորդ հազարամյակի սահմանին «տնտեսական զարգացման» այդպիսի «վառելիք» է հանդիսանում «տեղեկատվությունը»:

Զինական ռազմական վերլուծաբանները համոզված են, որ հենց տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն է բերել *հեղափոխության ռազմական գործում*: Նրանք, ովքեր կմասնակցեն այդ գործընթացներին, կստանան առավելություն և կհայտնվեն մարդկության զարգացման գայթակղիչ հորձանուտում: Նրանք նշում են, որ «աշխարհի տարբեր երկրների զարգացածության մակարդակներում իրականացվող փոփոխությունները հիմնականում պայմանավորված են արդյունաբերական հեղափոխություններով, սակայն նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները և առկա հնարավորությունները թույլ են տալիս բոլոր երկրներին նորից վերաբաշխել այսպես կոչված «խաղաքարտերը», հետևաբար՝ խնդիրն այն է, թե կհասնի արդյոք Զինաստանը նստել այդ գնացքը, և այդ ստանձնած հնարավորությունից էլ հավանական է՝ ապագա հարյուրամյակում կախված կլինի նրա տեղը նորագույն աշխարհում»:

Ժամանակակից ռազմական գործում հեղափոխությունը առաջին հերթին *հայեցակարգային է*: Տվյալ դեպքում Զինաստանի կողմից որպես հիմնական հայեցակարգային միտք

ապագայի զինված ուժերի և ազգային անվտանգության ձևավորման վերաբերյալ ընդունվել է **Համակցված էլեկտրոնային ցանցային պատերազմների հայեցակարգը** (INEW, Integrated Network-Electronic Warfare): Հայեցակարգը Չինաստանի համար դարձել է այդ նորամուծության օգտագործման սպասված պատմական շանս, որը բերել է «լոքային քայքայի տեսության» (*կուայուէ լուն*) ստեղծմանը, հիմնավորելով ՉԺԱԲ-ի համար հնարավորություն՝ «թռիչք անել» դեպի «նոր սերնդի պատերազմների» դարաշրջան, առաջին հերթին ստեղծելով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կենտրոնացված ժամանակակից զենք և ռազմական տեխնիկայի առաջատար նմուշներ:

Չինաստանն այն եզակի պետությունն է, որը ոչ միայն մանրամասն ուսումնասիրել է XX դարի վերջի - XXI դարի սկզբի բոլոր ռազմական օպերացիաները, այլև դրանց ուսումնասիրման արդյունքում արել է լուրջ հետևություններ: ԱՄՆ ԶՈՒ «Փոթորիկ անապատում» օպերացիայի հաջողությունից հետո ռազմական գիտության և գործնական ասպարեզներում ոչ մի տեղ այն այդքան ուժեղ արձագանք չի ստացել, որքան Չինաստանում: Սկսած սառը պատերազմի ավարտից՝ ՉԺՀ ռազմական տեսաբանները համառորեն սկսել են մտածել ավելի արդյունավետ պայքարի ձևեր Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ԱՄՆ գերակայող դիրքին հակազդելու նպատակով, որը Չինաստանը դիտում է որպես իր համար կարևոր և կենսական հետաքրքրությունների շրջան: ՉԺԱԲ ռազմական վերլուծաբաններն ուշադիր վերլուծել են «Փոթորիկ անապատում» և մի շարք այլ օպերացիաներ և արել մի շարք հետաքրքիր եզրակացություններ առ այն, որ մոտ ապագայում Չի-

նաստանի և ԱՄՆ ԶՈւ ռազմական հակամարտության արդյունքում Չինաստանի համար իրատեսական չէ այդ պատերազմում հաղթանակ ապահովել: Այդ ձևակերպումներից ամենադիպուկը ԱՄՆ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի անվտանգության և քաղաքականության ինստիտուտի հայտնի փորձագետ Թոշի Էշիհարայի (Toshi Yoshihara) «Չինաստանի տեղեկատվական պատերազմը՝ թափանցիկ վտանգ կամ ավելազոդ վտանգ» գրքում զետեղված միտքն է, ըստ որի՝ չինական տեղեկատվական պատերազմը *«ուղղորդված է դեպի հակառակորդի կողմից իր ստորաբաժանումների դեկավարմանն ուղղված որոշումների մշակման և ընդունման պրոցեսի ոչնչացմանը, որի արդյունքում հակառակորդի վրա գրագետ ներազմման շնորհիվ կրնձեռվի հնարավորություն՝ օգտագործել, վերամշակել և փոխանցել ձևափոխված տեղեկատվություն»*: Ժամանակակից չինական մեկնաբանությամբ տեղեկատվական պատերազմը դիտարկվում է որպես ոչ ավանդական զենք՝ ստեղծված հակառակորդի կողմից որոշումների ընդունման պրոցեսի բարդացման համար, նպատակ ունենալով հետաձգել կամ ընդհանրապես կանխել հակամարտությունը: Դրանից հետևում է, որ եթե զինված ուժերի կիրառումն անխուսափելի է, ապա Չինաստանը կիրականացնի տեղեկատվական պատերազմ, որպեսզի մարտական գործողությունների թատերաբեմը ձևավորի այնպիսի տեսքով, որը կբարձրացնի նրա հաղթանակի հավանականությունը:

Չինաստանի տեղեկատվական ոլորտի ռազմական և քաղաքացիական բաղադրիչների ինտեգրումն ապահովում է այդ երկրի ազգային անվտանգությունը, պարբերաբար իրականացվող տեղեկատվական պատերազմը, այն, արևմտյան որոշ ռազ-

մական տեսաբանների տեսակետից, առաջին հերթին ուղղված է ԱՄՆ ԶՈւ-ի դեմ: Մասնավորապես, ինչ վերաբերում է Չինաստանի ԶՈւ հնարավորություններին՝ համացանցում (այլ համակարգչային ցանցերում) օպերացիաների անցկացմանը, ապա Պենտագոնը նշում է, որ Չինաստանի ազգային ազատագրական բանակը մնացյալ այլ ստորաբաժանումների ստեղծմանը զուգահեռ՝ ստեղծել է ստորաբաժանում, որը զբաղվում է համակարգչային վիրուսային ծրագրերի մշակմամբ՝ նախատեսված հակառակորդի ավտոմատացված տեղեկատվական-կոմունիկացիոն համակարգերի և ցանցերի խոցմամբ: Այդ վիրուսների տարատեսակներից է **Մայֆալ** վիրուսը, որը բավական լավ է համապատասխանում տեղեկատվական պատերազմներում կիրառմանը: Վիրուսը, որպես կանոն, լավ քողարկվում է, և նրա ակտիվացումից հետո այնքան էլ չպաշտպանված համակարգչային ցանցում կարող է ամբողջությամբ քանդել համակարգիչների ֆայլային համակարգը: Այդ վիրուսի կիրառմամբ այդպիսի հարձակումների արդյունքում ԱՄՆ ԶՈւ տեղեկատվական համակարգերի պաշտպանության կազմում գործող համակարգչային ցանցերի արագ արձագանքման խմբի CERT (Computer Emergency Response Team) մասնագետներին հաջողվել է բացահայտել, որ այդ ժամանակներում իրականացված այդպիսի մի տեղեկատվության գողության հետքերը տանում են (տվյալները փոխանցվել են) Չինաստանի Նանկին քաղաք:

**Վերջին տարիներին տեղեկատվական պատերազմի ոլորտի Չինաստանի հաքերները և պրակտիկ մասնագետները պարբերաբար անց են կացնում ԱՄՆ կիրեռահամակարգերի և տեղեկատվական կոմունիկացիոն համակարգերի ակտիվ թեստավորում այսպես կոչված ցածր ինտենսիվության հարձա-**

կումների սերիայից: 2006թ. ամերիկա-չինական տնտեսական կապերի և անվտանգության հանձնաժողովի կոնգրեսին ուղղված զեկույցում (U.S.-China Economic and Security Review Commission) նշված է, որ այդպիսի ակտիվությունն ամբողջությամբ համապատասխանում է Չինաստանում ընդունված կիբեռանվտանգության ծրագրի իրականացման դրույթներին, որում խնդիր է դրված իրականացնել «ԱՄՆ պետական ղեկավարման մարմինների և անհատ ձեռնարկությունների համակարգչային ցանցերի զոնդավորումը»: Չինական ռազմական ղեկավարությունն անընդհատ ձևեր է որոնում «տեղեկատվայնացման» պայմաններում, «լռկալ» կամ սահմանափակ պատերազմներում հաղթանակի հասնելու ուղղությամբ: Չինաստանի տեղեկատվական պատերազմի դոկտրինն ակտիվ զարգանում է ԱՄՆ տեղեկատվական պատերազմի դոկտրինի բազային դրույթների համակցմամբ, սակայն չինական մշակույթին հարիր սպեցիֆիկ դրվագներով, օրինակ՝ «ժողովրդական պատերազմի» դոկտրինի մեջ ավանդական տեսական շարադրանքները, մասնավորապես՝ «սպանել օտարի թրի օգնությամբ» և «գրոհել թուլությունը, ոչ թե ուժը»: Տվյալ պահին պետք է հատուկ ընդգծել այն փաստը, որ երկու գլխավոր՝ ԱՄՆ ԶՈւ տեղեկատվական պատերազմի JP 3-13 ՇՊԿ միասնական կանոնագիրք և FM-100-6 ցամաքային զորքերի դաշտային կանոնագիրք հայեցակարգային փաստաթղթերը չինարեն են թարգմանվել և տեղադրվել համացանցի չինական սեզմենտում:

Չինաստանը մտադրված է տեղեկատվական պատերազմ իրականացնել ոչ ավանդական (ասիմետրիկ) հիմքերով և ձևերով, որոնք ուղղված են տեղեկատվության ճնշմանը, քայքայմանը և լղոզմանը: Այդ դոկտրինը հիմնված է տեղեկատվա-կո-



մունիկացիոն համակարգերի խոցելիության հետ կապակցված գործիքակազմի կիրառման վրա, նաև հաշվի առնելով այն փաստը, որ դեռ Մառ Յզե Դունն է ընդունել այն գործողությունների իրականացման կարևորությունը, որոնք ուղղված են այն բանին, որպեսզի «հակառակորդին սարքեն կույր և խուլ՝ օգտագործելով նրա աչքերը և ականջները, նրանց հրամանատարներից դրդել ոչ ճիշտ որոշումների ընդունման, ուղեղներում ձևավորելով խառնաշփոթ»:

Այսպիսով, կարելի է անել մի քանի եզրակացություն, որոնք բխում են Չինաստանի տեղեկատվական պատերազմի վարման տեսության և գործնական փաստաթղթերի վերլուծությունից.

- **Առաջին.** չինացի զինվորական մասնագետները մշակել են տեղեկատվական պատերազմի համեմատաբար հասարակ և ճկուն մեթոդաբանություն, որը Չինաստանին տալիս է հնարավորություն միջազգային հարաբերությունների ռազմավարությունում առաջ անցնել Արևմուտքից: Դա թույլ է տալիս Չինաստանին տեղեկատվական պատերազմների ասպարեզում խաղալ կարևոր ռազմավարական դեր և ապահովել այդ ասպարեզում դանդաղ մրցակցի (հակառակորդի) հայտնության գալը:
- **Երկրորդ.** Չինաստանը տալիս է անսովոր, հատուկ կարևորություն տեղեկատվական պատերազմի նոր, հատուկ ուժերի ձևավորմանը, որոնք կարող են բաղկացած լինել տարբեր՝ կիբեռզենքի պոտենցիալ մշակման և կիրառման խմբերից, հաքերային և ռադիոէլեկտրոնային ճնշման բրիգադներից, տեղեկատվության և տեղեկատվական ցանցերի պաշտպանության ստորաբաժանումներից,

«տեղեկատվական կորպուսներից», ռադիոէլեկտրոնային ոստիկանության և (համախմբված մասնագետների) ստորաբաժանումներից, «ժողովրդական պատերազմ» ուժի կազմով ցանցային պատերազմի խմբավորումներից, ինչպես նաև ունենալ տեղեկատվական պատերազմի վարման այլ՝ սպեցիֆիկ գործառնություններ և ստորաբաժանումներ: Այդ ուժերի խնդիրն է լինելու հակառակորդի տեղեկատվական կոմունիկացիոն ապահովման առավել կարևոր հանգույցները, կետերը և միջոցները շարքից դուրս բերելը:

- **Երրորդ.** չինական տեղեկատվական պատերազմի տեսությունը սինթեզում է արևմտյան տարբեր տեսություններ, բայց հաշվի առնելով սեփական ազգային առանձնահատկությունները: Այն հատուկ ուշադրություն է դարձնում տեղեկատվական կոմունիկացիոն ցանցերում կիրառելի արագիաների վարման ղեկավարմանը և հենց վարմանը, տեղեկատվական առավելության ապահովմանը՝ ուղղված գիտական մտքի կատարելագործմանը, «համակարգերի համակարգ» տեսության զարգացմանը, որը ներկա պահին դարձել է սովորական երևույթ տեղեկատվական պատերազմի արևմտյան տեսության համեմատ: Դիտվում է նաև չինական ուրույն բառաշտեմարանում տեղեկատվական պատերազմի և նրա տարրերի բնութագրման էվոլյուցիան, դրանք տարբերվում են այն բնութագրերից, որոնք կիրառվում և օգտագործվում են ԱՄՆ ՋՈւ, ՆԱՏՕ և ՌԴ ՋՈւ տեղեկատվական պատերազմների բնութագրման ժամանակ, որոնք կիրառվում են այլ ստանդարտներով:
- **Չորրորդ.** տեղեկատվական պատերազմների չինական տեսությունը ժամանակակից տեղեկատվական պայքարի

խնդիրները և դրանց պատասխանները բացառապես փնտրում է իր պատմական փորձում, որի հիմնաքարն են այսպես կոչված 36 ստրատոգեմները՝ «ռազմական խորամանկությունները» (հակառակորդին խաբելու և խոցման ձևերը), որոնք, իրենց հերթին, կազմում են Չինաստանի ռազմարվեստի հիմքը: Բացի այդ, Չինաստանը մանրամասն ուսումնասիրում և հետազոտում է արևմտյան երկրների տեղեկատվական պատերազմների վարման մարտական բնութագրերը, հնարավորությունները, ուժեղ և թույլ կողմերը, բացի այդ, սեփական ուժերի համար մշակում է ձևեր և միջոցներ դրանցից պաշտպանվելու և դրանց հետագա զարգացման ու կատարելագործման ուղղությամբ:

- **Հինգերորդ.** Չինաստանի տեղեկատվական պատերազմի սկզբունքները հանգեցնում են այն մտքին, որ ազգային անվտանգության ապահովման գլխավոր հենքը կառուցվի այնպես, որպեսզի զինված ուժերի երկարատև գործողությունների շնորհիվ ջախջախեն հակառակորդին, որպեսզի օգտագործելով ամբողջ ուժերը, ընդհուպ զինված ուժերը և քաղաքացիական կառույցները, ռազմական և ոչ ռազմական միջոցներն ու մեթոդները, անդառնալի և ոչ անդառնալի զենքը՝ ստիպեն հակառակորդին գործել Չինաստանի մտահղացման համաձայն:
- **Վեցերորդ.** Չինաստանը ԱՄՆ-ի նկատմամբ ռազմավարական առավելություն ունի, քանի որ չինական կառավարությունը երկրում վերահսկում է «համացանցը», իսկ չինացի զինվորականները պատրաստ են անհրաժեշտության դեպքում պաշտպանել պետության գործարար և պետա-

կան «համացանցային ռեսուրսները»: Եվ դա՛ այն պարագայում, երբ ԱՄՆ-Չինաստան հակամարտության պայմաններում չինական կառավարությունը կարող է կանխամտածված անջատել չինական «համացանցի» սեզմենտը (ինչն, անկասկած, կիրականացնի): ԱՄՆ կառավարության կողմից համացանցի «անջատման» իրականացումը դրա օրինականության առումով (ի տարբերություն չինական կողմի) բացառվում է, քանի որ փաստացի դժվար թե հնարավոր լինի լուծել այդպիսի բարդ հակաօրինական խնդիր:

#### 4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական անվտանգության խնդիրներն օրեցօր դառնում են ավելի վտանգավոր և հանդես են գալիս որպես ազգային մակարդակի սպառնալիքներ: Ոլորտի բարդ խնդիրներից մեկն այն է, որ դրանք անընդհատ ձևափոխման մեջ են գտնվում, մարտահրավերներն ավելի արագ են զարգանում, քան դրանց ուղղված կանխարգելիչ գործողությունները:

Քանի որ ավտոմատացված համակարգերն այսօր հանդիսանում են գրեթե բոլոր պետությունների և խոշոր կազմակերպությունների անբաժան մասը, դրանց վրա հարձակումները հետզհետե ավելի են ուժգնանալու: Հարձակումները ենթակառուցվածքների վրա կարող են հասցնել անհամեմատ ավելի մեծ վնաս ավելի փոքր մարդկային և ֆինանսական ռեսուրսների ներգրավմամբ, քան նույնիսկ ահաբեկչական գործողությունները: Նման իրավիճակում պետությունները սպառազինում են կիբեռտիրույթը, ինչի հետևանքներն անկանխատեսելի են:

*Տեղեկատվական անվտանգության միջոցառումները ներառում են գործողություններ՝ ուղղված դեկավարման խնդիրների լուծմանն անհրաժեշտ տեղեկատվության ապաշրջափակմանը և դեկավարման համակարգում տարածվող և ներմուծվող ապատեղեկատվության շրջափակմանը:*

Ամերիկյան Ազգային անվտանգության գործակալության (NSA, National Security Agency) նախկին աշխատակից Էդվարդ

Մնողների բացահայտումները ԱՄՆ գաղտնի ծառայությունների կողմից համացանցում կատարվող գործողությունների վերաբերյալ՝ փոխեցին պատկերացումները տեղեկատվական անվտանգության մասին<sup>77</sup>:

Մնողների բացահայտումներից երևում է, որ ամերիկյան, բրիտանական գաղտնի գործակալություններն ակտիվորեն օգտագործում են սոցիալական ցանցերը, էլեկտրոնային փոստի ծառայություններն ամբողջ աշխարհի մասշտաբով գաղտնալուսումներ կատարելու համար: *NSA* գործընկերն է Բրիտանական կառավարական կապի կենտրոնը (*GCHQ*): Գաղտնալուսումների համար օգտագործվում են բոլոր հնարավոր ճանապարհները՝ միջամտում սերվերների աշխատանքին, տվյալների կորզում մալուխներից, վիրուսային ծրագրերի տեղադրում և այլն:

Մնողների առաջին բացահայտումները ցույց տվեցին, որ ամերիկյան գաղտնի գործակալությունը կարողանում է ներթափանցել սոցիալական ցանցերի և այլ հարթակների սերվերները և այնտեղից օգտատերերի մասին փակ տվյալներ ստանալ: Այդ համակարգը կոչվում է *PRISM* և թույլ է տալիս օգտատերերի մասին ստանալ ամեն տեսակի տեղեկատվություն. ներքին նամակագրություն, կապեր այլ օգտատերերի հետ, *IP* հասցեներ և այլն: Խոսքը համաշխարհային ամենախոշոր սոցիալական ցանցերի, էլեկտրոնային նամակագրության և շփման այլ հարթակների մասին է. *Microsoft* (օրինակ, *Hotmail*), *Google* (նաև *GMail*), *Yahoo!*, *Facebook*, *YouTube*, *Skype*, *AOL*, *Apple*, *Paltalk*<sup>78</sup>: *PRISM* համակարգը թույլ է տալիս ներխուժել ոչ միայն մարդ-

---

<sup>77</sup> NSA Primary Sources, <https://www.eff.org/nsa-spying/nsadocs>

<sup>78</sup> NSA slides explain the PRISM data-collection program, 06.06. 2013,

<http://www.washingtonpost.com/wp-srv/special/politics/prism-collection-documents/>

կանց նամակագրության, այլ նաև ցանցային հեռախոսազանգերի (*VoIP*), տեսազանգերի (*Video conferencing*), իրար փոխանցած ֆայլերի մեջ:

*PRISM* համակարգի ինտերնետային խոշոր կորպորացիաներին *NSA*-ն սկսել է ներքաշել դեռ 2007թ.՝ սկսելով տեղեկատվություն ստանալ *Microsoft*-ից: 2012թ. վերջինը ներգրավվել է *Apple*-ը: Կարելի է ասել, որ խոշորագույն ցանցերից միայն *Twitter*-ի անունը չի շոշափվել:

#### ***4.1. Տեղեկատվական անվտանգության (կիրեռանվտանգության) խնդիրները***

Ներկա զարգացումները կիրեռհարձակումների համար խոցելի են դարձնում ինչպես յուրաքանչյուր անհատի, այնպես էլ ազգային մակարդակով խոցելի ենթակառուցվածքները: Մարդկության տեխնիկական զարգացումը հասել է մի վիճակի, երբ զարգացած երկրների բազմաթիվ խոցելի հանգույցների ավտոմատացման և ցանցերի հետ համակցման պատճառով դրանք արդեն իսկ հաքերային հարձակումների թիրախներ են:

Ներկա իրավիճակում հանրային կարևորության բազմաթիվ գործառույթներ իրականացվում են համացանցի միջոցով: Այսօր գոյություն ունեն առավել վտանգավոր խոցելի հանգույցներ.

- պետական էլեկտրոնային կառավարման համակարգեր (*e-Government*),
- ֆինանսական և բանկային համակարգեր,
- խոշոր արտադրություններ,
- էներգետիկ համակարգեր,
- ջրամատակարարման համակարգեր,

- տրանսպորտային համակարգեր,
- կապի համակարգեր, ներառյալ արբանյակային և *GPS* համակարգերը:

Խնդիրը բարդանում է այն պատճառով, որ խոցելի հանգույցները շատանում են տեխնիկական զարգացմանը զուգահեռ: Գոյություն ունեն տարբեր տիպի խմբավորումներ, որոնք իրականացնում են կիբեռհարձակումներ<sup>79</sup>.

- Այսպես կոչված «սև գլխարկ» (*Black Hat*) հաքերներ, վարձկաններ, որոնք պատրաստ են երրորդ կողմի պատվերով իրականացնել ցանկացած տիպի հարձակում:
- Պետության համար աշխատող հաքերներ, որոնք իրականացնում են հարձակումներ պետական պատվերով:
- Կիբեռլրտեսներ, որոնք աշխատում են մեծ կորպորացիաների և կազմակերպված հանցավոր խմբերի համար:
- Կիբեռահաբեկիչներ, որոնք իրականացնում են գործողություններ նույն դրդապատճառներով, ինչ ավանդական ահաբեկչական խմբերը:
- Հաքտիվիստներ՝ քաղաքական, կրոնական կամ հասարակական ոլորտներում գործող ակտիվիստներ, որոնք իրենց բողոքը դրսևորում են հաքերային հարձակումների միջոցով:

Ենթակառուցվածքների վրա հաքերային հարձակումներն աստիճանաբար ավելի լուրջ խնդիր են դառնում պետությունների համար: Այսպես, ԱՄՆ բանակային փորձագետները հա-

---

<sup>79</sup>7 Types of Hacker Motivations, <https://blogs.mcafee.com/consumer/family-safety/7-types-of-hacker-motivations/>



մարում են, որ կիբեռնհարձակումների վտանգը կարող է դիտվել միջուկային պատերազմի վտանգին համարժեք: «Սառը պատերազմի» ժամանակ՝ *“The cyber threat is serious, with potential consequences similar in some ways to the nuclear threat of the Cold War”*<sup>80</sup>, 2010թ. ընդունվեցին Մեծ Բրիտանիայի «Ազգային անվտանգության ռազմավարություն» (*National Security Strategy*) և «Ռազմավարական պաշտպանության ու անվտանգության զեկույց» (*Strategic Defence and Security Review*) փաստաթղթերի նոր տարբերակները: Ռազմավարությունը բրիտանական կիբեռտարածության վրա հարձակումները դասեց առաջին կարգի վտանգների շարքում՝ միջազգային ահաբեկչության, բնական լայնամասշտաբ աղետների ու պետությունների միջև ռազմական գործողությունների կողքին: Իսկ զեկույցը հայտարարեց «Ազգային կիբեռանվտանգության ծրագրի» (*National Cyber Security Programme*) մեկնարկի մասին, որի իրականացման համար առաջիկա չորս տարիներին հատկացվելու է 630 մլն ֆունտ ստեռլինգ և, բացի այդ, ստեղծվելու է Կիբեռգործողությունների խումբ (*Cyber Operations Group*), որն իր խնդիրների լուծման գործում պետք է համախմբի պետական ու մասնավոր սեկտորների կարողությունները<sup>81</sup>:

Խոշոր հարձակումները ենթակառուցվածքների վրա բավական նոր երևույթ են: Այս պահին կարելի է հարձակումները տեխնիկապես բաժանել երկու մեծ հատվածի. տեխնիկական ծրագրային ներխուժումներ համակարգերի մեջ և հարձակումներ՝ ուղղված համակարգերի միջև կապի խզմանը:

<sup>80</sup>TASK FORCE REPORT: Resilient Military Systems and the Advanced Cyber Threat, 10.10.2012, <http://www.acq.osd.mil/dsb/reports/ResilientMilitarySystems.CyberThreat.pdf>

<sup>81</sup> *Արտաշես Տեր-Հարությունյան*, ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, 23.12.2010, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5271](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5271)

## 4.2. Չանգվածային կապի խափանումներ

Կապի զանգվածային խափանումները նույնպես կարող են ունենալ ծանր հետևանքներ, քանի որ, չնայած այս դեպքում հաքերները չեն կարողանում ներխուժել համակարգեր, սակայն նրանց հաջողվում է կասեցնել դրանց աշխատանքը: Համաշխարհային ցանցային անվտանգության ոլորտում հետզհետե ավելի մտահոգիչ են դառնում *DDoS*<sup>82</sup> տիպի հաքերային հարձակումները: Այս հարձակումների ժամանակ հաքերներից հաջողվում է ցանցերը խցանել ահռելի քանակի աղբային հոսքերով, որոնք բերում են համակարգերի աշխատանքի դադարեցմանը: Հայաստանը նույնպես վերջին ժամանակահատվածում ավելի հաճախ է դառնում նման հարձակումների թիրախ: *DDoS* հարձակումների վտանգներից կարելի է նշել այն, որ ցանցահենները դրանց ժամանակ օգտագործում են հազարավոր վարակված համակարգիչներ, որոնք սփռված են աշխարհով մեկ, և հաճախ անհնարին է պարզել, թե ով ինչ պատճառներով է իրականացնում հարձակումը: Բացի այդ, նման հարձակումներն ավելի են ուժեղանում, իսկ դրանց իրականացումը՝ էժանանում:

Ըստ *Incapsula* կազմակերպության տվյալների, 2014թ. ընթացքում արդեն, նախորդ տարվա համեմատ, *DDoS* հարձակումների 240% աճ է նկատվել<sup>83</sup>: Բացի այդ, կտրուկ աճել է առանձին հարձակման ուժգնությունը: *DDoS* հարձակումներից պաշտպանությամբ զբաղվող *Clowdfare* կազմակերպությունը հայտնում է էլ ավելի կտրուկ աճի մասին: Ըստ այդ կազմակերպության տվյալների՝ արդեն արձանագրվել է հարձակում, որի

---

<sup>82</sup> What is a DDoS Attack?, <http://www.digitalattackmap.com/understanding-ddos/>

<sup>83</sup> Report: 2014 DDoS Trends - Botnet Activity is up by 240%,  
<http://www.incapsula.com/blog/ddos-threat-landscape-report-2014.html>

ուժգնությունը հասել է 400 Gbps<sup>84</sup>: 2015թ. հունվարի սկզբին *BBC* բրիտանական լրատվական կայքի վրա իրականացված հարձակումը հասել էր աննախադեպ հզորության. մինչև 602 Gbps<sup>85</sup>: Արդեն հունվարի վերջին նմանատիպ հարձակման էր ենթարկվել *HSBC* բանկի ինտերնետ բանքինգի համակարգը, ինչի հետևանքով հաճախորդները ֆինանսական խնդիրներ էին ունեցել<sup>86</sup>:

Նմանատիպ ուժգնության հարձակումները կարող են կաթվածահար անել մեծ հանգույցներ, ընդհուպ մինչև փոքր պետությունների ցանցերի աշխատանքը: Նմանատիպ փորձ արդեն եղել է: Այսպես, 2007թ. Էստոնիայի վրա կատարված հարձակման հետևանքով շարքից դուրս էին եկել ոչ միայն երկրի լրատվական և այլ հանգույցները, այլ նաև գրեթե խափանվել էին պետական կառույցների գործառույթները, որոնք իրականացվում էին ցանցի միջոցով<sup>87</sup>: Ընդ որում, հարձակման ուժգնությունն այդ պահին հասնում էր ընդամենը 100 Mbps, ինչը համեմատելի չէ այսօրվա հզոր հարձակումների հետ: Զանգվածային հարձակումներ էին դիտվում 2008թ. օգոստոսին, ռուս-վրացական պատերազմի ժամանակ, որոնց հետևանքով կասեցվում էր վրացական պետական և լրատվական կայքերի աշխատանքը, ինչը տվյալ իրավիճակում լուրջ խնդիրներ էր առաջացնում Վրաստանի համար տեղեկատվական ոլորտում<sup>88</sup>:

<sup>84</sup> Technical Details Behind a 400Gbps NTP Amplification DDoS Attack, <http://blog.cloudflare.com/technical-details-behind-a-400gbps-ntp-amplification-ddos-attack>

<sup>85</sup> 602 Gbps! This May Have Been the Largest DDoS Attack in History, 08.01.2016, <http://thehackernews.com/2016/01/biggest-ddos-attack.html>

<sup>86</sup> HSBC online banking is 'attacked' 29.01.2016, <http://www.bbc.com/news/business-35438159>

<sup>87</sup> Estonian DDoS Attacks – A summary to date, 05.17.2007,

<http://www.arbornetworks.com/asert/2007/05/estonian-ddos-attacks-a-summary-to-date/>

<sup>88</sup> Cyber Attacks Against Georgia, [http://dea.gov.ge/uploads/GITI\\_2011/GITI2011\\_3.pdf](http://dea.gov.ge/uploads/GITI_2011/GITI2011_3.pdf)

Հայաստանը նույնպես դառնում է *DDoS* հարձակումների թիրախ: Առաջին լուրջ հարձակումները, որոնք ունեին հասարակական ազդեցություն, արձանագրվեցին 2012թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ<sup>89</sup>: Պատվիրատուներին հայտնաբերել հնարավոր չէր, այնպես որ՝ հաշվի առնելով քաղաքական իրավիճակը, մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ պատճառը եղել է երկրի ներսում:

Մակայն վերջին զարգացումներն արդեն ունեն հիմնականում արտաքին բնույթ: Երկկողմանի լայնածավալ *DDoS* հարձակումներ կիրառվեցին, օրինակ, հայկական և ադրբեջանական կայքերի դեմ Ռամիլ Սաֆարովի շուրջ ծավալված իրադարձությունների ժամանակ, 2012թ. սեպտեմբերի ընթացքում:

Մտահոգիչ են դառնում 2013թ. նոյեմբերից արձանագրվող պարբերաբար կրկնվող հարձակումները, որոնք իրականացվում են ինչպես կոնկրետ Հայաստանում տեղակայված կայքերի, այնպես էլ Հայաստանի համացանցային մեծ հանգույցների վրա: Ըստ *Google*-ի կողմից իրականացվող *Digital Map Attack* կայքի տվյալների<sup>90</sup>, Հայաստանի ցանցի վրա 2013թ. նոյեմբերից մինչև 2014թ. ապրիլ իրականացվել է 8 խոշոր հարձակում, որոնց ուժգնությունը հասել է 50 *Gbps*, ինչը համեմատելի է Հայաստանի կողմից սպառվող ողջ ինտերնետային թրաֆիքի հետ:

### **4.3. Վտանգներին դիմակայելու հնարավոր քայլերը**

Նման գլոբալ զարգացումները կարող են հանգեցնել լրջագույն խնդիրների, որոնք կարող են առաջ բերել անհատական և պետական տվյալների արտահոսքեր, ֆինանսական ոլորտի

---

<sup>89</sup> DDoS-ը դառնում է ավանդույթ, <http://media.am/DDos-attacks-on-websites>

<sup>90</sup> Digital Map Attack, <http://www.digitalattackmap.com/>

կորուստներ, էներգետիկ և այլ կրիտիկական համակարգերի աշխատանքի խաթարում, տեղեկատվական հոսքերի խափանում: Այսօր, փաստացի, Հայաստանում հստակ ԱԱԾ-ի կողմից կիրեռապաշտպանության տակ են գտնվում միայն պետական կայքերը և ցանցերը (ընդ որում, չեն պաշտպանվում ՏԻՄ մարմինները, ինչպես նաև Արցախի գրեթե բոլոր պետական մարմինները): Բանկային ոլորտն ակնհայտորեն խոցելի է: Անհատական տվյալներ կրող շտեմարանները խոցելի են, դրանց պաշտպանության վերաբերյալ չկան հստակ մոտեցումներ:

Հարկ է նշել նաև, որ միայն պաշտպանական միջոցներով ամբողջ ոլորտի խնդիրները չեն լուծվում: Հաշվի առնելով, որ Հայաստանը գտնվում է սառեցված պատերազմական վիճակում և Ադրբեյջանի հետ ընդհարումը մեծ հավանականություն ունի (առնվազն ավանդական պաշտպանության ոլորտում դա միանշանակ գիտակցվում է), լուրջ խնդիր է դառնում այն, որ Հայաստանը դեռևս չունի կիրեռհարձակումների ունակ կայացած կառույցներ: Ադրբեյջանի հետ հնարավոր պատերազմի ընթացքում Հայաստանին անհրաժեշտ կլինեն ոչ միայն պաշտպանական, այլ նաև հարձակման մեթոդներ: Վերջին տարիներին տեղի ունեցած հակամարտությունները (օրինակ, Ռուսաստան-Վրաստան, Իսրայել-Պաղեստին) ցույց տվեցին, որ կիրեռտարածքում իշխող դիրքեր ունեցող կողմը լրջագույն առավելություն է ստանում ընդհանուր պատերազմական գործողությունների ընթացքում: Միայն հարձակողական ուժերը կարող են ապահովել նման առավելություն կիրեռտարածությունում:

## 5. ԿԻՆՈՆ ԵՎ ՎԻՂԵՈՒՆԱՂԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

**Կինոն**, որպես քարոզչության ձև, կարող է արտակարգ մեծ էմոցիոնալ ներազդեցություն ունենալ: Այն դիտողի ենթագիտակցությունում ակտիվ գեներացնում է աշխարհի խաբկանք տեսապատկերը, անշուշտ՝ իդեալականացված տեսքով: Կինոյի հեղինակային մտահղացման համաձայն՝ այն դիտողի մեջ կարող է «արդարության» և այս կամ այն պերսոնաժի բարոյական ճշմարտացիության պատրանք ստեղծել: Օրինակ, ռուսական հեռուստաէկրանին հայտնված «Ինտերադջիկը» կինոնկարի հայտնվելուց հետո հեռուստալսարանի զանգվածային գիտակցության մեջ տեղի ունեցան հետևյալ փոփոխությունները. «Կինոնկարն իր ներդրումն ունեցավ արտարժութային մարմնավաճառի մասնագիտության արդիականացման աշխարհայացքի վրա: Ինչպես ցույց տվեցին սովետական աշակերտուհիների շրջանում 1989թ. անցկացված սոցիոլոգիական հարցումները, արտարժութային մարմնավաճառի մասնագիտությունը նրանց ամենանախընտրելի մասնագիտությունների թոփ տասնյակում էր, մոսկվաբնակ աշակերտուհիների 35-40%-ը ֆիլմի դիտումից հետո երկարաժամկետ կտրվածքով երագում էր դառնալ արտարժութային մարմնավաճառ: Իսկ «Բրիգադա» և «Հանցագործ

Պետերբուրգ» կինոնկարների ցուցադրումները հանգեցրին գո-  
ղական բարքերի բուռն մասսայականացմանը: Ինչպես պնդում  
էին ռուսական ոստիկանները, «Բրիգադա» ֆիլմի ցուցադրումից  
հետո տեղի ունեցավ անչափահասների կողմից հանցագործու-  
թյունների կատարման հզոր պայթյուն, անչափահասները սկսե-  
ցին կազմավորել բանդաներ և այնս առանձին չէին գործում:

Չնայած ամբողջ աշխարհում **զանգվածային մշակույթի  
ռլորտի** չափազանց պրիմիտիվությանը<sup>91</sup>, ԱՄՆ-ն այսօր իր «ար-  
տադրանքի» գրավչությամբ, մանավանդ ամբողջ աշխարհի  
երիտասարդության շրջանում, որպես իրեն հավասարը չունե-  
ցող, օգտվում է դրանից: **Զ.Բժեզինսկու** կարծիքով, զանգվածա-  
յին մշակույթը (ռազմական, տնտեսական և այլ հզորություննե-  
րի հետ մեկտեղ), Ամերիկայի Միացյալ Նահանգներին **ապահո-  
վում է հստակ քաղաքական ներազդեցություն**, որի հետ աշ-  
խարհի ոչ մի պետություն չի կարող համեմատվել:

**Վիդեոխաղերը** մարդկանց վրա ներազդման համեմատա-  
բար նոր, բայց արդեն լայն կիրառվող ձև են: Դրանց նպատակն է  
նրանց տրամադրությունները, զգացմունքները, կամքն ուղղոր-  
դել իրենց նպատակահարմար ուղղությամբ, նրանց գիտակցու-  
թյան մեջ ներդնելով գաղափարական և սոցիալական կարգա-  
վորումներ, ձևավորելով մտածողության և վարքի որոշակի  
ստերեոտիպեր: **Վիդեոխաղերը ստեղծվել են որպես անձնա-  
կազմի համար վարժասարքեր, որը պահանջում էր արագ գոր-  
ծողություններ սահմանափակ ժամանակահատվածում**, երբ  
դրանց վարժեցումը (սովորեցումը) բնական օբյեկտների վրա  
կամ անհնարին էր, կամ շատ թանկ: Տեղեկատվական տեխնոլո-

<sup>91</sup> Օրինակ՝ հնդկական, թուրքական, բրազիլական, ռուսական հեռուստասե-  
րիալները:

գիտնների զարգացման և համացանցի շնորհիվ դրանք աստիճանաբար անցան սկզբում էլիտար զվարճանքների, ապա զանգվածային մշակույթի տարածություն: Այսօր խաղային ինդուստրիան ամենադինամիկ զարգացող ոլորտներից է: Աշխարհի վիդեոխաղերի շուկան գնահատվում է տարեկան **\$11 մլրդ**: Կտրուկ աճում է նաև դրանցից օգտվողների թիվը: ԱՄՆ Այովա նահանգի համալսարանի տվյալներով, ամերիկյան անչափահաս երիտասարդներից տասից ինը խաղում է վիդեոխաղեր, իսկ ամեն հինգերորդին կարելի է անվանել **«համակարգչային ֆանատ» կամ «գեյմեր»** (անգլերեն «game»՝ խաղ բառից):

Այսօր ծրագրավորողները, ինժեներները և գիտնականները ստեղծել են *տեղեկատվության փոխանցման և պոտենցիալ նոր հետևյալի համակարգի ժամանակակից համակարգչային ծրագրեր, որոնք առավելագույնս կուժեղացնեն մարդու հոգեկան էնոցիոնալ, զգայական ոլորտի վրա ներազդումը՝ դա ապահովելով տվյալ խաղային իրադրության մեջ լիովին սուզվելու միջոցով*: Առաջին անգամ գիտական նպատակների համար վերտուալ իրականության մեջ սուզվելու տեխնոլոգիաները մշակվել են **ՆԱՍԱ-ի (NASA)** կողմից: Վիդեոխաղերը կամացկամաց անցան զվարճանքի ինդուստրիայի ոլորտ: Խաղային կախվածությունից (խաղամոլությունից) կործանվող մարդկանց քանակն օրեցօր աճում է: Վիդեոխաղերի սիրահարների և դրա լսարանի արագ աճը ստեղծում է դրանց օգտագործման նոր հարթակ՝ որպես մարդկանց ուղեղների վրա ներազդման արդյունավետ տեխնոլոգիա: Այդ տեխնոլոգիաներից է ներշնչումը: **Ներշնչումը** (կամ սուզեստիա, լատիներեն suggestio) ներազդման պրոցես է՝ ուղղված մարդու հոգեբանական ոլորտին, կախված



ներագրվողի ունակություններից (դրանց ընկալման քննադատման, ընկալման լրիվ բացակայությամբ, սուբյեկտի տվյալ պահի վիճակի և անցյալի փորձի համապատասխան ծավալուն լոգիստիկ վերլուծությամբ): **Ներշնչման հասնում են** վերբալ (բառեր, ինտոնացիա) և ոչ վերբալ (միմիկա, ժեստեր, այլ մարդու գործողություն, շրջապատող իրավիճակ, գույն, ձայն) միջոցներով: Քանի որ վիդեոխաղերը տիրապետում են միջոցների ահռելի գործիքակազմի, դրանք փաստացի հանդիսանում են ներագրման իդեալական ձև: Վիդեոխաղերի գաղափարախոսությունն ամբողջովին ուղղված է ուժեղ **էմոցիոնալ ներագրեցությունը**, իսկ էմոցիաներն էլ հենց հանդիսանում են դեպի մարդկային գիտակցություն տանող անհրաժեշտ ուղի: Հայտնի է, որ մարդու ուղեղում էմոցիաներից տպավորված նյութը **80%** է, որից անտարբեր է **16%**-ը, իսկ **4%**-ը գտնվում է չկողմնորոշված վիճակում: Զարմանալի չէ, որ հենց մարդու (սոցիալական հասարակության խմբերի կամ թիրախային լսարանի) հոգեբանական ոլորտի էմոցիոնալ զգայականի վրա խտացված ներագրմամբ, էմոցիոնալ վարակի ճանապարհով է պարզվում հոգեբանական պատերազմի ճանաչողական բնույթը: **Վիդեոխաղերի ահռելի պոտենցիալը՝ որպես ներշնչման ձև, կանխորոշել է դրանց տեղը տեղեկատվական և հոգեբանական պայքարում:** Այսօր համակարգչային խաղերը դարձել են պետական գաղափարախոսության, քաղաքացիների ազգային ինքնագիտակցության ձևավորման, ամբողջ աշխարհում պետության և նրա զինված ուժերի բարենպաստ կերպարի ձևավորման կիրառելի ժամանակակից գործիքակազմ: Ապագայում խաղային արդյունաբերությունը, անկասկած, կշարունակի իր նպատակաուղղված զարգա-

ցումը: Դրա պատճառներից է խաղային բիզնեսի բարձր եկամտաբերությունը (ցանցային համակարգչային խաղերը, որոնք ունեն վաճառքի մի քանի հարյուր հազար օգտատեր, ամեն ամիս բերում են մոտ \$10 մլն եկամուտ, որը համադրելի է մեկ միջին նավթահորի եկամտի հետ): Վիդեոխաղերի շուկան նոր աճ է արձանագրել 2015-2016 թվականներին, երբ իրականացվել են վիդեոհավելվածների (եռաչափ 3D, 4k և այլն) փոփոխություններ: Սպասվում է նաև, որ 2020թ. վերջին համաշխարհային շուկայում վիդեոխաղերի տարեկան վաճառքը կարող է կազմել մոտ \$140 մլրդ: Վիրտուալ խաղերի աշխարհը կարող է ամբողջությամբ փոխարինել հասարակությունների իրական աշխարհին, որը համապատասխանում է, օրինակ՝ ճապոնացի երիտասարդների ապրելակերպին, որոնք ընդհանրապես հրաժարվում են դուրս գալ իրենց տներից աշխատանքի գնալու կամ կրթության համար: Նրանց անվանում են խիկիկոմորիններ, նրանց թվաքանակը Ճապոնիայում մոտ 700 հազար է: Խիկիկոմորինները զբաղված են համացանցով և համակարգչային խաղերով, օրերով, ամիսներով և տարիներով տնից դուրս չեն գալիս: Վիդեոխաղերը կինոնկարից, գրքերից և հեռուստատեսությունից տարբերվում են ինտերակտիվությամբ, խաղացողներն ակտիվ մասնակցություն են ունենում խաղին, այլ ոչ թե պասիվ հետևում են սյուժեին: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը համակարգչային խաղերից կախվածությունը դասել է հիվանդությունների շարքին: Ճապոնիայում օնլայն կյանքը բերել է ոչ սովորական արդյունքների՝ 25-29 տարեկան տղամարդկանց մոտ 20%-ը հետաքրքրված չէ սեռական հարաբերություններով: Նրանք կարող են հարուստ գիտելիքներ

ունենալ, բայց ընդհանրապես չկա կյանքի փորձ, նրանք չգիտեն ինչպես արտահայտեն իրենց հույզերը: Ճապոնիայում են ֆիքսված ամենից շատ ինքնախեղման դեպքերը: Ամեն օր 70 մարդ վերջ է տալիս կյանքին, որոնց գերակշիռ մասը տղամարդիկ են: Աշխարհում ինքնասպանության մակարդակով առաջին տեղում է նաև Հարավային Կորեան, որը նույնպես տեխնոլոգիապես առաջատար երկիր է:

## 6. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ՄԵԴԻԱ-ՀՆԱՐՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՁՈՒ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԱԶԴԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ<sup>92</sup>

Ժամանակակից մեդիայում զանգվածների գիտակցության վրա ներազդելու ամենատարածված միջոցն ամենօրյա լրահոսն է: Նրա հիմքում ընկած է ունկնդիրների ուշադրությունը տեղեկատվական տիրույթում պահանջված և անհրաժեշտ թեմաների, իրողությունների և մեկնաբանությունների վրա կենտրոնացնելու կարողությունը: Ունկնդիրներին չեն հետաքրքրում այնպիսի դեպքեր, պատմություններ (լուրեր), որոնք տվյալ ժամանակահատվածում առավել քննարկվող թեմաներից դուրս են: Ուստի, ինչպես մեզ մոտ, այնպես էլ ամենուր, որպես առավել ազդեցիկ հաղորդում, պահպանվում է օրվա լրահոսը<sup>93</sup>:

Զանգվածային լրատվամիջոցները (ԶԼՄ) կարող են «լռեցնել» կամ, ընդհակառակը՝ «թեժացնել» ցանկացած թեմա: Իհարկե, կան նաև տեղեկատվության «աղավաղման» այլ մեթոդներ և ձևեր: Օրինակ, ԶԼՄ-ն կարող են գործողությունների ալգորիթմը մասնատել ու ներկայացնել այնպիսի տեղեկատվություն, որն

---

<sup>92</sup> Ա. Ղալեյյան, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», #6 (76) 2017, էջ 19:

<sup>93</sup> Օրինակ՝ mil.nkr-ի կողմից տրված՝ սահմանում հրադադարի ռեժիմի խախտման մասին ամենօրյա տեղեկատվությունը, 02 հաղորդաշարը: Կամ *Haqqin.az* կայքում մշտապես (կարծես ամեն օր) տեղադրվում են հակահայկական «հրատապ լուրեր» (հոդվածներ)՝ «ստիպելով» մեզ հետևել իրենց լրահոսին:

ընդհանրապես չի համապատասխանում սկզբնական տեղեկատվությանը<sup>94</sup>:

Այս հնարքն անվանում են *տրոհում*<sup>95</sup>: Սկզբնական տեղեկատվության տրոհումից հետո հեռուստատեկրանին նոր իրադարձություն է «հավաքվում», ներկայացվում, հետևապես՝ այդ իրադարձությունն այլ կերպ և նորովի է մեկնաբանվում:

Նորությունների մատուցման այս տարբերակը ծրագրավորում է հեռուստադիտողների ընկալումները: Իրադարձությունների բնութագրման համար ստեղծվում է նոր «այբուբեն», որը կբավարարի ներկայացնողի պահանջները: Իրադարձությունները «տրոհվում» են տարբեր մասերի այնպես, որպեսզի նրանցից հնարավոր լինի կառուցել պահանջվող տեղեկույթը: Արդեն իսկ այդ տեղեկույթի շրջանակներում լրագրողները, հաղորդավարները, փորձագետները կրկնում են նախապատրաստված տեղեկատվությունը: *Ոլորտի մասնագետները* պնդում են, որ կարևոր իրադարձություններին վերաբերող լուրերին լայնորեն ավելացվում է «կեղծ, բարձրտեխնոլոգիական, ինքնամոդելավորված, հորինված իրադարձություններով հագեցած տեղեկատվության որոշ մասնաբաժին»: Այսօր մենք ապրում ենք կառուցված (հորինված) լուրերի աշխարհում, որի անհրաժեշտ սկզբնամասը կարող է պեղված լինել անցյալից, որպեսզի ներկայացվի այսօրվա լրատվական հոսքով<sup>96</sup>:

Ակնհայտ է, որ ցանկացած օբյեկտի մեջ կարող ենք գտնել բազմաթիվ բաղադրիչներ: Դրանք կարող են լինել բնութագրիչ-

<sup>94</sup> Այդ մեթոդներով հաճախ «*Arm comedy*» հումորային առաջին հայրենասիրական հաղորդումը պատրաստում է իր հումորային հոլովակները, մասնավորապես՝ քաղաքական գործիչներից հարցազրույցներ վերցնելիս:

<sup>95</sup> Տրոհում (*фрагментирование*) - դրվագեցում, տեղեկատվության մասնատում:

<sup>96</sup> Օրինակ՝ «Ադրբեջանը կողմ է հակամարտության խաղաղ կարգավորմանը, սակայն Հայաստանը խոչընդոտում է խաղաղ բանակցային գործընթացներին»:

ներ ներկայից, անցյալից և նույնիսկ ապագայից: Գոյություն չունեցող օբյեկտը դառնում է ակտիվ քարոզչության առարկա: Տրամադրվող «տեղեկատվության» այդ մեթոդների տարածման պատճառներից մեկն այսօրվա լսարանի պասիվությունն է: Այդ լսարանն առաջացել է սոցիալական ցանցերին զուգահեռ և սերտաճել նրանց հետ:

Արդի աշխարհում ամեն ինչ դարձել է հնարավոր, մասնավորապես՝ վիրտուալ աշխարհի ծնունդ գոմբիններն ու այլմոլորակայինները հանգիստ գոյատևում են մեր իրական աշխարհում: Ակնհայտորեն շեշտակի ավելացել է կեղծ հաղորդագրությունների քանակը: Սարսափագրու, տձև, հորինված հերոսների ներազդեցության թիրախը երեխաներն են, ովքեր առավել ներշնչվող են և հուզական: Նպատակային ստեղծված համակարգչային խաղերն ու մուլտֆիլմերը նպաստում են երեխաների բազմապիսի վախերի և ֆոբիաների առաջացմանը, որոնք հաճախ ուղեկցվում են տարաբնույթ տեսիլքներով և զառանցանքներով:

Պետք է նշել նաև, որ 1,5-2 տարեկան երեխայի խոսքի զարգացման զգայուն շրջանում մեղիա-կախվածությունն ու համակարգչային չարաշահումը հաճախ նպաստում են երեխաների խոսքի հապաղմանը, համակարգչային խոսքի ընդօրինակմանը, ռոբոտային, ալգորիթմային, շաբլոնային վարքի դրսևորմանը, ուշադրության անկայունությանը, կամակորությունների, հակադրվող վարքագծի դրսևորմանը, հոգեկան զարգացման տարբեր խնդիրների առաջացմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է անառողջ հասարակության ձևավորմանը<sup>97</sup>:

Այսօր մեր հասարակության գիտակցության ձևավորման գործում մեծ դեր ունի հնդկական կինոարտադրությունը, որի

---

<sup>97</sup> Ս.Անտոնյան, «21-րդ ԴԱԸ», # 5 (75), «Նորավանք» ԳԿՀ, 2017թ.:

գլխավոր հեռուստասպառողը հաճախ սոցիալական ցածր կարգավիճակ ունեցող երկրներն են, համապատասխանաբար՝ «նպատակների և խնդիրների գիտակցման ցածր մակարդակով»: Մենք պարբերաբար համոզվում ենք, որ մեդիայի ներազդեցության օգնությամբ փաստացի կարողանում ենք ազդել հանրության գիտակցության, վարքագծի և մտածողության վրա: Այդ կինոարտարության «հերոսները» «ներխուժել» են մեր հեռուստատեսային իրականություն, մասնավորապես՝ խոսքը հայաստանյան մեդիա-դաշտում շրջանառվող հնդկական հեռուստասերիալների կերպարների՝ «ամաջիների», «բայաջիների», «չակոռիանների» մասին է:

Իհարկե, կլինեն մարդիկ (տեսակետներ), որոնք կպնդեն, որ այդ ֆիլմերում բացակայում են մարդասպանությունները, ագրեսիան, այլասերությունները, սարսափ տեսարանները, որոնք առկա են մեր մեդիա-դաշտում: Հնարավոր է՝ նրանք իրավացի են, բայց հավաստենք, որ դա մեր առկա խնդրի լուծման միակ տարբերակը չէ... Մեդիա-ազդեցության հնարավոր մեխանիզմների ներգործությունը տարածվում է ինչպես երեխաների, այնպես էլ ողջ ազգաբնակչության, այդ թվում՝ *զինված ուժերի անձնակազմի շրջանում*:

Մասնավորապես՝ հայաստանյան հանրության և սփյուռքի մեջ ազգասիրություն ձևավորելու նպատակով հայաստանյան մեդիա-դաշտում հարկավոր է ավելի շատ ժամանակ տրամադրել հայրենասիրության, ազգային գաղափարախոսության քարոզմանը, մեր պատմության լավագույն էջերի լուսաբանմանը, *զինված ուժերի անձնակազմի սխրագործությունների քննարկմանը*, փոխարենը՝ բոլոր առաջատար հեռուստաալիքներով (*բացառությամբ Հ1-ի*) պարբերաբար «քարոզվում» է

հնդկական մշակույթը, որի շնորհիվ հանրությունը մանրամասն տեղեկացված է Հնդկաստանում հարսանեկան արարողության ընթացքին՝ իր բոլոր փուլերով:

Միանման, նույնօրինակ զանգվածային մտածելակերպը չի կարող ապահովել հասարակության ինտելեկտուալ աճ, որը փաստացի սկզբունքորեն իջեցված է: Ակնհայտ է, որ այդ հասարակության բաղկացուցիչն ու կարևոր բաղադրիչը *զինված ուժերի սպայակազմն է, շարքային և սերժանտական կազմը, ինչպես նաև բանակը համալրող գաղափարապես պատրաստված մեր երիտասարդները:*

Վերոնշյալ մեդիա-քաղաքականությունը կարող է նպաստել.

- զինված ուժերը համալրող նորակոչիկների և ոչ միայն նրանց արժեհամակարգի փոփոխմանը,
- սոցիալական հմտությունների թերզարգացածությանը,
- պարզունակ սենտիմենտալ պատմություններից (կտրվածություն, անտեղյակություն օբյեկտիվ իրականությունից) մեդիա-ռեֆլեքսիվ կապվածությանը:

*Զինվորական փորձագետների համար կարևորվում է հետևյալ եզրակացությունը. այլ իրողությունների վրա անձնակազմի ուշադրությունը շեղելով<sup>98</sup>՝ բթանում է նաև նրանց ուշադրության կենտրոնացումը արդի վտանգների վրա<sup>99</sup>:*

---

<sup>98</sup> Այլ իրողություններ են քաղաքական ընտրապայքարը, տարբեր հասարակական պարտականությունները, բանկային ֆինանսական պարտավորվածությունները, աննպատակ ու անմակարդակ մեդիա-դաստիարակչությունը (ներագղեցություն) և այլն:

<sup>99</sup> Օրինակ՝ բանակը հասարակական և այլ ոչ զինվորական գործունեության մեջ ներքաշելով՝ զինվորական անձնակազմը հեռանում է բուն մասնագիտական պարտականությունների կատարումից, և, հետևաբար, նրանց ուշադրության կենտրոնացումն արդի վտանգների ուղղությամբ հետզհետե չեզոքանում է:



Մենք ապրում ենք օրըստօրե բարդացող աշխարհում, և այդ իրավիճակների բնութագրման ու դեկավարման համար պարտադիր է անընդհատ իրականացնել ընկալման ձևերի փոփոխություններ: Ներկայում ժամանակակից նեյրոհոգեբանական հետազոտությունների արդյունքները հասանելի են լայն շերտերին ու արդեն իսկ ներմուծվել են խոշոր կորպորացիաներ *և, իհարկե, բանակ:*

Այսօր նկատվում է տպագիր նյութից հեռացում դեպի տեսողականը և միաժամանակ՝ անցում դեպի բանավորը: *20-րդ դարի պատերազմների ժամանակ ակտիվ կիրառված և ներկայում որոշ մարդկանց մեջ կարծրացած «թռուցիկների» ժամանակները վաղուց պատմություն են դարձել:* Համացանցի կողմից ապահովվող ժամանակակից կոմունիկատիվ միջավայրը շատ ուժեղ է տեղեկատվության դեկավարման տեսանկյունից, բայց շատ թույլ՝ դրանց հակազդելու հնարավորությունների առումով: Իհարկե, գոյություն ունի զանգվածային արտադրանքի ընդունված սահմանում. որքան շատ զանգվածային արտադրանք ենք մենք տալիս, այնքան այն պետք է լինի պարզունակ<sup>100</sup>: Ներկայիս միտումները հստակ ցույց են տալիս, որ ընդհանուր բարդ համակարգից հեռանում ենք դեպի պարզը: Տպագիր տեղեկատվությունից անցում կատարվեց դեպի տեսատեղեկատվությունը և բանավոր տեղեկատվությունը: Մեդիա-նախադասությունները կառուցվում են կարճ, դրանք չեն ընդգրկում անհասկանալի բառեր, ուղեկցվում են բազմակի կրկնություններով և համապատասխան կադրերի ցուցադրմամբ: Գովազդը մեր իրականության

<sup>100</sup> Օրինակ՝ մեր հեռուստատեսությամբ ամբողջ օրը տրվող հնդկական (միանման) հեռուստասերիալները և գիտական լուրջ հաղորդումները, ռաբիսը և դասական երաժշտությունը և այլն:

մեջ գոյություն ունի վաղուց, և դա բնական իրողություն է: Բայց ժամանակակից գովազդը պահանջում է ստեղծագործական մոտեցում: Ինչ-որ մեկը պետք է ստեղծի և զարգացնի մարդկանց հետաքրքրությունների և ուշադրության ներգրավման մեխանիզմներ, որից հետո այն ուղղորդի դեպի ապրանքը, որն այլ պարագաներում մարդկանց չէր հետաքրքրի: Հենց այդ նպատակով գովազդային գործունեության մեջ ստեղծվել է մի ուղղություն, որն այնպիսի գովազդներ (պաստառներ) է պատրաստում հասարակական վայրերում, դպրոցներում, բուհերում և այլուր<sup>101</sup>, որոնք անցյալում անթույլատրելի էին:

Այդ ամենից անմասն չեն կարող մնալ նաև զինված ուժերը: Փորձեր են արվում հայրենասիրական թեմաներով գովազդային պաստառների պատրաստման և տեղադրման ուղղությամբ<sup>102</sup>: Պատրաստվում են նաև թեմատիկ տեսահոլովակներ, ունենք որոշակի արդյունքներ: Մասնավորապես՝ դրական օրինակներից է Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկի պատրաստած գովազդը՝ նվիրված ժամկետային զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին վարկի տրամադրմանը և նմանատիպ այլ գովազդային հոլովակներ: Իսկ բացասական օրինակներից կարելի է նշել հայրենական երգիչ-երգչուհիների «մոդայիկ» դարձած հոլովակների նկարահանումը զորքի, ռազմական տեխնիկայի մասնակցությամբ, մարտական գործողությունների տեսարաններով (բարձր դիտում ապահովելու նպատակով), նույնիսկ երբ դրանք չեն համապատասխանում երգի թեմային:

---

<sup>101</sup> Շենքերի վերելակներում, հասարակական տրանսպորտում, մետրոպոլիտենում, օդանավակայանում, տաքսիներում, փողոցների գովազդային վահանակներին:

<sup>102</sup> Բանակի խորհրդանիշներով հուշանվերներ և տարբեր բացիկներ, ՌՌՀ-երի և զորամասերի պատերին դաստիարակչական թեմատիկ մեծ պաստառներ, աֆիշներ և այլն:

Որքան բարդանում է «մարդկանց ուղեղներին հասնելը», այնքան զովագդելու հնարքներն ավելի քողարկված կերպով են դրսևորվում:

Ներկայում սոցիալական ցանցերի շնորհիվ տեղեկատվությունը դարձել է ավելի սոցիալական, այն մեծ արագությամբ և կարճ ժամանակահատվածում տարածվում է հասարակության լայն շերտերում՝ ունենալով առավել օպերատիվ ազդեցություն: Սոցիալական ցանցերում տեղեկատվությունը մարդկանց հասցեավորելու համար անհրաժեշտ են բանավոր խոսքի զարգացած հմտություններ և բազմակողմանի գիտելիքներ աշխարհի մասին: Մասնավորապես՝ դա շատ ավելի լավ կարողանում են «աշխատեցնել» քաղաքական գործիչները<sup>103</sup>: Սոցիալական ցանցերն ապահովում են յուրաքանչյուր անձի ձայնի իրավունքը: Այժմ բանակում նաև սոցիալական ցանցերի օգնությամբ որպես այլընտրանքային և օպերատիվ տեղեկատվական աղբյուր իրականացվում է տեղեկատվության տարածում: Ռազմական տեղեկատվության սակավության, ինչպես նաև օպերատիվության պակասը (հատկապես ֆորսմաժորային իրավիճակներում) զինված ուժերի անձնակազմը (մասնավորապես սպայակազմը) լրացնում է սոցիալական ցանցերի (հիմնականում ֆեյսբուքի) լրատվության միջոցով: Բանակայինները՝ որպես «ոլորտային մասնագետներ», տվյալ «տարածություններում» շրջանառվող ռազմական տեղեկատվության վերաբերյալ տալիս են մասնագիտական վերլուծականներ և կարծիքներ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ սոցիալական մեդիան մեր աշխարհը դարձնում է միասեռ ու բազմաթիվ բնութագրիչ-

<sup>103</sup> Օրինակ՝ «Հայկական վերածնունդ» (Օրինաց երկիր) կուսակցության ղեկավարությունը:

ներով: Պարզվում է, որ կարելի է բավարարվել առանց երկար տեքստերի առկայության: Այստեղ որոշողը հեղինակը չէ, այլ զանգվածային մշակույթ ստեղծող *ընթերցողը* կամ *դիտողը*: Հեղինակը կարող է ցանկանալ ստեղծել ինչ-որ բարդ «գործ», որը, սակայն, չի համապատասխանում սպառողի պահանջարկին: Այս ամենն ի հայտ եկավ գրականության, արվեստի, կինոյի մեջ՝ առաջացնելով զանգվածային գրականություն և զանգվածային մշակույթ: Այժմ այդ «էստաֆետը» փորձում է ընդունել «զանգվածային» քաղաքականությունը:

Տեղեկատվության տարածման և դեմոկրատական բանավեճի մեխանիզմներն արմատականորեն փոխվել են՝ սոցիալական մեդիայի առաջացման հետ համատեղ: Օրինակ՝ քաղաքականության և սոցիալական հարցերի վերաբերյալ կարծիքների փոխանակմամբ Ֆեյսբուքը «դեմոկրատական բանավեճում» հպարտանում է իր ներդրումներով: Կան նաև բացասական կարծիքներ, մասնավորապես՝ մասնագետները նշում են այն, որ սոցիալական հարթակների ոչ ադեկվատ օգտագործումը կհանգեցնի մի շարք վտանգների: Տեղեկատվության մանիպուլյացիան, ապատեղեկատվության տարածումը և չճշգրտված տեղեկատվությունը պատկանում են այդպիսի վտանգների շարքին: Ֆեյսբուքը մեզ տրամադրում է այնպիսի տեղեկատվություն, որը համընկնում է սպասումների հետ: Այսօր մենք աշխարհն ընկալում ենք ֆեյսբուքի և այլ սոցիալական ցանցերում մեր ընկերների գրառումների, նորությունների ժապավենի միջոցով: Չենք կարող հերքել, որ այդ եղանակով տեղեկացված լինելն ավելի հարմարավետ է, և որ մեզ այնքան էլ չի մտահոգում դրա ճշմարտացիությունը, առավել ևս, երբ այդ նորությունները հաստատում են մեր տեսակետները և մեր պատկերացումները:

Վառ օրինակ է «ապրիլյան քառօրյա պատերազմը», որի ընթացքում սոցիալական ցանցերում տեղեկատվություն էր տարածվել քանակի մի շարք բարձրաստիճան սպաների պաշտոնանկությունների վերաբերյալ, կամ մեր և հակառակորդի կողմից զոհերի աղավաղված տվյալների վերաբերյալ:

Համացանցը, ինչպես և հասարակությունները, տարբեր ձևերով թաքցնում են իրենց թերությունները: Իրական մտավոր անկման վտանգի փոխարեն մենք խոսում ենք և քննարկումներ իրականացնում մտավոր վերելքի վերաբերյալ: Հիշենք, որ համացանցի հայտնվելուն համընթաց նվազեց մտապահելու և հիշելու անհրաժեշտությունը, սակայն ի հայտ եկավ երկար տեքստեր կարդալու անկարողությունը: Գեղարվեստական գրականությունը փոխակերպվեց կինոսցենարների, որտեղ պետք չեն թևավոր խոսքեր և գեղարվեստական հնարքներ, կա միայն գործողությունների հետաքրքիր հաջորդականություն: Իհարկե, հիմնական հետևանքը, որին մենք պետք է սևեռենք մեր ուշադրությունը, ընդհանուր զանգվածային գիտակցության ստեղծումն է: Նոր թվայնացված միջոցներով ստեղծվում է համարժեք ամբոխ, որն ապրում է միասնական օրենքներով՝ ենթարկվելով էլքի և մուտքի միասնական կանոններին: Ակնհայտ է, որ մեր առջև ի հայտ է գալիս ամբոխի ֆենոմենը, որը ոչ վաղ անցյալում ստեղծել էին բռնապետները, իսկ այսօր դրանք ստեղծում են թվայնացված միջոցները, հեռուստատեսությունը և սերիալները: Ստացվում է, որ ամբոխ կարելի է հավաքել ինչպես հրապարակներում, այնպես էլ տներում, որտեղ ամեն մեկը նստում է իր համակարգչի կամ հեռուստացույցի առջև, սակայն իրականում նա ամբոխում է: Նույն սկզբունքով են հավաքագրվում «կիրեռքանակները», որոնք իրական ռազմական

գործողությունների թատերաբեմի բացակայության պարագայում անդամագրվում, ինքնակազմակերպվում և վիրտուալ տիրույթում իրականացնում են կիբեռգործողություններ: Դրանք հաճախ իրականացնում են «պատվիրատուի» պատվերները կամ էլ հաճախ գործում են անկախ՝ առաջնորդվելով իրենց համոզմունքներով և սկզբունքներով: Այլընտրանքային տեսակետների բացակայության պայմաններում դա կարող է հանգեցնել աղետալի վիճակների: Մարդկային ուղեղները չեն զարգանում, նոր տեղեկատվության հանդեպ պահանջմունքը նվազում է, այլընտրանքային տեղեկատվությունը՝ մերժվում:

«Այս աշխարհում բնակվող և ոչ մի անձ չի կարող իրենից հետո չունենալ որոշակի քանակությամբ էլեկտրոնային հետք»: Սոցիալական կայքերում և այլ էլեկտրոնային տիրույթներում մեր ակտիվությունը բացում են շատ հետքեր: Ամենատարօրինակն այն է, որ բոլոր մարդկանց անձնական տվյալները կարող են կանխատեսվել մեր էլեկտրոնային հետքերի շնորհիվ: Օրինակ՝ արտերկրների ռազմաուսումնական հաստատություններ ավարտած ցանկացած սպա պարտադիր պետք է ուսումնական հաստատությանը տրամադրի իր էլեկտրոնային հասցեն կամ սոցիալական ցանցում իր կոորդինատները և այլ կոնտակտային տվյալներ՝ նամակագրության և կապ պաշտպանելու համար, որոնք իրենց հերթին հասանելի են ուսանողությանը, այդ թվում նաև այդ հաստատությունների բաց աղբյուրներից օգտվողներին: Էլեկտրոնային հետքեր մնում են նաև համացանցային կայքերում, պարբերականներում տպագրություններից, նամակագրական գրառումներից, վերլուծական նյութերից և տրված հարցազրույցներից, որոնց վերլուծությամբ հավաքագրվում են այդ զինծառայողների անձնական տվյալները:

Այսպիսով, ներկայացված հոդվածի շրջանակներում բարձրաձայնված հարցերը և դրանց պատասխանները մտորելու տեղիք են տալիս «տեղեկատվական հնարամտություններին» առնչվող արդի հիմնախնդիրների վերաբերյալ և թույլ տալիս կատարել որոշակի հետևություններ: Այդ «հնարամտություններին» հետևանքները, այդ թվում նաև բացասական, մեզ երկար սպասել չեն տա:

Անցել են համացանցով, մասմշակույթով, մասմեդիայով դաստիարակված պարզունակ ուղեղների ժամանակները: Ամեն մի նոր տեխնոլոգիական հնարքի ծնունդով ավելանում է տեղեկատվության հաղորդման արագությունը, հետևաբար՝ նվազում են նրա համարժեք վերձանման հնարավորությունները: Մարդը սկսում է ամբողջովին ապրել իրեն պարտադրվող վերձանունների համակարգում: Կարծում ենք՝ վերոնշյալ խնդիրներն իրենց ազդեցությունն են ունենում զինված ուժերի անձնակազմի, հետևաբար նաև նրա մարտունակության վրա: Հնարավոր չէ հոդվածում բարձրացված խնդիրները և դրանց հնարավոր ազդեցությունը դիտարկել հասարակությունից և զինված ուժերից տարանջատված:

Մասնավորապես՝ ակնհայտ է, որ նշված ուղղություններով պետք է անցկացնել առավել *խոր և մասնագիտական* հետազոտություններ՝ թե՛ գիտական ուսումնասիրությունների մակարդակով, թե՛ գործնական՝ բանակի կողմից: Ներկայացված վերլուծություններով փորձ է արվում վեր հանել զինված ուժերի ոլորտի պատասխանատուների կարծիքն ու մտահոգությունները բարձրաձայնվող հիմնահարցերի վերաբերյալ: Ոլորտում, անշուշտ, առաջնահերթ պետք է դառնա գիտության փորձարարական և վերլուծական գերակայության սկզբունքը: Առկա

են տեղեկատվական պատերազմներին վերաբերող տարբեր ուսումնասիրություններ և առաջարկություններ, իսկ մասնագետներն, անշուշտ, շատ քան կարող են հետազոտել և բարձրաձայնել ոլորտի պատասխանատուներին, բայց այդ առաջարկներին հարկավոր է ականջալուր լինել և օգտվել տրվող առաջարկություններից (գիտելիքներից), քանի որ հապաղումներով կողմնորոշումները «ուշացած» են լինում: Կարծում ենք, եթե առաջիկայում հաջողվի մշակել նոր «Համահայկական տեղեկատվական ռազմավարության» *արդյունավետ ձևաչափ*, ապա այն կապահովի նոր միասնական մեդիա-քաղաքականություն՝ ներքին և արտաքին մարտահրավերներին համահունչ:



## Եզրակացություն

Այսպիսով, փոխվում է ն՝ քաղաքական մրցակիցների, ն՝ հավանական հակառակորդների բանակների զինված հակամարտության բնույթը: Խաղաղ ժամանակ նույնպես նրանք գտնվում են մշտական տեղեկատվական հակամարտության մեջ, իսկ ռազմական ինֆորմատիկան լուծում է պատերազմին բնորոշ խնդիրներ, քանի որ խաղաղ ժամանակ անընդհատ իրականացվում է ռադիոէլեկտրոնային հետախուզություն, անց են կացվում քողարկման միջոցառումներ, հաճախ իրականացվում է տեղեկատվական ներգործությունների փոխանակում, այսինքն՝ մղվում է ռադիոէլեկտրոնային պայքար:

Տեղեկատվական հարվածների փոխանակումները դառնում են ավելի վտանգավոր աշխարհի ճակատագրի համար, քանի որ այդ հարվածների արդյունավետությունն արագ աճում է, դրանց աղբյուրների բացահայտումը՝ առավել դժվարանում, իսկ շատ երկրների բարձրագույն քաղաքական և ռազմական ղեկավարությունն այդ հարվածների վտանգը թերագնահատում է, ինչի արդյունքում պետությունները կրում են քաղաքական պարտություն: Ասվածը թույլ է տալիս եզրակացնել, որ գիտատեխնիկական առաջընթացի հետ մեկտեղ՝ տեղեկատվական անվտանգության դերն աճում է նաև ՋԼՄ-ում: Տեղեկատվությունը և տեղեկատվական ենթակառուցվածքը զարգացած երկրների համար արդեն դարձել են եզրային (կրիտիկական) բա-

ղաղբամասեր, որոնց վրա ներգործությունը կարող է առաջացնել լայնամասշտաբ վթարներ, ապակազմակերպել պետական ղեկավարումը, ֆինանսական համակարգը, գիտական կենտրոնները, առաջացնել ռազմական հակամարտություններ և պարտություններ դրանցում: Որքան բարձր է հասարակության տեղեկատվայնացման մակարդակը, այնքան ավելի նշանակալի է նրա տեղեկատվական անվտանգությունը, քանի որ մարդկանց և պետությունների շահերը, նպատակներն ավելի շատ իրականացվում են տեղեկատվական, այլ ոչ թե նյութական-էներգետիկ ներգործության միջոցով: Երկրի և բանակի տեղեկատվայնացումն անցած դարի վերջերից սկսած՝ զարգացած երկրներում համարվում է գիտատեխնիկական և ռազմատեխնիկական քաղաքականության առաջնահերթ խնդիր: Տեղեկատվական անվտանգության ապահովումը պետք է զբաղեցնի կարևորագույն դեր մեր պետության քաղաքականության (այդ թվում և ռազմական) մեջ: Այդ անվտանգության թերագնահատումը կործանարար է:

Զինված ուժերում տեղեկատվական աշխատանքի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ներկայում այն ներկայացնում է ըստ նպատակների և խնդիրների համաձայնեցված ուժերի և միջոցների համակարգ, որոնք նախատեսված են զինվորական ղեկավար մարմինների շահերից բխող տեղեկատվական-վերլուծական և տեղեկատվական-հոգեբանական խնդիրների լայն շրջանակի լուծման համար: Այն ունի մարմինների և պաշտոնատար անձանց ճյուղավորված կառուցվածք, որոնք տիրապետում են տարատեսակ ֆունկցիաների: Նրանցից գլխավորներն են տեղեկատվական ապահովումը, տեղեկատվական ներգործությունը և անձնակազմի տեղեկատվական

սպասարկումը: Դրանց իրականացման համար գորամասերում և գորամիավորումներում առկա է տեղեկատվական գործունեության միջոցների զինանոց: Ուղեցույց սկզբունքների համալիրն ապահովում է տեղեկատվական աշխատանքի համակարգի գործունեությունը, իսկ նրա առաջնահերթ ուղղություններն ընդգրկում են Զինված ուժերում անձնակազմի և քաղաքացիական կազմի դաստիարակության արդիական պրոբլեմները:

Այսպիսով, մի շարք արտասահմանյան երկրների զինծառայողների հոգեբանական դաստիարակությունը տարբերվում է տեղեկատվական հազեցածությամբ և իրականացվում է ժամանակակից տեղեկատվական միջոցների հնարավորությունների լայն կիրառմամբ:

Զինծառայողների տեղեկացման արտասահմանյան փորձը վկայում է, որ գոյություն ունի ռադիոյի և հեռուստատեսության, հեռահաղորդակցային ցանցերի, ինչպես նաև այլ տեխնիկական միջոցների դերի աճի կայուն միտում անձնակազմի շրջանում սոցիալական տեղեկատվության տարածման գործում:

## Գրականություն

1. «Տեղեկատվական անվտանգություն», *նախագծի հեղինակ և գլխավոր խմբագիր՝ Գ.Հարությունյան*, «Նորավանք» ԳԿՀ, 2017թ.:
2. *Ա.Ղալեչյան*, «Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում», «Նորավանք» ԳԿՀ, 2016թ.:
3. *Գ.Հարությունյան*, Հայության կազմակերպման և տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ ԴԱԸ», «Նորավանք» ԳԿՀ, #2, 2008թ.:
4. *Գ.Հարությունյան*, Գունավոր հեղափոխություններ, «21-րդ ԴԱԸ», «Նորավանք» ԳԿՀ, #4(68), 2016թ.:
5. *Գ.Հարությունյան*, Տեղեկատվական և հետինդուստրիալ հասարակություններ, «21-րդ ԴԱԸ», «Նորավանք» ԳԿՀ, #4(68), 2016թ.:
6. *Գ.Հարությունյան*, Կիբեռտարածք և կիբեռմարտահրավերներ, «Գլոբուս», «Նորավանք» ԳԿՀ, #4(83), 2017թ.:
7. *Դ.Գալստյան*, Քառօրյա պատերազմի լուսաբանման առանձնահատկությունները ադրբեջանական ՁԼՄ-ում, «Գլոբուս», «Նորավանք» ԳԿՀ, #4(83), 2017թ.:
8. *Ս.Մարտիրոսյան*, Սոցիալական ցանցերի կիրառումը քարոզչական գործողություններում, «Նորավանք» ԳԿՀ:
9. *Ս.Բաղդադյան*, օպերատիվ արվեստի տեսությունը, օպերատիվ մարտավարական քողարկում, մեթոդական մշակում, ՀՀ ՊՆ ՌՀ ՀՇՖ, 2016թ.:
10. *Шаньгин В.Ф.*, Информационная безопасность компьютерных систем и сетей: учебник, М., Форум, ИНФРА-М, 2012, 416 с.
11. *Барсуков В.С., Романцов А.П.*, Технологии информационной безопасности 21 века // Специальная техника, 1998, N4–5.
12. *Гриняев С.Н.*, Информационная война: история, день сегодняшний и перспектива, СПб., Арлит, 2000.
13. «Воздушная армия кибер-операций КК ВВ США»  
<http://pentagonus.ru/publ/22-1-0-1069>.

14. *Г.Дерен*, Грядущая цифровая война; <http://pentagonus.ru/publ/22-1-0-1249>.
15. *В.Жуков*, Взгляды военного руководства США на ведение информационной войны (<http://pentagonus.ru/publ/22-1-0-175>).
16. *О.А. Остапенко, П.А. Маслихов*, Обеспечение информационно-психологической безопасности, Воронеж, 2013.
17. <http://kafedrasib.ru/index.php/o-kafedre/izdaniyakafedry/uchebnyeposobiya/352-o-a-ostapenko-p-a-maslikhov-obespechenie-informatsionno-psikhologicheskoy-bezopasnosti-ucheb-posobie>.
18. *Г.Почепцов*, Информационные войны, М., 2000.
19. *А.Н. Резник*, Информационное противоборство в условиях вооруженного конфликта: содержание, технологии, тенденции. Диссертация на соискание ученой степени кандидата политических наук, М., 2004.
20. Политическое цунами. Аналитика событий в Северной Африке и на Ближнем Востоке: под ред. С.Кургияна, М., 2011, <http://www.kurginyan.ru/books/polittsunami.pdf>.
21. Взгляды военного руководства США на ведение информационной войны, Полковник В.Жуков, <http://pentagonus.ru/publ/22-1-0-175>.
22. Воздушная армия кибер-операций КК ВВС США, <http://pentagonus.ru/publ/22-1-0-1069>.
23. Роль США в осуществлении "цветных революций" в зарубежных странах, Полковник В.Кузьмин, <http://pentagonus.ru/publ/22-1-0-824>.
24. Грядущая цифровая война. Гленн Дерен, <http://pentagonus.ru/publ/22-1-0-1249>,
25. Информационное противоборство: теоретико-методологические основы и особенности в условиях вооруженного конфликта, <http://www.dissercat.com/content/informatsionnoe-protivoborstvo-v-usloviyakh-vooruzhennogo-konflikta-soderzhanie-tekhno>.
26. Информационное оружие. Прокофьев В.Ф., доктор технических наук, эксперт Генерального штаба Вооруженных сил РФ.
27. Информационные войны в киберпространстве - Китай и Индия, [https:// interaffairs.ru/news/show/614](https://interaffairs.ru/news/show/614)
28. Информационно-психологическое противоборство в современной войне, [http://armyrus.ru/index.php?option=com\\_content&task=view&id=739&Itemid=1148](http://armyrus.ru/index.php?option=com_content&task=view&id=739&Itemid=1148).
29. Аппарат психологической борьбы Вооруженных сил Румынии //«Зарубежное военное обозрение», М., № 9, 2007.

30. *Гриняев С.Н., Арзуманян Р.В., Акопян А.А., Хлюстов М.В.*, Информационная война в Сирии. Анализ, оценки, тенденции, М., АНО ЦСО-иП, 2016.
31. *Манойло*, Государственная информационная политика в особых условиях: Монография, М., 2003, <http://www.eartist.narod.ru/text24/0022.htm>
32. *А.В. Шеховцев , Ю.Е. Кулешов*, Информационное оружие: теория и практика применения в информационном противоборстве, [http://pentagonus.ru/publ/materialy\\_posvjashheny/2000\\_nastojashhij\\_moment/informacionnoe\\_oruzhie\\_teoriya\\_i\\_praktika\\_primenenija\\_v\\_informacionnom\\_protivoborstve/122-1-0-2215](http://pentagonus.ru/publ/materialy_posvjashheny/2000_nastojashhij_moment/informacionnoe_oruzhie_teoriya_i_praktika_primenenija_v_informacionnom_protivoborstve/122-1-0-2215)
33. *Р.Шафрански*, Теория информационного оружия; <http://psyfactor.org/infowar3.htm>
34. *С.А. Зелинский*, Информационно-психологическое воздействие на массовое сознание, СПб., 2008; [http://www.mediagram.ru/netcat\\_files/108/110/h\\_1eaf80e566efbfa041bafd712f9b13c](http://www.mediagram.ru/netcat_files/108/110/h_1eaf80e566efbfa041bafd712f9b13c)
35. *Т.И. Ежеская*, Психологическое воздействие информационной среды на современного человека.
36. «Психопедагогика в правоохранительных органах», 2009, № 2; <http://cyberleninka.ru/article/n/psihologicheskoevozdeystvie-informatsionnoy-sredy-na-sovremennogo-cheloveka>
37. *В.С. Игнатов, Д.В. Пименова*, Информационное пространство: структура и функции. «Известия высших учебных заведений. Поволжский регион», 2007, № 3; <http://cyberleninka.ru/article/n/informatsionnoe-prostranstvo-struktura-i-funktsii>
38. *Ю.Давидов*, Понятие «жесткой» «мягкой» силы в теории международных отношений, Журнал теории международных отношений и мировой политики, «Международные процессы», <http://www.intertrends.ru/four/006.htm>
39. *Барсуков В.С., Романцов А.П.*, Компьютерная стеганография вчера, сегодня, завтра. Технологии информационной безопасности 21 века, 1998.
40. *О.Демидов*, Глобальное управление интернетом и безопасность в сфере использования ИКТ. Москва, 2016г.
41. *Макаренко С.И.*, Информационное противоборство и радиоэлектронная борьба в сетевых войнах начала XXI века. Монография, СПб.: Наукоемкие технологии, 2017.

42. *Pentland A.*, Social physics, New York, 2014.
43. *Daniel T. Kuehl*, Information Operations, Information Warfare, and Computer Network Attack Their Relationship to National Security in the Information Age, International Law Studies, 76 (2002).
44. *Fabien A.P. Petitcolas, Ross J. Anderson and Markus G. Kuhn*, Information Hiding: A Survey // Proceedings of the IEEE (special issue), 1999.
45. *A. Tacitus*, How to survive under siege / Aineias the Tactician, pp. 84{90, 183{193. Clarendon ancient history series, Oxford, England: Clarendon Press, 1990, ISBN 0-19-814744-9, translated with introduction and commentary by David Whitehead.

Արմեն Ղալեյան

ՌԱԶՄԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝  
ՈՐՊԵՍ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ  
ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ (ՄԱՐՏԱԿԱՆ)  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՍԱԿ

*Տեխնիկական խմբագիրներ՝*  
Խոնարհիկ ԲԱՐԱՌԻՂԼԱՆՅԱՆ  
Լուսինե ԲԱՂԱՍՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ  
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1  
Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)  
Էլ-փոստ՝ [office@noravank.am](mailto:office@noravank.am)  
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

---

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 9 տպ.մամուլ:  
Տպաքանակը՝ 300: Տառատեսակը՝ Sylfaen:  
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում: